



ԵՐՈՊԱԿԱՆ ԱՊՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԱՍՏԻ  
EUROPEAN UNION FOR ARMENIA

# Փողոցային լուսավորություն

Շիրակի , Լոռու և Տավուշի 6 խոշորացված համայնքներում  
մատուցվող ծառայությունների մոնիթորինգի զեկույց



COMPASS  
Real Path to Changes



YCCD  
YOUTH COOPERATION CENTER OF ARMENIA



Գյուլմրի 2019

**Ուսումնասիրությունն իրականացվել է «Մասնակցային մոնիթորինգ՝ հանուն խելացի համայնքների ստեղծման Հայաստանում» ծրագրի շրջանակում**

Սույն զեկույցը մշակվել է Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ «Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպության ղեկավարությամբ կոնսորցիումով գործարկվող «Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագրով տրամադրված ենթադրամաշնորհի շրջանակներում իրականացվող «Մասնակցային մոնիթորինգ՝ հանուն խելացի համայնքների ստեղծման Հայաստանում» ծրագրի շրջանակներում՝ ««Կոմպասս» գիտահետազոտական, կրթական և խորհրդատվական կենտրոն» հասարակական կազմակերպության կողմից՝ իր գործընկերներ «ՀԿ կենտրոն» քաղաքացիական հասարակության զարգացման հասարակական կազմակերպության, «Դիլիջանի երիտասարդների համագործակցության կենտրոն» հասարակական կազմակերպության և «Տեղեկատվական համակարգերի զարգացման և վերապատրաստման կենտրոն» հասարակական կազմակերպության հետ համատեղ:

Բովանդակության համար պատասխանատվություն է կրում ««Կոմպասս» գիտահետազոտական, կրթական և խորհրդատվական կենտրոն» հասարակական կազմակերպությունը՝ իր գործընկեր կառույցների հետ, և պարտադիր չէ, որ այն արտահայտի Եվրոպական միության տեսակետները:

««Կոմպասս» գիտահետազոտական,  
կրթական և խորհրդատվական կենտրոն» ՀԿ  
Շիրակի մարզ, Ք. Գյումրի, Անկախության հրապ. 9<sup>ա</sup> շ., 3-րդ հարկ, 301 սենյակ  
Հեռ.՝ (+374) 312 6 01 00, (+374) 95 16 01 00, Էլ. փոստ՝ [compassgyumri@gmail.com](mailto:compassgyumri@gmail.com)  
Կայքէջ՝ <http://compass-center.org>

# Բովանդակություն

Կիրառված եզրույթներ.....	5
Համառոտագիր.....	6
Ներածություն.....	7
<b>Գլուխ 1. Հետազոտության իրականացման մեթոդաբանություն</b> .....	<b>9</b>
1.1 Փողոցային լուսավորության ծառայությունների գնահատման մեթոդական հիմքերը .....	9
1.2 Փողոցային լուսավորության կազմակերպման իրավական պահանջները .....	11
1.3 Հետազոտության նպատակ եվ խնդիրներ.....	12
1.4 Հետազոտության մեթոդ եվ գործիքներ.....	12
1.5 Հետազոտության ընտրանք.....	13
1.6 Բնակավայրերի ներսում փողոցների ընտրությունը .....	15
1.7 Հարցման ենթարկված բնակչության սոցիալ-ժողովրդագրական նկարագիրը.....	17
1.8 Դաշտային աշխատանքների կազմակերպում եվ որակի ստուգում .....	21
1.9 Հետազոտության սահմանափակումներ .....	22
<b>Գլուխ 2. Հետազոտության արդյունքների վերլուծությունը ըստ առանձին խոշորացված համայնքների</b> .....	<b>23</b>
2.1 Փողոցային լուսավորության համակարգը ախուրյան խոշորացված համայնքում .....	23
2.1.1 Փողոցային լուսավորության ապահովման ոլորտում ախուրյան համայնքի հնարավորությունները .	23
2.1.2 Ախուրյան համայնքի բնակչության բավարարվածությունը փողոցային լուսավորության ապահովման ծառայություններից .....	24
2.1.3 Ախուրյան խոշորացված համայնքում փողոցային լուսավորության ապահովման ոլորտում մոնիթորինգի արդյունքներ.....	32
2.2 Փողոցային լուսավորության համակարգը Աշոցք խոշորացված համայնքում .....	36
2.2.1 Փողոցային լուսավորության ապահովման ոլորտում Աշոցք համայնքի հնարավորությունները.....	36
2.2.2 Աշոցք համայնքի բնակչության բավարարվածությունը փողոցային լուսավորության ապահովման ծառայություններից .....	37
2.2.3 Աշոցք խոշորացված համայնքում փողոցային լուսավորության ապահովման ոլորտում մոնիթորինգի արդյունքներ .....	44
2.3 Փողոցային լուսավորության համակարգը Թումանյան խոշորացված համայնքում .....	48
2.3.1 Փողոցային լուսավորության ապահովման ոլորտում Թումանյան համայնքի հնարավորությունները	48
2.3.2 Թումանյան համայնքի բնակչության բավարարվածությունը փողոցային լուսավորության ապահովման ծառայություններից.....	48
2.3.3 Թումանյան խոշորացված համայնքում փողոցային լուսավորության ապահովման ոլորտի մոնիթորինգի արդյունքներ.....	55

2.4 Փողոցային լուսավորության համակարգը Ստեփանավան խոշորացված համայնքում.....	58
2.4.1 Փողոցային լուսավորության ապահովման ոլորտում Ստեփանավան համայնքի տեխնիկական ապահովվածությունը .....	58
2.4.2 Ստեփանավան համայնքի բնակչության բավարարվածությունը փողոցային լուսավորության ապահովման ծառայություններին.....	58
2.4.3 Ստեփանավան խոշորացված համայնքում փողոցային լուսավորության ապահովման ոլորտի մոնիթորինգի արդյունքներ.....	64
2.5 Փողոցային լուսավորության համակարգը Դիլիջան խոշորացված համայնքում.....	67
2.5.1 Փողոցային լուսավորության ապահովման ոլորտում Դիլիջան համայնքի հնարավորությունները ....	67
2.5.2 Դիլիջան համայնքի բնակչության բավարարվածությունը փողոցային լուսավորության ապահովման ծառայություններին.....	68
2.5.3 Դիլիջան խոշորացված համայնքում փողոցային լուսավորության ապահովման ոլորտի մոնիթորինգի արդյունքներ .....	74
2.6 Փողոցային լուսավորության համակարգը Նոյեմբերյան խոշորացված համայնքում .....	77
2.6.1 Փողոցային լուսավորության ապահովման ոլորտում Նոյեմբերյան համայնքի տեխնիկական ապահովվածությունը .....	77
2.6.2 Նոյեմբերյան համայնքի բնակչության բավարարվածությունը փողոցային լուսավորության ապահովման ծառայություններին.....	78
2.6.3 Նոյեմբերյան խոշորացված համայնքում փողոցային լուսավորության ապահովման ոլորտի մոնիթորինգի արդյունքներ.....	86
<b>Գլուխ 3: Փողոցային լուսավորության ապահովման ոլորտում հանրային ծառայությունների մատուցման համեմատական վերլուծություն.....</b>	<b>89</b>
3.1 Խոշորացված համայնքների միջեվ համեմատություն ըստ փողոցային լուսավորության ապահովման ոլորտում համայնքների տեխնիկական հնարավորություններին.....	89
3.2 Խոշորացված համայնքների համեմատություն ըստ օբյեկտիվ եվ սուբյեկտիվ ցուցանիշների համադրության.....	93
<b>Գլուխ 4.Ֆինանսական հետազոտության արդյունքներն ըստ առանձին խոշորացված համայնքների .....</b>	<b>95</b>
4.1 Շիրակի մարզի Ախուրյան եվ Աշոցք խոշորացված համայնքներում 2014-2018 թթ համար իրականացված ֆինանսական վերլուծություն՝ ներհամայնքային փողոցների լուսավորության սպասարկման ոլորտում ....	95
4.2 Տավուշի մարզի Դիլիջան և Նոյեմբերյան խոշորացված համայնքներում 2014-2018 թթ համար իրականացված ֆինանսական վերլուծություն՝ ներհամայնքային փողոցների լուսավորության սպասարկման ոլորտում .....	105
4.3 Լոռու մարզի Ստեփանավան և Թումանյան խոշորացված համայնքներում 2014-2018 թթ համար իրականացված ֆինանսական վերլուծություն՝ ներհամայնքային փողոցների լուսավորության սպասարկման ոլորտում .....	114

<b>Եզրահանգումներ և առաջարկություններ .....</b>	<b>123</b>
Հավելված 1: Քաղաքային ճանապարհափողոցային ցանցի դասակարգումը եվ քաղաքային բնակավայրերի փողոցների եվ ճանապարհների լուսավորության նորմավորվող ցուցանիշները .....	126
Հավելված 2: Գյուղական բնակավայրերի փողոցների եվ ճանապարհների նորմավորվող ցուցանիշները ..	129
Հավելված 3. Տնային տնտեսությունների հետ քանակական դեմ առ դեմ հարցումների հարցաթերթ .....	130
Հավելված 4: Փողոցային լուսավորության ոլորտի մոնիթորինգային ստուգաթերթ .....	133
Հավելված 5: Ախուրյան համայնքի բյուջեի 2014-2018թթ հաշվետվություն ըստ ուսումնուսիրված երեք ոլորտների/համայնքապետարանի կողմից ստացված տվյալներ .....	135
Հավելված 6: Դիլիջան համայնքի բյուջեի 2014-2018թթ հաշվետվություն ըստ ուսումնուսիրված երեք ոլորտների/համայնքապետարանի կողմից ստացված տվյալներ .....	138
Հավելված 7: Նոյեմբերյան համայնքի բյուջեի 2014-2018թթ հաշվետվություն ըստ ուսումնուսիրված երեք ոլորտների/համայնքապետարանի կողմից ստացված տվյալներ .....	144
Հավելված 8: Թումանյան համայնքի բյուջեի 2014-2018թթ հաշվետվություն ըստ ուսումնուսիրված երեք ոլորտների/համայնքապետարանի կողմից ստացված տվյալներ .....	146
Հավելված 9: Ստեփանավան համայնքի բյուջեի 2014-2018թթ հաշվետվություն ըստ ուսումնուսիրված երեք ոլորտների/համայնքապետարանի կողմից ստացված տվյալներ .....	148

## Կիրառված եզրույթներ

Լք	լուքս
ՀամաՁարԿ	Համայնքների զարգացման և մասնակցային կառավարման կոալիցիա
ՀԿ	Հասարակական կազմակերպություն
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՀՈԱԿ	Համայնքային ոչ առևտրային կազմակերպություն
ՏՏ	Տնային տնտեսություն

## Համառոտագիր

«Մասնակցային մոնիտորինգ՝ հանուն ինքնիշխան համայնքների ստեղծման Հայաստանում» ծրագիրն իրականացվել է Եվրոպական միության կողմից ֆինանսավորվող և «Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպության ղեկավարությամբ իրականացվող «Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագրի ենթադրամաշնորհի շրջանակում՝ ««Կոմպաս» գիտահետազոտական, կրթական և խորհրդատվական կենտրոն» հասարակական կազմակերպության կողմից՝ իր գործընկերներ «ՀԿ կենտրոն» քաղաքացիական հասարակության զարգացման հասարակական կազմակերպության, «Դիլիջանի երիտասարդների համագործակցության կենտրոն» հասարակական կազմակերպության և «Տեղեկատվական համակարգերի զարգացման և վերապատրաստման կենտրոն» հասարակական կազմակերպության հետ համատեղ:

Ծրագրի շրջանակում 2018թ. հուլիս-դեկտեմբեր ամիսներին Հայաստանի 3 մարզերի 6 խոշորացված համայնքներում իրականացվել է հետազոտություն, որն ուղղված է եղել համայնքի կողմից մատուցվող մի շարք ծառայությունների որակի գնահատմանը, իրականացվող ծախսերի արդյունավետության գնահատմանը: Ծրագրում ներառված 3 մարզերն են Շիրակը, Լոռին, Տավուշը, որոնցից յուրաքանչյուրում համապատասխանաբար ընտրվել են երկու խոշորացված համայնքներ: Շիրակի մարզում՝ Ախուրյանը և Աշոցքը, Լոռվա մարզում՝ Ստեփանավանը և Թումանյանը, Տավուշի մարզում՝ Դիլիջանը և Նոյեմբերյանը:

Հետազոտության մոնիտորինգային մասն ուղղված է եղել ընտրված համայնքներում համայնքապետարանների կողմից մատուցվող **ներհամայնքային փողոցների լուսավորության սպասարկման** որակի գնահատմանը: Հետազոտությունը բաղկացած է եղել երկու բաղադրիչներից: Առաջին բաղադրիչի շրջանակում իրականացվել է մատուցվող ծառայություններից բնակչության բավարարվածության գնահատում, որի համար կիրառվել է քանակական դեմ առ դեմ հարցումների մեթոդը՝ քվոտային ընտրանքի հիման վրա: Ընդհանուր առմամբ, իրականացվել է 902 հարցում: Երկրորդ բաղադրիչի շրջանակներում խոշորացված համայնքներում իրականացվել է փողոցային լուսավորության համակարգի մոնիտորինգ: Խոշորացված համայնքների մաս կազմող բոլոր բնակավայրերում դիտարկման են ենթարկվել փողոցներում առկա լուսավորության հենասյուները, լուսատուները, իսկ երեկոյան ժամերին չափվել է նաև փողոցում լուսավորվածության աստիճանը:

Դիտարկման ցանկում ներառված են եղել շուրջ 249 փողոցներ: Ընտրված 6 խոշորացված համայնքներում պատահականության սկզբունքով ընտրվել են մեկական փողոցներ, որոնք հիմնանորոգվել կամ վերանորոգվել էին վերջին 1 ամսվա ընթացքում և ենթարկվել են լաբորատոր փորձաքննության՝ անկախ փորձագիտական ընկերությունում:

Հետազոտության ֆինանսական վերլուծության մասը ներառում է նշված 6 խոշորացված համայնքներում ներհամայնքային փողոցների լուսավորության սպասարկման ոլորտում իրականացվող ծախսերի վերլուծությունը, համայնքներում ստեղծվող կապիտալ ֆոնդերի ձևավորումը և գնահատումը:

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ՀՀ մարզերի բնակավայրերում լուսավորության ապահովումը կարգավորվում է ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի նախագահի «Արհեստական եվ բնական լուսավորում» 2017 թվականի ապրիլի 13-ի N 56-Ն հրամանով, որով սահմանվում է քաղաքային և գյուղական բնակավայրերում փողոցային լուսավորության ապահովման պահանջը: «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության 16.12.2016 ընդունված օրենքի Հոդված 12-ի համաձայն համայնքի պարտադիր խնդիրների մեջ է մտնում համայնքային ճանապարհային ենթակառուցվածքների պահպանումը եւ շահագործումը, այդ թվում փողոցային լուսավորության ապահովումը: Սակայն, ներակայումս հանրապետության մեծ թվով բնակավայրերում, հատկապես հեռավոր գյուղական բնակավայրերում, փողոցային լուսավորության ապահովումը դեռևս մնում է չլուծված խնդիրներից մեկը: Ի տարբերություն օրինակ աղբահանության ոլորտի, որտեղ աղբահանության ոլորտում կատարված ծախսերը հնարավոր է հետ բերել ծառայության դիմաց բնակչությունից գանձվող գումարների միջոցով, փողոցային լուսավորության դեպքում համայնքը կատարում է միայն ծախսեր՝ առանց այդ ծախսերի դիմաց փոխհատուցման: Ուստի, ելնելով համայնքային բյուջերի սղությունից՝ համայնքապետարանները չեն կարողանում լիարժեք իրականացնել այս ոլորտում իրենց գործառնությունները: Այստեղ առկա իրավիճակի գնահատումը, դրանց վերաբերյալ հանրային քաղաքականությունների մշակման, բարելավման աջակցությունը և մոնիթորինգի իրականացումը համայնքների զարգացման համար ունեն ռազմավարական նշանակություն, ինչին էլ ուղղված է սույն հետազոտությունը:

### **1. Հետազոտության առջև դրված են հետևյալ խնդիրները՝**

- 1) Պարզել բնակչության բավարարվածությունը փողոցային լուսավորության ապահովման ծառայություններից
- 2) Պարզել, թե արդյոք բնակավայրի փողոցներն ապահովված են փողոցային լուսավորությամբ
- 3) Պարզել փողոցային լուսավորության միացման/անջատման ժամերը
- 4) Պարզել, թե որքանով են համայնքի բնակիչները բավարարված փողոցային լուսավորության ապահովման ծառայություններից:

### **2. Մոնիթորինգի առջև դրվել են հետևյալ խնդիրները՝**

- 1) Բացահայտել ընտրված խոշորացված համայնքների՝ լուսավորության համակարգով ապահովվածության աստիճանը՝ ներառելով խոշորացված համայնքի ներսում ներբնակավայրային փողոցները
- 2) Պարզել խոշորացված համայնքներում ընտրված փողոցների վրա լուսավորող հենասյուների քայլը
- 3) Պարզել ընտրված համայնքներում փողոցային լուսավորվածության չափը և դրա համապատասխանությունը օրենքով սահմանված չափանիշներին
- 4) Ուսումնասիրել խոշորացված համայնքներում ընտրված փողոցների վրա լուսատուների սարքինությունը
- 5) Բացահայտել, թե խոշորացված համայնքներում որքանով է կիրառվում էներգախնայող լուսավորության համակարգեր:



**3. Ֆինանսական վերլուծության առջև դրվել են հետևյալ խնդիրները՝**

- 2) Ուսումնասիրել ընտրված 6 խոշորացված համայնքներում ներհամայնքային փողոցների լուսավորության սպասարկման ոլորտում կատարված ծախսերի կառուցվածքի դինամիկան 2014-2018թթ համար
- 3) Վերլուծել ներհամայնքային փողոցների լուսավորության սպասարկման ոլորտում հատկացված միջոցների տեսակարար կշիռը բյուջետային ծախսերում
- 4) Ուսումնասիրել ընտրված համայնքներում 1 բնակչին բաժին ընկնող ճանապարհաշինության ծախսերի դինամիկան մինչև համայնքների խոշորացումը և դրանից հետո, կապիտալ բնույթի ծախսերը՝ մինչ խոշորանալը և խոշորանալուց հետո
- 5) Պարզել ընտրված 6 խոշորացված համայնքներում 1 բնակչին բաժին ընկնող հենասյունների քանակը
- 6) Պարզել ընտրված 6 խոշորացված համայնքներում միջբնակավայրային լուսավորության առկայությունը 2014-2018թթ ընկած ժամանակահատվածում
- 7) Ուսումնասիրել ընտրված 6 խոշորացված համայնքների միավորումից հետո լուսավորության ոլորտում մատուցվող ծառայությունների քանակի փոփոխությունը:

Սույն հետազոտության շրջանակում վերապատրաստվել են 34 քաղաքացի-մոնիթորներ: Իրականացվել է 902 դեմ առ դեմ հարցում, դիտարկման են ենթարկվել 249 փողոցներ: Ուսումնասիրվել են 6 խոշորացված համայնքների կողմից ներհամայնքային փողոցների լուսավորության սպասարկման ոլորտում վերջին 4 տարիներին կատարված ծախսերի կառուցվածքն ու դինամիկան:

Հետազոտությունը բաղկացած է համառոտագրից, ներածությունից, 4 գլուխներից, եզրակացությունից, առաջարկներից և հավելվածներից:

# Գլուխ 1. Հետազոտության իրականացման մեթոդաբանություն

## 1.1 Փողոցային լուսավորության ծառայությունների գնահատման մեթոդական հիմքերը

Փողոցային լուսավորության ապահովման ոլորտում համայնքի բնակիչների բավարարվածության գնահատման և մոնիթորինգի իրականացման համար առանձնացվել են ոլորտի բաղադրիչներ, որոնց շուրջ էլ իրականացվել է գնահատումը (Աղյուսակ 1.1.1): Գնահատումն իրականացվել է ինչպես ամբողջ խոշորացված համայնքի համար, այնպես էլ դուրս են բերվել առանձին ցուցանիշներ համայնքի մաս կազմող բնակավայրերի համար:

Գնահատման բաղադրիչ	Գնահատման բաղադրիչի ցուցանիշ
<b>Փողոցային լուսավորության ապահովման կազմակերպում</b>	Լուսավորության հենասյունների առկայություն Փողոցային լուսավորության առկայություն Լուսատուների անխափան աշխատանք Լուսավորվածության բավարար աստիճան Էներգախնայող լամպերի կիրառությունը լուսավորության ապահովման համար Փողոցային լուսավորության ապահովման տևողություն

**Աղյուսակ 1.1.1: Համայնքային ծառայությունների գնահատման բաղադրիչները**

Համայնքային ծառայություններից բավարարվածության մակարդակների ներկայացման համար կիրառվել է հետևյալ որակական (կարգային) սանդղակը՝

- «Շատ բարձր», եթե տվյալ բաղադրիչի որակից «Լիովին բավարարված» կամ «Ավելի շուտ բավարարված» հարցվածների քանակը մեծ է կամ հավասար 80%-ի,
- «Բարձր», եթե ցուցանիշի արժեքը գտնվել է [60%; 80%) միջակայքում,
- «Միջին», եթե ցուցանիշի արժեքը գտնվել է [40%; 60%) միջակայքում,
- «Ցածր», եթե ցուցանիշի արժեքը գտնվել է [20%; 40%) միջակայքում,
- «Շատ ցածր», եթե ցուցանիշի արժեքը գտնվել է [0%; 20%) միջակայքում:

Փողոցային լուսավորության ապահովման ոլորտի մոնիթորինգի համար սահմանվել են հետևյալ ցուցանիշները՝

**Ցուցանիշ A:** Փողոցային լուսավորությամբ ապահովված բնակավայրերի քանակ/համայնքի կազմում ներառված բնակավայրերի քանակ

**Ցուցանիշ B:** Փողոցային լուսավորությամբ ապահովված բնակավայրերի բնակիչների մասնաբաժինը համայնքի ընդհանուր բնակչության թվի նկատմամբ

**Ցուցանիշ C:** Համայնքի՝ փողոցային լուսավորությամբ ապահովվածության աստիճան

C=լուսավորությամբ ապահովված դիտարկված փողոցների երկարություն/ընդամենը դիտարկված

փողոցների երկարություն

**Ցուցանիշ D:** Փողոցի երկայնքով լուսավորության հենասյուների քայլ

D=լուսավորության հենասյուներով ապահովված փողոցի երկարություն/տվյալ փողոցում առկա հենասյուների քանակ

**Ցուցանիշ E:** Սարքին վիճակում գտնվող լուսատուներով կահավորված հենասյուների մասնաբաժին

E=սարքին վիճակում գտնվող լուսատուներով կահավորված հենասյուներ/ընդհանուր հենասյուների թիվ

**Ցուցանիշ F:** Էներգախնայող (LED) լուսատուների մասնաբաժին ընդհանուր լուսատուների թվի մեջ

F=էներգախնայող լուսատուներ/ընդհանուր լուսատուների թիվ

**Ցուցանիշ G:** Ճանապարհային պատվածքի միջին լուսավորվածության ցուցանիշ

G=համայնքում արված բոլոր չափումների միջին թվաքանակ

## 1.2 Փողոցային լուսավորության կազմակերպման իրավական պահանջները

Բնակավայրերում լուսավորության ապահովումը կարգավորվում է ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի նախագահի «Արհեստական ելվ բնական լուսավորում» 2017 թվականի ապրիլի 13-ի N 56-Ն հրամանով, որով սահմանվում է քաղաքային և գյուղական բնակավայրերում փողոցային լուսավորության ապահովման պահանջը, ճանապարհային պատվածքի միջին պայծառությունը, ճանապարհային պատվածքի միջին լուսավորվածությունը, լուսավորվածության հավասարաչափությունը և այլն: Այս հրամանով սահմանվում են քաղաքային փողոցների տիպերը և յուրաքանչյուր փողոցի համար լուսավորվածության նորմատիվային ցուցանիշները, որոնք ներկայացված են Հավելված 1-ում: Հիմնականում, քաղաքային բնակավայրերում կախված փողոցի տիպից, երթևեկող տրանսպորտային միջոցների տիպերից և փողոցի նշանակությունից, ճանապարհային պատվածքի միջին լուսավորվածությունը տատանվում է 10-20լք սահմաններում: Քաղաքային բնակավայրում երկկողմանի ուղղություններում 3-6 երթևեկելի գոտի ունեցող 60կմ/ժամ հաշվարկային արագությամբ (Բ1 և Բ2 տիպի ճանապարհներ) քաղաքի հիմնական փողոցների համար ճանապարհային պատվածքի միջին լուսավորվածությունը սահմանված է 20լք: Գ1 և Գ2 տիպի փողոցների համար, որոնք երկկողմանի ուղղություններում ունեն 2-4 երթևեկելի գոտիներ և ապահովում են տրանսպորտային և հետիոտնային կապերը բնակելի շրջանների սահմաններում և ելքը դեպի մայրուղիներ, ճանապարհային պատվածքի միջին լուսավորվածությունը սահմանված է 10-15լք (Հավելված 1՝ մաս 2):

Քաղաքային բնակավայրերում գիշերային ժամերին կանթեղների մասնակի անջատում չի թույլատրվում՝ հենասյունների վրա դրանց մեկական տեղադրվելու դեպքում, սակայն թույլատրվում է դրանց պայծառության նվազեցում, եթե այն գերազանցում է 15լք-ը: Գյուղական բնակավայրերում փողոցների և ճանապարհների նորմավորվող ցուցանիշների համաձայն գլխավոր փողոցների, հասարակական և առևտրային կենտրոնների հրապարակների համար ճանապարհային պատվածքի միջին լուսավորվածությունը սահմանված է 10լք, բնակելի կառուցապատման փողոցները հիմնական փողոցները՝ 6լք, երկրորդական փողոցները՝ 4լք (Հավելված 2):

Վերոնշյալ նույն հրամանով սահմանվում է նաև վերգետնյա հետիոտնային անցումների լուսավորումը (երթևեկելի մասի հետ նույն մակարդակում), որը հետիոտնների համար պետք է ապահովի երթևեկելի մասի անվտանգ հատում և ճանապարհային պատվածքի խոչընդոտները և թերությունները տեսնելու հնարավորություն: Անցման գոտու նշման համար խորհուրդ է տրվում օգտագործել անցումի գոտում այնպիսի կանթեղներ, որոնց լույսի աղբյուրի գունավորությունը ցայտուն է՝ համեմատած երթևեկելի մասում լուսավորման համար կիրառվող կանթեղների հետ: Ա և Բ կարգի ճանապարհների ու փողոցների վերգետնյա հետիոտնային անցումների վրա հարկավոր է նախատեսել միջին լուսավորվածության  $E_{միջ}$  մակարդակի բարձրացում առնվազն 1,5 անգամ՝ համեմատած փոխհատվող երթևեկելի մասի լուսավորվածության նորմի հետ: Լուսավորվածության մակարդակի բարձրացումը կատարում են հենասյունների քայլի (հեռավորության) նվազեցման և լրացուցիչ կամ ավելի հզոր կանթեղների տեղադրմամբ:

### 1.3 Հետազոտության նպատակ եվ խնդիրներ

Հետազոտության նպատակն է ուսումնասիրել ընտրված 6 խոշորացված համայնքներում փողոցային լուսավորության ապահովման ծառայությունների մատուցման ոլորտը և գնահատել համայնքների բնակիչների բավարարվածությունն այս ոլորտում համայնքապետարանների կողմից մատուցվող ծառայություններից:

Հետազոտության առջև դրված են հետևյալ խնդիրները՝

- Բնակչության բավարարվածությունը փողոցային լուսավորության ապահովման ծառայություններից՝
- Պարզել, թե արդյոք բնակավայրի փողոցներն ապահովված են փողոցային լուսավորությամբ,
- Պարզել փողոցային լուսավորության միացման/անջատման ժամերը,
- Պարզել, թե որքանով են համայնքի բնակիչները բավարարված փողոցային լուսավորության ապահովման ծառայություններից:

Մոնիթորինգի առջև դրվել են հետևյալ խնդիրները՝

- Բացահայտել ընտրված խոշորացված համայնքների՝ լուսավորության համակարգով ապահովվածության աստիճանը՝ ներառելով խոշորացված համայնքի ներսում ներբնակավայրային փողոցները:
- Պարզել խոշորացված համայնքներում ընտրված փողոցների վրա լուսավորող հենասյուների քայլը:
- Պարզել ընտրված համայնքներում փողոցային լուսավորվածության չափը և դրա համապատասխանությունը օրենքով սահմանված չափանիշներին:
- Ուսումնասիրել խոշորացված համայնքներում ընտրված փողոցների վրա լուսատուների սարքինությունը:
- Բացահայտել, թե խոշորացված համայնքներում որքանով է կիրառվում էներգախնայող լուսավորության համակարգեր:

### 1.4 Հետազոտության մեթոդ եվ գործիքներ

Հետազոտության իրականացման համար կիրառվել են երկու մեթոդներ՝ բնակչության շրջանում քանակական դեմ առ դեմ հարցման մեթոդը և փողոցային լուսավորության ոլորտում տարբեր բաղադրիչների դիտարկումը և չափումը:

Փողոցային լուսավորության ապահովման ոլորտից բնակչության բավարարվածության գնահատման համար ընտրվել է բնակչության շրջանում **քանակական դեմ առ դեմ հարցման մեթոդը**: Մեթոդը նպատակահարմար է հաշվի առնելով այն հանգամանքը, որ հետազոտությունն ուղղված է խոշորացված համայնքների բնակչության լայն շերտերի կարծիքի ուսումնասիրությանը: Քանակական դեմ առ դեմ հարցումների իրականացման համար մշակվել և կիրառվել է կիսաձևայնացված հարցաթերթ (Հավելված 3): Հարցումներն անցկացվել են ծրագրի շրջանակներում վերապատրաստված շուրջ 34 քաղաքացի-մոնիթորների կողմից:

Հետազոտության համար մշակված նախնական հարցաթերթը ենթարկվել է պիլոտավորման: Ընդհանուր առմամբ իրականացվել է հետազոտության ընտրանքի 2%-ի չափով պիլոտավորում, որը կազմել է 18 հարցաթերթ: Ըստ պիլոտավորման արդյունքների մշակված հարցաթերթը փոփոխվել և վերջնականացվել է:

Ընտրված խոշորացված համայնքներում լուսավորության համակարգի մոնիթորինգն իրականացվել է դիտարկման և չափման մեթոդներով: Դիտարկման են ենթարկվել փողոցում առկա լուսավորության համակարգերի հենասյուները, լուսատուները, լուսատուների տիպը, իսկ չափման՝ փողոցի լուսավորվածության աստիճանը: Մոնիթորինգն իրականացվել է վերապատրաստված մոնիթորների կողմից: Մոնիթորինգի իրականացման համար մշակվել է մոնիթորինգային ստուգաթերթ, որում ներկայացված են դիտարկման և չափման ենթակա որակական և քանակական ցուցանիշներին վերաբերող հարցեր (Հավելված 4):

## 1.5 Հետազոտության ընտրանք

Հետազոտությունն ընդգրկում է Շիրակի մարզի Ախուրյան և Աշոցք, Լոռվա մարզի Ստեփանավան և Թումանյան, Տավուշի մարզի Դիլիջան և Նոյեմբերյան խոշորացված համայնքները: Այն ընդգրկում է խոշորացված համայնքի մաս կազմող բոլոր բնակավայրերը: Գլխավոր համախմբությունը ներառում է հետազոտության շրջանակներում ընդգրկված խոշորացված համայնքներում մշտական բնակվող (նվազագույնը մեկ տարի) 18 և ավելի տարիքի բնակչությունը: Կիրառվել է քվոտային ընտրանքի տիպը: Այն **համամասնական** է բնակչության թվին **ըստ սեռի, տարիքի, մարզերի, խոշորացված համայնքի**:

Մահմանելով գլխավոր համախմբությունը որպես ընտրված համայնքներում մշտական բնակչություն հաստատած 18 և ավելի տարիքի բնակչությանը, գլխավոր համախմբության ծավալը կկազմի 137.698 բնակիչ<sup>1</sup>: Երբ  $N=137.698$ ,  $\gamma=95\%$  և  $\Delta=\pm 3.255$ , իսկ 50%՝ պատասխանների բաշխման համար, ապա ընտրանքի ծավալը կկազմի՝  $n=900$ : Ընտրանքի հաշվարկը կատարվել է այն ենթադրությամբ, որ խոշորացված համայնքներում բնակչության սեռատարիքային բաշխվածությունը նույնն է բոլոր համայնքներում: Որպեսզի հնարավոր լինեք ապահովել բոլոր խոշորացված համայնքներում հարցումների հնարավորինս համաչափ բաշխվածություն, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Դիլիջան, Նոյեմբերյան և Ստեփանավան քաղաքներում բնակչության թիվը առավել մեծ է և հարցումների առյուծի բաժինը անհրաժեշտ կլինեք իրականացնել հենց այս համայնքներում, ընտրանքի թվերը ըստ առանձին խոշորացված համայնքների հաշվվել է խոշորացված համայնքների բնակչության թվերի բնական հիմքով լոգարիթմի ցուցանիշին համամասնական: Խոշորացված համայնքների ներսում հարցումների քանակը չի բաշխվել առանձին բնակավայրերում բնակչության թվին համամասնորեն, քանի որ այդ դեպքում առավել փոքր բնակչություն ունեցող բնակավայրերին բաժին կհասներ 3-4 հարցում, ինչը հնարավորություն չէր տա օբյեկտիվորեն վերհանել տվյալ բնակավայրերում առկա պատկերը: Հետազոտության շրջանակներում խոշորացված համայնքը դիտարկվել է որպես մեկ միասնական համայնք, որի ներսում հարցումների քանակը բաշխվել է այնպես, որ առավելագույնս ներգրավված լինեն բոլոր բնակավայրերը, իսկ առանձին բնակավայրերի

<sup>1</sup> Բնակչության թիվը դուրս է բերվել ընտրված մարզերի մարզպետարանների պաշտոնական կայք էջերում ներկայացված տվյալների հիման վրա

ներսում՝ բոլոր թաղամասերը: Համապատասխանաբար ընտրանքի բաշխումն ըստ առանձին խոշորացված համայնքների ներկայացված է Աղյուսակ 1.5.1-ում:

Բնակավայր	Համայնքում բնակչության թիվը (1)	Բնակչության թվի բնական հիմքով լրգարիթմը (2)=ln(1)	Բնակչության թվի բնական հիմքով լրգարիթմի %-ային բաշխվածությունը	Ընտրանքի նախնական բաշխումն ըստ համայնքների	Փաստացի ընտրանքի ծավալը
Ախուրյան	14321	9.57	17.32%	156	162
Աշոցք	5778	8.66	15.68%	141	137
Թումանյան	3676	8.21	14.86%	134	156
Ստեփանավան	14685	9.59	17.37%	156	134
Դիլիջան	18789	9.84	17.82%	160	160
Նոյեմբերյան	11600	9.36	16.94%	153	153
Ընդամենը	68849	-	100%	900	902

**Աղյուսակ 1.5.1: Ընտրանքի բաշխումն ըստ խոշորացված համայնքների**

Կիրառվել է քվոտային ընտրանքի մեթոդը ըստ երկու չափորոշիչների՝ **տարիք և սեռ**: Ըստ տարիքի և սեռի քվոտաների տարաբաժանումն իրականացվել է բնակավայրի մակարդակում: Ըստ տարիքի բաժանումն իրականացվել է հետևյալ տարիքային խմբերի միջոցով, որի հիմքում ընկած է մարդու կյանքի փուլերը՝

- **18-22** տարեկան (երիտասարդության կամ ուսանողական տարիք)
- **23-45** տարեկան (ընտանիքի կազմման և կայացման փուլ)
- **46-62** տարեկան (արդյունքները վայելելու և/կամ կայունության փուլ)
- **63+** տարեկան (հանգստի/թոշակի փուլ)

Ըստ սեռային և տարիքային խմբերի ընտրանքի բաշխումն ունի Աղյուսակ 1.5.2-ում բերված տեսքը, որի սահմանման համար հիմք է ծառայել բնակչության առ 2017թ. հունվար ամիսը եղած պատկերը, որը ստացվել է համայնքապետարանների կողմից:

Տարիքային խումբ	18-22 տարեկան խումբ		23-45 տարեկան խումբ		46-62 տարեկան խումբ		63 և ավելի տարեկան խումբ		Ընդամենը հարցումներ
	Ար.	Իգ.	Ար.	Իգ.	Ար.	Իգ.	Ար.	Իգ.	
<b>Խոշորացված համայնք</b>	Ար.	Իգ.	Ար.	Իգ.	Ար.	Իգ.	Ար.	Իգ.	
Ախուրյան	10	7	37	36	26	25	8	13	162
Աշոցք	5	6	31	44	16	20	6	9	137
Թումանյան	2	7	21	33	22	22	10	17	134
Ստեփանավան	4	12	31	36	24	24	11	14	156
Դիլիջան	4	8	21	63	15	26	7	16	160
Նոյեմբերյան	5	7	31	38	15	25	11	21	153

**Աղյուսակ 1.5.2. Փաստացի ընտրանքի բաշխումն ըստ սեռատարիքային խմբերի**

**Ընտրանքային քայլ:** Քանի որ հետազոտությունն անդրադառնում էր բնակավայրերում մատուցվող փողոցային լուսավորության ապահովման ծառայությունների ոլորտի գնահատմանը, ապա առավել կարևորություն է տրվել համայնքներում իրականացվող հարցումների այնպիսի բաշխման ապահովմանը, որ ներառված լինեն համայնքի բոլոր բնակավայրերը, իսկ բնակավայրերի ներսում՝ տարբեր փողոցներում և բնակավայրի տարբեր հատվածներում բնակվող բնակիչները՝ ներառելով և՛ գլխավոր փողոցները, և՛ երկրորդական, և՛ ծայրամասային հատվածները: Հարցազրուցավարներին նախօրոք տրվել են այն փողոցները (սկզբնակետերը), որտեղից վերջիններս սկսել են հարցումների իրականացումը: Որպես ընտրանքային քայլ սահմանվել է երեք քայլը սեփական տների փողոցների համար, ինչը նշանակում է, որ որևէ փողոցի ընտրության դեպքում հաջորդ տնային տնտեսությունը ընկած է եղել հարցման փորձ/հաջողված հարցում արված տնային տնտեսությունից երեք տուն հեռավորության վրա: Քաղաքային համայնքներում բազմաբնակարան շենքերի դեպքում ընտրանքային քայլը սահմանվել է երկուսը (յուրաքանչյուր երկրորդ շենքը), շենքի ներսում բնակարանների ընտրության համար քայլը եղել է կրկին երեքը, իսկ յուրաքանչյուր շենքում առավելագույնը թույլատրված է եղել իրականացնել 2 հարցում: Տնային տնտեսության ներսում ռեսպոնդենտի ընտրությունն իրականացվել է ըստ քվոտային համապատասխանելիության սկզբունքի: Յուրաքանչյուր տնային տնտեսությունում իրականացվել է միայն մեկ հարցում:

## 1.6 Բնակավայրերի ներսում փողոցների ընտրությունը

Փողոցային լուսավորության ապահովման բաղադրիչների դիտարկման համար յուրաքանչյուր բնակավայրում դիտարկման ենթակա փողոցների քանակը սահմանվել է կախված բնակավայրի մեծությունից: Ըստ այս չափորոշիչի մշտադիտարկման ենթակա փողոցների քանակը սահմանվել է համաձայն Աղյուսակ 1.6.1-ում բերված ցուցանիշների: Յուրաքանչյուր բնակավայրում պարտադիր դիտարկման է ենթակվել բնակավայրի գլխավոր փողոցը/փողոցները, որը/որոնք համարվում են ամենաբանուկը և որի/որոնց երկայնքով կազմակերպված է կանոնավոր տրանսպորտային երթևեկություն: Երկրորդական փողոցները և նրբանցքներն ընտրվել են բնակավայրերի տարբեր հատվածներում, այնպես որ հնարավոր լինի ապահովել բնակավայրի տարբեր թաղամասերի ներգրավվածությունը ուսումնասիրությունում: Ընտրված փողոցներն ուսումնասիրվել են ամբողջ երկարությամբ:

Բնակավայրերի մեծությունն ըստ բնակչության թվի	Մշտադիտարկման ենթակա տարածքներ	
	գլխավոր փողոց	երկրորդական փողոց
Մինչև 300 բնակչություն ունեցող	1	3
301-ից 700	2	4
700-1500	2	5
1500-5000	3	6
5000-10000 բնակչություն	4	8
10.000 բնակչություն և ավելի	6	10

Աղյուսակ 1.6.1. Մշտադիտարկման ենթակա փողոցների քանակն ըստ բնակավայրի մեծության



Ընտրված փողոցները նախապես տրվել են մոնիթորներին: Մոնիթորը, այցելելով տրված փողոց, արձանագրել է՝ արդյոք այն ապահովված է փողոցային լուսավորությամբ, թե՛ ոչ: Եթե փողոցն ապահովված չէ լուսավորությամբ, մոնիթորն արձանագրել է փողոցի երկարությունը և անցում կատարել հաջորդ տրված փողոց: Եթե փողոցն ապահովված է լուսավորությամբ, մոնիթորը լրացրել է ստուգաթերթի մյուս հարցերը նույնպես: Դիտարկումները և չափումներն իրականացվել են երեկոյան՝ 21:00-ից 21:30 հատվածում:

Ճանապարհային պատվածքի միջին լուսավորվածության ցուցանշի հաշվարկման համար իրականացվել են չափումներ լյուքսմետր սարքով փողոցի հետևյալ կետերում՝

- Փողոցի ամենալուսավոր հատված, որը որոշվել է ակնադիտարկմամբ
- Փողոցի երկայնքով երեք չափում երկու իրար հարևան հենասյուների միջնամասում. Երեք չափումներն իրականացվել են փողոցի սկզբնամասում, միջնամասում, վերջնամասում (փողոցի սկզբից հաշված փողոցի երկարության 1/6, 3/6, 5/6 կետերում).
- Հետիոտնային անցումների նշաններով կահավորված և գծանշումներ պարունակող հատվածներում:


Ընդհանուր առմամբ դիտարկման են ենթարկվել 249 փողոցներ, որոնցից 85-ը եղել են գլխավոր փողոցներ, 164-ը՝ երկրորդական: Դիտարկման ենթարկված փողոցների թիվն ունի Աղյուսակ 1.6.2-ում ներկայացված պատկերը:

Բնակավայր	Դիտարկված փողոցների թիվը	որից գլխավոր	որից երկրորդական
Ախուրյան	59	18	41
Աշոցք	57	18	39
Թումանյան	35	12	23
Ստեփանավան	30	10	20
Դիլիջան	26	9	17
Նոյեմբերյան	42	18	24
Ընդամենը	249	85	164

**Աղյուսակ 1.6.2. Խոշորացված համայնքներում դիտարկված փողոցների թիվը**


## 1.7 Հարցման ենթարկված բնակչության սոցիալ-ժողովրդագրական նկարագիրը

Քանակական դեմ առ դեմ հարցմանը մասնակցել են ընդհանուր առմամբ 902 բնակիչներ խոշորացված համայնքներից, ընդ որում հարցման ենթարկված բնակիչների 41%-ը եղել են արական սեռի ներկայացուցիչներ, 59%-ը՝ իգական: Ըստ առանձին համայնքների հարցման ենթարկված բնակչության սեռային կազմը ներկայացված է Գրաֆիկ 1-ում:




**Գրաֆիկ 1. Հարցման ենթարկված բնակչության սեռային կազմն ըստ խոշորացված համայնքների**

Ինչ վերաբերում է հարցման ենթարկված բնակչության տարիքային կազմին, ապա քանակական դեմ առ դեմ հարցումներում ներգրավված բնակչության 9%-ը եղել է 18-ից 22 տարեկանների տարիքային խմբից, 47%-ը՝ 23-45 տարեկանների խմբից, 29%-ը՝ 46-62, իսկ 16%-ը 63 տարեկան և ավելի տարիքային խմբից: Հարցման ենթարկված բնակչության տարիքային կազմն ըստ խոշորացված համայնքների ներկայացված է Գրաֆիկ 2-ում:



**Գրաֆիկ 2. Հարցման ենթարկված բնակչության տարիքային կազմն ըստ խոշորացված համայնքների<sup>2</sup>**


Ըստ կրթական խմբերի հարցման ենթարկված բնակչության կազմն առանձին համայնքների համար ներկայացված է Գրաֆիկ 3-ում: Համաձայն արդյունքների հարցման ենթարկված բնակիչների 1%-ն ունեցել է տարրական կրթություն, 5%-ը՝ հիմնական, իսկ 39%-ը՝ միջնակարգ: Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթություն է ստացել հարցման ենթարկված բնակիչների 3%-ը, իսկ 24%-ը ստացել է միջին մասնագիտական կրթություն: Բարձրագույն (բակալավր, մագիստրոս) և հետբուհական կրթություն ունեցել է հարցման ենթարկված բնակիչների 27%-ը:



**Գրաֆիկ 2. Բնակչության կազմն ըստ կրթական մակարդակի**


Ինչ վերաբերում է բնակչության կազմին ըստ զբաղվածության ոլորտների, ապա հարցման ենթարկված բնակչության 24%-ը կազմել են տնային տնտեսություն վարողները: Հաջորդ առավել մեծ խմբերը եղել են գործազուրկների խումբը և պետական ոլորտում ծառայող մասնագետների խումբը (յուրաքանչյուրը 15%): Հարցման ենթարկված բնակչության 13%-ը եղել է գյուղատնտեսության ոլորտում ինքնազբաղված, իսկ 12%-ը՝ թոշակառու: Մնացած 21%-ը եղել են զբաղվածության այլ ոլորտների ներկայացուցիչներ, ինչպես օրինակ մասնավոր ոլորտում սպասարկող անձնակազմ, ուսանողներ, մասնավոր ոլորտում ծառայող մասնագետներ և այլն: Հարցման ենթարկված բնակչության կազմն ըստ զբաղվածության ոլորտների ներկայացված է Գրաֆիկ 4-ում:

<sup>2</sup> Այսուհետ գրաֆիկներում և աղյուսակներում տոկոսային տվյալները ներկայացված են առանց ստորակետից հետո թվերի, ուստի հնարավոր է գումարը 1%-ով կամ 2%-ով ավել կամ նվազ լինի 100%-ից:




**Գրաֆիկ 3. Բնակչության կազմն ըստ զբաղվածության ոլորտների**

Հարցման ենթարկված ընտանիքների միջին ամսական եկամուտը 34% դեպքերում կազմել է 50.000 ՀՀԴ-ից պակաս, իսկ 35% դեպքերում կազմել է 50,000-ից 100,000 ՀՀԴ: Ընդհանուր առմամբ հարցման ենթարկված ընտանիքների միայն 30%-ի միջին ամսական եկամուտն է կազմել 100,000-ից ավել, ընդ որում, այստեղ մեծ կշիռ են կազմում 100,000-ից 200,000 ՀՀԴ սահմաններում եկամուտ ունեցող ընտանիքները, որոնք կազմում են ընդհանուր առմամբ հարցման ենթարկված տնային տնտեսությունների 14%-ը: Տնային տնտեսությունների միայն 6%-ն է ամսական կտրվածքով ստանում 200,000 ՀՀԴ-ից ավել եկամուտ: Բնակչության կազմն ըստ եկամուտների մակարդակի ըստ առանձին խոշորացված համայնքների ներկայացված է Գրաֆիկ 5-ում:



**Գրաֆիկ 4. Հարցման ենթարկված տնային տնտեսությունների կազմն ըստ եկամուտների մակարդակի**

Հարցման ենթարկված բնակչության 20%-ը նշել է, որ իրենց «ընտանիքի եկամուտը չի բավականացնում սնունդ գնելու համար», 39%-ը, որ «ընտանիքի եկամուտը բավականացնում է սնունդ, բայց ոչ հագուստ գնելու համար»: Բնակչության 37%-ը նշել է, որ իրենց ընտանիքի եկամուտը բավականացնում է սնունդ և հագուստ, բայց ոչ թանկարժեք կենցաղային տեխնիկա, օրինակ՝ սառնարան կամ լվացքի մեքենա գնելու համար, մինչդեռ 4%-ը համարում է, որ ընտանիքի եկամուտը բավականացնում է թանկարժեք կենցաղային տեխնիկա, օրինակ՝ սառնարան կամ լվացքի մեքենա գնելու համար: Հարցման ենթարկված բնակչության միայն 0,2%-ն է նշել, որ ընտանիքի եկամուտը բավականացնում է մեքենա կամ բնակարան գնելու համար: Բնակչության կազմն ըստ եկամուտների մակարդակի և ըստ առանձին բնակավայրերի ներկայացված է Գրաֆիկ 6-ում:



Գրաֆիկ 5. Հարցման ենթարկված տնային տնտեսությունների կազմն ըստ եկամուտների մակարդակի

### 1.8 Դաշտային աշխատանքների կազմակերպում եվ որակի ստուգում

Դաշտային աշխատանքներում ներգրավված են եղել երեք մարզային համակարգողներ և շուրջ 34 վերապատրաստված քաղաքացի-մոնիթորներ: Համակարգողները պատասխանատու են եղել բնակավայրի ներսում հարցումների այնպիսի բաշխման համար, որ հնարավոր լինեի ապահովել բնակավայրերի բոլոր թաղամասերի, կենտրոնական և երկրորդական փողոցների ներգրավվածությունը:

Հավաքագրված տվյալների որակի բարձրացման և տվյալների նկատմամբ վստահելիության ապահովման համար իրականացված հարցումների 10%-ը պատահականության սկզբունքով ենթարկվել են ստուգման հեռախոսային ստուգիչ զանգերի միջոցով (շուրջ 90 հարցաթերթ):

## 1.9 Հետազոտության սահմանափակումներ

Հետազոտությունն ունի հետևյալ սահմանափակումները՝

- Քանակական դեմ առ դեմ հարցումների արդյունքները մեկնաբանելիս անհրաժեշտ է նկատի ունենալ, որ տվյալները ներկայացուցչական չեն առանձին բնակավայրերի և խոշորացված համայնքների համար, թեև յուրաքանչյուր խոշորացված համայնքի համար հարցումների քանակը բաշխված է այնպես, որ հնարավորություն է տվել վերհանել համայնքներում փողոցային լուսավորության ապահովման ոլորտի հետ կապված առկա պատկերը:
- Քանի որ Նոյեմբերյան համայնքի մի շարք բնակավայրեր սահմանամերձ են, մոնիթորինգ հնարավոր է եղել իրականացնել առավել քիչ թվով փողոցներում՝ հաշվի առնելով մոնիթորինգի անվտանգության պահպանման պահանջը:
- Հետազոտության մեթոդաբանության համաձայն նախատեսվում էր փողոցներում իրականացվող լուսավորվածության չափումներով արձանագրված տվյալները համեմատել գործող նորմատիվներով սահմանված նվազագույն մեծությունների հետ: Դա ենթադրում էր պետական և համայնքային մարմիններից փողոցների՝ ըստ կարգի դասակարգումների վերաբերյալ տվյալների հասանելիություն (քանի որ տարբեր կարգի փողոցների համար նորմատիվները տարբեր են), որը սակայն հնարավոր չեղավ իրականացնել, քանի որ մեր կողմից ուղարկված տեղեկատվության հարցումներին ի պատասխան պետական և համայնքային կառավարման մարմինները հայտնեցին, որ նման տեղեկատվության չեն տիրապետում:

## Գլուխ 2. Հետազոտության արդյունքների վերլուծությունը ըստ առանձին խոշորացված համայնքների

### 2.1 Փողոցային լուսավորության համակարգը ախուրյան խոշորացված համայնքում

#### 2.1.1 Փողոցային լուսավորության ապահովման ոլորտում ախուրյան համայնքի հնարավորությունները

Փողոցային լուսավորության ապահովման ոլորտում խոշորացված համայնքների տեխնիկական հնարավորությունների բացահայտման համար համայնքապետարաններին ուղարկվել է տեղեկատվության հարցում, որի շրջանակներում համայնքները տրամադրել են տեղեկատվություն համայնքում առկա լուսավորության հենասյուների քանակի և բաշխման, լուսատուների առկայության, լուսավորության համակարգի միացման և անջատման ժամերի և լուսավորության համակարգի սպասարկման համար համայնքի սեփականություն հանդիսացող տեխնիկայի առկայության վերաբերյալ:

Համաձայն ստացած տվյալների՝ Ախուրյան համայնքում առկա են համայնքին պատկանող թվով 681 լուսավորության հենասյուներ: Առավել մեծ թվով հենասյուներ տեղակայված են Ախուրյան գյուղում՝ թվով 300 հենասյուն և Ջրառատում՝ թվով 200 հենասյուններ: Ախուրյան բնակավայրում 50 հենասյուներ կահավորված չեն լուսատուներով, Այգաբացում՝ 20-ը, իսկ Ջրառատում առկա 200 հենասյուներից կահավորված են միայն 50-ը: Բնակավայրերում լուսավորության միացման-անջատման ժամերը համաձայն համայնքապետարանի կողմից տրամադրված տվյալների ամառային ամիսներին հիմնականում 21:00-00:00-ն է, ձմեռային ամիսներին՝ 18:00-23:00-ը (Աղյուսակ 2.1.1): Ինչ վերաբերում է լուսավորության համակարգի սպասարկման համար նախատեսված տեխնիկայի առկայությանը, ապա համայնքը չունի լուսավորության համակարգի սպասարկման համար նախատեսված տեխնիկա:

Բնակավայր	Լուսավորության հենասյուներ և լուսատուներ			
	Լուսավորության հենասյուների քանակ	Լուսատուներով կահավորված հենասյուների քանակ	Սարքին վիճակում գտնվող լուսատուների քանակ	Լուսավորության համակարգի միացման և անջատման ժամերը
Ախուրյան	300	250	250	Ամառային ամիսներ 21:00-23:00 Ձմեռային ամիսներ 18:00-23:00
Այգաբաց	60	40	40	Ամառային ամիսներ 22:00-00:00 Ձմեռային ամիսներ 18:00-21:00
Արևիկ	պատկանում է էլ. Ցանցին	80	60	Ամառային ամիսներ 21:00-00:00 Ձմեռային ամիսներ 18:00-23:00
Բասեն	պատկանում է էլ. Ցանցին	պատկանում է էլ. Ցանցին	25	Ամառային ամիսներ 21:00-00:00 Ձմեռային ամիսներ 18:00-23:00
Կամո	պատկանում է էլ. Ցանցին	պատկանում է էլ. Ցանցին	42	Ամառային ամիսներ 21:00-00:00 Ձմեռային ամիսներ 19:00-00:00



Կառնուտ	31	61, որից 30-ը պատկանում է էլ. Ցանցին	61	Ամառային ամիսներ 21:00-00:00 Զմեռային ամիսներ 19:00-00:00
Հովիտ	90	90	80	Ամառային ամիսներ 21:00-00:00 Զմեռային ամիսներ 18:00-23:30
Ջրառատ	200	50	50	Ամառային ամիսներ 21:00-00:00 Զմեռային ամիսներ 18:00-23:00
Ընդամենը	681	571	608	Ամառային ամիսներ 21:00-23:00 Զմեռային ամիսներ 18:00-23:00

**Աղյուսակ 2.1.1: Ախուրյան խոշորացված համայնքի բնակավայրերում առկա լուսավորության հենասյուները, լուսատուները և լուսավորության համակարգի միացման-անջատման ժամերը**

**2.1.2 ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԲԱՎԱՐԱՐՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՂՈՑԱՅԻՆ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ**

Փողոցային լուսավորության ապահովման ծառայություններից բնակչության բավարարվածության ուսումնասիրության համար Ախուրյան համայնքում իրականացվել է 162 քանակական դեմ առ դեմ հարցումներ համայնքի բնակիչների հետ՝ ընդգրկելով համայնքի մաս կազմող բոլոր բնակավայրերի բնակիչներին: Ըստ առանձին բնակավայրերի հարցման ենթարկված բնակչության թվի բաշխումը ներկայացված է Աղյուսակ 2.1.2-ում:

Բնակավայր	Մշտական բնակչության թիվը բնակավայրում	Հարցումների քանակ	Ընդհանուրի մեջ մասնաբաժինը
Ախուրյան	9246	57	35%
Այգաբաց	743	12	7%
Արևիկ	1801	17	10%
Բասեն	1725	17	10%
Կամո	1475	16	10%
Կառնուտ	999	19	12%
Հովիտ	534	9	6%
Ջրառատ	1071	15	9%
Ընդամենը	17594	162	100%


**Աղյուսակ 2.1.2. Իրականացված քանակական դեմ առ դեմ հարցումների քանակն Ախուրյան համայնքում**

Համաձայն հարցման արդյունքների՝ համայնքի բնակչության շրջանում փողոցային լուսավորության ապահովումը համարվում է կարևոր հիմնախնդիր: «Ձեր ընտանիքի և Ձեր համայնքի առջև ծառայած մյուս հիմնախնդիրների համեմատ որքանո՞վ է Ձեզ համար կարևոր համայնքում փողոցային լուսավորության ապահովումը» հարցին հարցման ենթարկված ընդհանուր բնակչության 55%-ը պատասխանել է՝ «չափազանց կարևոր է», 40%-ը՝ «ավելի շուտ կարևոր է»: Բնակչության միայն 5%-ի համար է այս հիմնախնդիրը իրենց ընտանիքի և համայնքի առջև ծառայած մյուս հիմնախնդիրների համեմատ գնահատվել նվազ կարևոր: Այս ոլորտն առավել կարևորել են Այգաբաց, Արևիկ և Բասեն բնակավայրերի բնակիչները (Աղյուսակ 2.1.3):

Բնակավայր	Չափազանց կարևոր է	Ավելի շուտ կարևոր է	Ավելի շուտ կարևոր չէ	Ընդհանրապես կարևոր չէ
Ախուրյան	25%	68%	6%	2%
Այգաբաց	100%	0%	0%	0%
Արևիկ	100%	0%	0%	0%
Բասեն	80%	20%	0%	0%
Կամո	44%	44%	6%	6%
Կառնուտ	58%	37%	5%	0%
Հովիտ	67%	33%	0%	0%
Ջրառատ	53%	40%	7%	0%
Ընդամենը	55%	40%	4%	1%

**Աղյուսակ 2.1.3 Փողոցային լուսավորության ապահովվածության հիմնախնդրի կարևորությունը համայնքի բնակիչների համար**


Բնակիչներին առաջարկվել է գնահատել, թե իրենց համայնքի ներբնակավայրային և միջբնակավայրային փողոցները որքանով են ապահովված փողոցային լուսավորությամբ՝ առաջարկվելով գնահատման համար ընտրել «լիովին ապահովված են», «մասամբ ապահովված են» կամ «ընդհանրապես ապահովված չեն» տարբերակներից որևէ մեկը: Համաձայն արդյունքների՝ Ախուրյան գյուղում հարցման ենթարկված բնակչության 58%-ը համարում է, որ ներհամայնքային գլխավոր փողոցները լիովին ապահովված են փողոցային լուսավորությամբ: Արևիկ, Բասեն, Հովիտ, Ջրառատ և Այգաբաց բնակավայրերի հարցման ենթարկված բնակչության 80%-ը և ավելին նույնպես նշել են, որ իրենց բնակավայրերում գլխավոր փողոցները լիովին ապահովված են փողոցային լուսավորությամբ, իսկ Կառնուտում այսպես է կարծում հարցման ենթարկված բնակչության 74%-ը: Այս ցանկում մյուս բնակավայրերին ակնհայտորեն զիջում է Կամոն, որտեղ բնակչության 56%-ը նշել է, որ գլխավոր փողոցները մասամբ են ապահովված փողոցային լուսավորությամբ (Գրաֆիկ 7):



**Գրաֆիկ 6. Ներբնակավայրային գլխավոր փողոցներում լուսավորության առկայությունն ըստ բնակիչների գնահատականների**


Ի տարբերություն ներբնակավայրային գլխավոր փողոցների՝ ներբնակավայրային երկրորդական փողոցների և նրբանցքների համար տրված գնահատականներն առավել բացասական են բոլոր

բնակավայրերի համար՝ բացառությամբ Կառնուտ, Հովիտ և Ջրառատ համայնքների, որտեղ առավելապես գերակշռել են «լիովին ապահովված են» կամ «ավելի շուտ ապահովված են» տարբերակները: Ախուրյան, Այգաբաց, Կամո բնակավայրերում հարցման ենթարկված բնակչության 50%-ից ավելին նշել է, որ երկրորդական փողոցները ընդհանրապես ապահովված չեն փողոցային լուսավորությամբ, ընդ որում, Ախուրյանում այս տարբերակն է նշել բնակիչների 76%-ը (Գրաֆիկ 8):




**Գրաֆիկ 7. Ներբնակավայրային երկրորդական փողոցներում, նրբանցքներում, փակուղիներում լուսավորության առկայությունն ըստ բնակիչների գնահատականների**

Ինչ վերաբերում է միջբնակավայրային ճանապարհներին, ապա այստեղ ակնհայտորեն գերակշռում է «ընդհանրապես ապահովված չեն» տարբերակները, հատկապես Այգաբաց, Արևիկ, Բասեն և Կամո բնակավայրերի դեպքում (Գրաֆիկ 9): Որոշակի չափով դրական պատասխաններ են տրվել Հովիտ, Կառնուտ և Ախուրյան բնակավայրերի բնակիչների կողմից:



**Գրաֆիկ 8. Միջբնակավայրային ճանապարհների երկայնքով լուսավորության առկայությունն ըստ բնակիչների գնահատականների**

Բնակիչներին հարց է տրվել, թե իրենց կարծիքով ընդհանուր առմամբ մոտավոր հաշվարկներով իրենց բնակավայրի փողոցների քանի՞ տոկոսն է ապահովված փողոցային լուսավորությամբ, ինչին ի պատասխան տրված գնահատականների միջինացված արժեքները ներկայացված են Գրաֆիկ 10-ում: Համաձայն այս գնահատականների՝ առավել լուսավորված են Հովիտ, Ջրառատ և Կառնուտ բնակավայրերը, որտեղ ըստ բնակիչների կարծիքի լուսավորված են համապատասխանաբար փողոցների 76%, 73% և 66%-ը: Այգաբաց և Արևիկ բնակավայրերի դեպքում ստացվել են միջինին մոտ գնահատականներ՝ համապատասխանաբար 52% և 48%: Առավել ցածր գնահատականներ են ստացվել Ախուրյան և Բասեն բնակավայրերի համար, իսկ Կամոյում գնահատականը ամենացածրն է. համաձայն միջինացված գնահատականի այստեղ փողոցային լուսավորությամբ ապահովված է բնակավայրի փողոցների միայն 32%-ը:



**Գրաֆիկ 9. Բնակավայրերի փողոցների քանի տոկոսն է ապահովված լուսավորությամբ. միջինացված ցուցանիշ ըստ բնակիչների գնահատականների**

Լուսավորության համակարգի միացման և անջատման ժամերի վերաբերյալ հարցին ի պատասխան Ախուրյան բնակավայրի բնակիչներն առավել հստակ նշել են ամառային ռեժիմում լուսավորության միացման և անջատման ժամերը՝ 21:00-00:00: Շատ քիչ թվով բնակիչներ ամառային ամիսների համար նշել են նաև 20:00 կամ 20:30 տարբերակները: Ինչ վերաբերում է ձմեռային ռեժիմում լուսավորության միացման ժամերին, ապա այստեղ բնակիչների կողմից նշվել են բավականին տարբեր ժամեր՝ 18:00, 19:00, 19:30, 20:00, 20:30 և 21:00, ինչը կարող է նշանակել, որ ձմեռային ամիսների ընթացքում կա՛մ պահպանված չեն եղել լուսավորության միացման ռեժիմը, կա՛մ բնակիչներն իրազեկված չեն միացման ժամերի մասին: Հիշեցնենք, որ համայնքապետարանի կողմից տրամադրված տվյալների համաձայն միացման ժամը 18:00-ն է: Այս տարբերակը սակայն նշվել է հարցման ենթարկված բնակիչների միայն 11%-ի կողմից: Բնակիչների կողմից որպես ձմեռային ամիսներին լուսավորության միացման առավել հաճախ հնչած տարբերակներ նշվել է 19:00-ն (հարցման ենթարկված բնակիչների 28%-ը), 20:0-ն (հարցման ենթարկված բնակիչների 26%-ը) և 21:00-ն (հարցման ենթարկված բնակիչների 21%):

Այգաբացում նույնպես ամառային ամիսների համար հստակ չի նշվել միացման ժամը, սակայն առավել հաճախ հնչած պատասխանը 20:00-ն է: Ձմեռային ամիսների համար հավասարաչափ բաշխմամբ նշվել է և՛ 19:00, և՛ 20:00 տարբերակները: Անջատման ժամերի առումով բնակիչներն առավել միակարծիք են. երկու դեպքում էլ առավել հաճախ հնչած պատասխանը 00:00-ն է:

Արևիկ բնակավայրում ամառային ամիսներին որպես լուսավորության միացման ժամ առավել հաճախ նշվել են 20:00 և 21:00 տարբերակները, ձմեռային ամիսներին՝ 19:00 և 20:00-ը: Ինչ վերաբերում է անջատման ժամերին, ապա երկու դեպքում էլ գրեթե հավասար բաշխմամբ նշվել է 00:00 և 06:00 տարբերակները:

Բասենում նույնպես ամառային և ձմեռային ամիսների համար միացման ժամերի վերաբերյալ տրվել են բավականին տարբեր պատասխաններ՝ համապատասխանաբար 20:00-ից մինչև 22:00 և 19:00-ից մինչև 20:00 ընկած միջակայքում: Ընդ որում այս բնակավայրում առավել մեծ թվով մարդիկ են դժվարացնել պատասխանել այս հարցին: Լուսավորության անջատման ժամի վերաբերյալ պատասխանները համեմատաբար նման են՝ երկու սեզոնի համար էլ առավել հաճախ նշվել է 00:00 տարբերակը: Նմանատիպ պատկեր գրանցվել է նաև Կամոյում և Ջրառատում:

Հովիտում ամառային ամիսներին լուսավորության միացման ժամը գրեթե բոլոր բնակիչների կողմից նշվել է 21:00-ն, ձմեռային ամիսների համար 18:00-20:00: Անջատման ժամերի վերաբերյալ բնակիչները համակարծիք են եղել. մեծամասնության կողմից նշվել է 00:00 տարբերակը:

Բնակավայր	Ամառային ամիսներ		Ձմեռային ամիսներ	
	Միացման ժամ	Անջատման ժամ	Միացման ժամ	Անջատման ժամ
Ախուրյան	21:00	00:00	Տվյալը հստակ չէ 18:00-21:00	00:00
Այգաբաց	20:00	00:00	19:00 կամ 20:00	00:00
Արևիկ	20:00 կամ 21:00	00:00 կամ 06:00	19:00 կամ 20:00	00:00 կամ 06:00
Բասեն	Տվյալը հստակ չէ	00:00	Տվյալը հստակ չէ 19:00-20:00	00:00

	20:00-22:00			
Կամո	Տվյալը հստակ չէ 20:00-22:00	00:00	Տվյալը հստակ չէ 19:00-20:00	23:00 կամ 0:00
Կառնուտ	20:00-22:00	00:00 կամ 01:00	18:00-22:00	00:00 կամ 01:00
Հովիտ	21:00	00:00	18:00-20:00	00:00
Ջրառատ	20:00-22:00	00:00	18:00-20:00	23:00-00:00

**Աղյուսակ 2.1.4. Ախուրյան համայնքում փողոցային լուսավորության միացման և անջատման ժամերն ըստ բնակիչների կողմից տրված պատասխանների**

«Ի՞նչ եք կարծում, միացման/անջատման այդ ժամերը բավարար են փողոցային լուսավորվածության պատշաճ ապահովման համար» հարցին հարցման ենթարկված բնակչության շուրջ 72%-ը տվել է դրական պատասխան, 28%-ը՝ բացասական: Լուսավորության միացման տևողությունը հատկապես անբավարար են համարել Բասեն և Կամո բնակավայրերի բնակիչները (Աղյուսակ 2.1.5)

Բնակավայր	Ընդհանրապես բավարար չեն	Ավելի շուտ բավարար չեն	Ավելի շուտ բավարար են	Լիովին բավարար են
Ախուրյան	0%	33%	50%	17%
Այգաբաց	0%	0%	67%	33%
Արևիկ	0%	13%	63%	25%
Բասեն	19%	44%	31%	6%
Կամո	19%	25%	38%	19%
Կառնուտ	5%	11%	42%	42%
Հովիտ	0%	11%	22%	67%
Ջրառատ	0%	13%	27%	60%
Ընդամենը	5%	23%	44%	28%


**Աղյուսակ 2.1.5. Բնակիչների գնահատականները փողոցային լուսավորության միացման տևողության վերաբերյալ**

«Արդյո՞ք համայնքապետարանն իրականացնում է փողոցային լուսատուների սպասարկում, խափանված լուսատուների փոխարինման աշխատանքներ» հարցին բնակիչների 4%-ը նշել է, որ «ընդհանրապես չի իրականացնում», 36%-ը՝ «իրականացնում է երբեմն-երբեմն, խնդիրներ առաջանալուց հետո բավականին ուշ», 26%-ը՝ «իրականացնում է հաճախ, խնդիրներ առաջանալուց անմիջապես հետո»: Հարցման ենթարկված բնակիչների 34%-ը նշել է, որ մինչ տվյալ պահը խնդիրներ չեն առաջացել (Աղյուսակ 2.1.6):

Բնակավայր	Ընդհանրապես չի իրականացնում	Իրականացնում է երբեմն-երբեմն, խնդիրներ առաջանալուց հետո բավականին ուշ	Իրականացնում է հաճախ, խնդիրներ առաջանալուց անմիջապես հետո	Խնդիրներ չեն առաջացել մինչ այժմ
Ախուրյան	4%	36%	26%	34%
Այգաբաց	0%	50%	0%	50%
Արևիկ	6%	65%	0%	29%
Բասեն	0%	54%	0%	46%
Կամո	0%	19%	19%	63%
Կառնուտ	6%	17%	33%	44%
Հովիտ	11%	11%	0%	78%
Ջրառատ	0%	27%	47%	27%
Ընդամենը	4%	36%	26%	34%

**Աղյուսակ 2.1.6. Բնակիչների գնահատականները փողոցային լուսատուների սպասարկման վերաբերյալ**

Համայնքի բնակիչներին առաջարկվել է 1-ից 10 բալանոց սանդղակով գնահատել փողոցային լուսավորության ապահովման ոլորտում համայնքապետարանի կողմից մատուցվող ծառայություններից իրենց ընդհանուր բավարարվածությունը: Առավել բարձր գնահատականներ են տրվել Ջրառատ, Հովիտ, Այգաբաց և Կառնուտ գյուղերի բնակիչների կողմից, որտեղ համայնքապետարանի աշխատանքն այս ոլորտում գնահատվել է 7 միավորից բարձր: Արևիկում և Ախուրյանում տրվել են միջինին մոտ գնահատականներ՝ համապատասխանաբար 6.18 և 5.79 միավորներ: Միջինից ցածր գնահատականներ են տրվել Բասեն և Կամո բնակավայրերի համար: Համայնքապետարանի միջին գնահատականը ամբողջ խոշորացված համայնքի համար կազմել է **6,25** միավոր հնարավոր 10-ից (Գրաֆիկ 11):



**Գրաֆիկ 10. Փողոցային լուսավորության ապահովման ծառայություններից բնակչության բավարարվածությունն Ախուրյան համայնքի բնակավայրերի համար**

Համայնքի բնակիչներին հնարավորություն է տրվել ներկայացնել իրենց առաջարկություններն ուղղված փողոցային լուսավորության ապահովման ծառայության որակի բարելավմանը: Բնակավայրերից ստացվել

են առավել քիչ թվով առաջարկություններ. Ախուրյան, Այգաբաց, Բասեն և Կառնուտ բնակավայրերում առաջարկվել է լուսավորությամբ ապահովել նաև երկրորդական փողոցները, ավելացնել լուսատուների քանակը: Հովիտում առաջարկվել է պահպանել միացման/անջատման ռեժիմը, Բասենում՝ տեղադրվեն լուսատուներ գյուղ մտնելու ճանապարհին և երեկոյան ժամին ավելի ուշ անջատեն լուսավորությունը (Աղյուսակ 2.1.7):

Առաջարկություններ	Ախուրյան	Այգաբաց	Արևիկ	Բասեն	Կառնուտ	Հովիտ
Լուսավորություն ապահովվի նաև երկրորդական փողոցներում	1	1	0	5	2	0
Ավելացվեն լուսատուների քանակը	1	0	0	2	3	0
Ապահովել լուսավորություն գյուղի բոլոր փողոցներում	0	0	1	0	1	0
Երեկոյան ժամին ավելի ուշ անջատեն լուսավորությունը	0	0	0	1	0	0
Պահպանեն միացման/անջատման ռեժիմը	0	0	0	0	0	1
Տեղադրվեն լուսատուներ գյուղ մտնելու ճանապարհին	0	0	0	1	0	0

**Աղյուսակ 2.1.7: Փողոցային լուսավորության ոլորտի բարելավմանն ուղղված առաջարկներ համայնքի բնակավայրերից**



### 2.1.3 ԱՆՈՒՐՅԱՆ ԽՈՇՈՐԱՑՎԱԾ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՓՈՂՈՑԱՅԻՆ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

Լուսավորության համակարգի մոնիթորինգի շրջանակներում Ախուրյան համայնքում դիտարկման են ենթարկվել ընդհանուր առմամբ 59 փողոցներ, որոնցից 15-ը եղել են գլխավոր փողոցներ, 41-ը՝ երկրորդական, իսկ 3-ը՝ նրբանցք/փակուղի: Դիտարկման ենթարկված փողոցներից 24-ը տեղակայված են եղել բնակավայրերի կենտրոնական հատվածներում, իսկ 35-ը՝ ծայրամասերում: Համայնքում դիտարկման ենթարկված փողոցների ընդհանուր երկարությունը կազմել է 34,951 մետր (Աղյուսակ 2.1.8):

Բնակավայր	Դիտարկված փողոցների երկարություն (մետր)	Փողոցի տեղադիրքը բնակավայրում		Դիտարկված փողոցի տիպը		
		Կենտրոն	Ծայրամաս	Գլխավոր փողոց	Երկրորդական փողոց	Նրբանցք, փակուղի
Ախուրյան	6549	4	7	3	7	1
Այգաբաց	4930	3	3	2	4	0
Արևիկ	3857	3	5	2	6	0
Բասեն	8034	4	4	2	6	0
Կամո	3050	2	5	2	3	2
Կառնուտ	5022	3	3	2	4	0
Հովիտ	1010	1	4	1	4	0
Ջրառատ	2499	4	4	1	7	0
Ընդամենը	34951	24	35	15	41	3

#### Աղյուսակ 2.1.8 Դիտարկման ենթարկված փողոցներն Ախուրյան համայնքում

Դիտարկված 59 փողոցներից 48-ում կամ ընդհանուր առմամբ դիտարկված փողոցների 81%-ում առկա են եղել լուսավորության հենասյուներ: Եթե այս տվյալը ներկայացնենք փողոցների երկարության ցուցանիշով, ապա դիտարկված ընդհանուր 34.95 կմ երկարությամբ փողոցներից լուսավորության հենասյուներով են ապահովված եղել ընդհանուր առմամբ փողոցների 30.5 կմ հատվածը՝ համ դիտարկված ընդհանուր փողոցների երկարության 87%-ը<sup>3</sup>: Մոնիթորների այցելության ժամանակ լուսավորություն միացված է եղել 31 փողոցում, որը կազմում է ընդհանուր առմամբ 21.29 կմ ճանապարհ. ընդհանուր առմամբ դիտարկված ճանապարհների երկարության 61%-ը կամ լուսավորության հենասյուներով ապահովված ճանապարհների 70%-ում (Աղյուսակ 2.1.9):

<sup>3</sup> Ցուցանիշը մեկնաբանելիս անհրաժեշտ է նկատի ունենալ, որ դիտարկված փողոցների ցանկում պարտադիր ներառված են եղել գլխավոր փողոցները, որոնք սովորաբար ապահովված են լինում փողոցային լուսավորությամբ, ուստի ցուցանիշը զուտ պատահականության սկզբունքով ընտրված փողոցների համար հաշվարկված ցուցանիշ չէ:

Բնակավայր	Փողոցում լուսավորության հենասյուների առկայություն		Փողոցում լուսավորության հենասյուների առկայություն ըստ փողոցի երկարության		Միացված են եղել լուսատուները	
	Այո	Ոչ	Ապահովված է	Ապահովված չէ	Այո	Ոչ
Ախուրյան	7	4	5490	1059	7	4
Այգաբաց	1	5	2679	2251	1	5
Արևիկ	6	2	2755	1102	6	2
Բասեն	8	0	8034	0	1	7
Կամո	7	0	3050	0	5	2
Կառնուտ	6	0	5022	0	5	1
Հովիտ	5	0	1010	0	0	5
Ջրառատ	8	0	2499	0	6	2
Ընդամենը	48	11	30539	4412	31	28

**Աղյուսակ 1.1.9: Փողոցներում լուսավորության հենասյուների առկայություն և լուսավորում**

Համայնքում մոնիթորինգի կողմից ընդհանուր առմամբ արձանագրվել է 666 լուսավորության հենասյուն, որոնցից 291-ը տեղակայված են եղել Ախուրյան գյուղում, 86-ը՝ Արևիկում, 69-ը՝ Կամոյում: Համեմատաբար ավելի մեծ թվով հենասյուներ են առկա եղել նաև Ջրառատում և Այգաբացում, իսկ Բասենում, Կառնուտում և Հովիտում լուսավորության հենասյուների թիվը մոտ է եղել 30-ին: Արձանագրված հենասյուների 56%-ը եղել են սպասարկող հենասյուներ (կահավորված են եղել սարքին վիճակում գտնվող լուսատուով): 296 լուսավորության հենասյուներ չեն ունեցել կանթեղ ամրացնելու հարմարանք կամ կահավորված են եղել ոչ սարքին վիճակում գտնվող լուսատուով: 11 հենասյուներ եղել են կրկնակի լուսատուով կահավորված, մնացած բոլոր հենասյուները կահավորված են եղել մեկ լուսատուով: Համաձայն մոնիթորինգի գնահատականների լուսատուների 38%-ը եղել են էներգախնայող (LED) լուսատուներ: Առավել մեծ թվով էներգախնայող լուսատուներ առկա են եղել Կամո, Հովիտ և Ջրառատ բնակավայրերում: Հենասյուների տեղակայման քայլը միջինում կազմել է 46 մետր: Այս ցուցանիշն առավել փոքր է Ախուրյան, Այգաբաց, Արևիկ, Կամո և Հովիտ բնակավայրերում: Ջրառատում ցուցանիշը կազմել է 54 մետր, իսկ անհա Բասենում և Կառնուտում ցուցանիշը բավականին մեծ է՝ համապատասխանաբար 254 մետր և 211 մետր:

Բնակավայր	Առկա հենասյուների քանակ	Սպասարկող հենասյուներ	Լուսատու չունեցող/ոչ սարքին վիճակում գտնվող լուսատու ունեցող հենասյուների քանակ	Էներգախնայող (LED) լուսատուների քանակ	Հենասյուների տեղակայման քայլ (մետր)
Ախուրյան	291	192	99	8	35
Այգաբաց	60	47	13	18	45
Արևիկ	86	17	69	18	40
Բասեն	31	14	17	10	254
Կամո	69	30	39	26	44
Կառնուտ	28	23	5	0	211
Հովիտ	29	24	5	27	34
Ջրառատ	72	23	49	32	54
Ընդամենը/ միջինում	666	370	296	139	46

**Աղյուսակ 2.1.10. Հենասյուների քանակը և լուսատուների առկայությունը բնակավայրերում**

Այն փողոցներում որտեղ երեկոյան ժամերին միացված է եղել փողոցային լուսավորություն, իրականացվել է փողոցի լուսավորվածության չափում լյուքսմետր կոչվող սարքի միջոցով: Չափումները հիմնականում իրականացվել են երեկոյան 21:00-ից 21:30 հատվածում: Համաձայն ստացված արդյունքների առավելագույն լուսավորված հատվածում լուսավորվածության չափը համայնքում առավելագույնը եղել է 7 լյուքս, որն արձանագրվել է Բասեն բնակավայրում: 5լք առավելագույն լուսավորվածությունն արձանագրվել է Ջրառատում, մնացած բնակավայրերում լուսավորվածությունը չի գերազանցել 3լք-ն: Ինչ վերաբերում է փողոցների միջին լուսավորվածության չափումներին, ապա այստեղ նույնպես բացի Բասեն բնակավայրից, մնացած բոլոր փողոցներում լուսավորվածությունը նշանակալիորեն պակաս է սահմանված նորմատիվներից: Միջին լուսավորվածության ցուցանիշը կազմել է 0,95 լք. (Աղյուսակ 2.1.11): Հիշեցնենք, որ համաձայն նորմատիվային պահանջների գյուղական բնակավայրերում գլխավոր փողոցների լուսավորվածությունը պետք է լինի նվազագույնը 10 լք, բնակելի կառուցապատման հիմնական և երկրորդական փողոցների լուսավորվածությունը՝ 4-6լք:

Բնակավայր	Առավելագույն լուսավորված հատվածում լուսավորվածության չափը (լյուքս)	Փողոցների լուսավորվածության չափը միջինում (լյուքս)
Ախուրյան	3	1.29
Այգաբաց	2	1.00
Արևիկ	2	0.89
Բասեն	7	5.33
Կամո	1	0.13
Կառնուտ	3	1.33
Ջրառատ	5	0.22
Առավելագույնը/միջինում	7	0.95

**Աղյուսակ 2.1.11. Ճանապարհային պատվածքի լուսավորվածությունը Ախուրյան համայնքի բնակավայրերում**

Մոնիթորինգի ընթացքում ճանապարհային պատվածքի լուսավորվածության չափումներ են իրականացվել նաև հետիոտնային անցումների հատվածներում, քանի որ համաձայն նորմատիվային պահանջների անցման գոտիների համար լույսի աղբյուրի գունավորությունը պետք է լինի ցայտուն՝ համեմատած երթևեկելի մասում լուսավորման համար կիրառվող կանթեղների հետ: Հետիոտնային անցումներ առկա են եղել Ախուրյանում, Կամոյում և Ջրառատում: Նշենք, որ թեև հետիոտնային անցումների հատվածներում լուսավորվածությունը գերազանցել է փողոցներում արձանագրված միջին լուսավորվածության չափից, սակայն այնուամենայնիվ պակաս է եղել սահմանված նորմատիվներից:

Բնակավայր	Հետիոտնային անցումների քանակը	Հետիոտնային անցումների հատվածում լուսավորվածության չափը միջինում (լյուքս)
Ախուրյան	2	1
		2
Կամո	1	1
Ջրառատ	1	2.7

**Աղյուսակ 2.1.11. Հետիոտնային անցումներում լուսավորվածությունը Ախուրյան համայնքի բնակավայրերում**

**Մոնիթորինգի արդյունքների ամփոփաթեթը Ախուրյան համայնքի համար**

Մոնիթորինգային ցուցանիշներ	Արդյունք
<b>Ցուցանիշ A:</b> Փողոցային լուսավորությամբ ապահովված բնակավայրերի քանակ/համայնքի կազմում ներառված բնակավայրերի քանակ	8/8
<b>Ցուցանիշ B:</b> Փողոցային լուսավորությամբ ապահովված բնակավայրերի բնակիչների մասնաբաժինը համայնքի ընդհանուր բնակչության թվի նկատմամբ	100%
<b>Ցուցանիշ C:</b> Համայնքի՝ փողոցային լուսավորությամբ ապահովվածության աստիճան  <i>C=լուսավորությամբ ապահովված դիտարկված փողոցների երկարություն/ընդամենը դիտարկված փողոցների երկարություն</i>	87.4%
<b>Ցուցանիշ D:</b> Փողոցի երկայնքով լուսավորության հենասյունների քայլ  <i>D=լուսավորության հենասյուներով ապահովված փողոցի երկարություն/տվյալ փողոցում առկա հենասյունների քանակ</i>	46 մետր
<b>Ցուցանիշ E:</b> Սարքին վիճակում գտնվող լուսատուներով կահավորված հենասյունների մասնաբաժին  <i>E=սարքին վիճակում գտնվող լուսատուներով կահավորված հենասյուններ/ընդհանուր հենասյունների թիվ</i>	56%
<b>Ցուցանիշ F:</b> Էներգախնայող (LED) լուսատուների մասնաբաժին ընդհանուր լուսատուների թվի մեջ  <i>F=էներգախնայող լուսատուներ/ընդհանուր լուսատուների թիվ</i>	38%
<b>Ցուցանիշ G:</b> Ճանապարհային պատվածքի միջին լուսավորվածության ցուցանիշ  <i>G=համայնքում արված բոլոր բոլոր չափումների միջին թվաբանական</i>	0.95լք.

## 2.2 Փողոցային լուսավորության համակարգը աշոցք խոշորացված համայնքում

### 2.2.1 Փողոցային լուսավորության ապահովման ոլորտում աշոցք համայնքի հնարավորությունները

Աշոցք խոշորացված համայնքում, համաձայն համայնքի կողմից տրամադրված տվյալների, առկա են թվով 480 լուսավորության հենասյուներ, որոնցից 336-ը կահավորված են լուսատուներով: Համայնքի մաս կազմող բոլոր բնակավայրերում առկա են լուսավորության հենասյուներ բացի Սիգավետ բնակավայրից: Նշված 336 լուսատուներից սարքին վիճակում են գտնվում 313-ը, ընդ որում ոչ սարքին վիճակում գտնվող լուսատուների հիմնական մասը տեղակայված են Զույգաղբյուր և Կարմրավան բնակավայրերում: Լուսավորության համակարգի միացման և անջատման ժամերը նույնն են բոլոր բնակավայրերի համար: Ամառային ամիսներին սահմանված է 21:00-ից 01:00-ն, ձմեռային ամիսներին՝ 17:00-01:00-ն (Աղյուսակ 2.2.1): Համայնքը չունի լուսավորության համակարգի սպասարկման համար նախատեսված տեխնիկա:

Բնակավայր	Լուսավորության հենասյուներ և լուսատուներ			
	Լուսավորության հենասյուների քանակ	Լուսատուներով կահավորված հենասյուների քանակ	Սարքին վիճակում գտնվող լուսատուների քանակ	Լուսավորության համակարգի միացման և անջատման ժամերը
Աշոցք	100	80	80	Ամառային ամիսներ 21:00-01:00 Ձմեռային ամիսներ 17:00-01:00
Մարագյուղ	50	40	40	Ամառային ամիսներ 21:00-01:00 Ձմեռային ամիսներ 17:00-01:00
Բավրա	50	35	35	Ամառային ամիսներ 21:00-01:00 Ձմեռային ամիսներ 17:00-01:00
Սիգավետ	0	0	0	-
Թավշուտ	50	35	35	Ամառային ամիսներ 21:00-01:00 Ձմեռային ամիսներ 17:00-01:00
Ղազանչի	40	25	25	Ամառային ամիսներ 21:00-01:00 Ձմեռային ամիսներ 17:00-01:00
Մեծ Սեփասար	50	32	32	Ամառային ամիսներ 21:00-01:00 Ձմեռային ամիսներ 17:00-01:00
Փոքր Սեփասար	25	19	19	Ամառային ամիսներ 21:00-01:00 Ձմեռային ամիսներ 17:00-01:00
Կրասար	50	32	32	Ամառային ամիսներ 21:00-01:00 Ձմեռային ամիսներ 17:00-01:00
Զույգաղբյուր	40	20	8	Ամառային ամիսներ 21:00-01:00 Ձմեռային ամիսներ 17:00-01:00
Կարմրավան	25	18	7	Ամառային ամիսներ 21:00-01:00 Ձմեռային ամիսներ 17:00-01:00
Ընդամենը	480	336	313	

Աղյուսակ 2.2.1: Աշոցք խոշորացված համայնքի բնակավայրերում առկա լուսավորության հենասյուները, առկա լուսատուները և լուսավորության համակարգի միացման-անջատման ժամերը

**2.2.2 Աշոցք համայնքի բնակչության բավարարվածությունը փողոցային լուսավորության ապահովման ծառայություններից**

Աշոցքում իրականացվել է 137 քանակական դեմ առ դեմ հարցումներ համայնքի բնակիչների հետ՝ ընդգրկելով համայնքի մաս կազմող բոլոր բնակավայրերի բնակիչներին: Ըստ առանձին բնակավայրերի հարցման ենթարկված բնակչության թվի բաշխումը ներկայացված է Աղյուսակ 2.2.2-ում:

Բնակավայր	Մշտական բնակչության թիվը բնակավայրում	Հարցումների քանակ	Ընդհանուրի մեջ մասնաբաժինը
Աշոցք	2888	40	29%
Բավրա	596	14	10%
Զույգաղբյուր	562	11	8%
Թավշուտ	372	9	7%
Կարմրավան	234	7	5%
Կրասար	527	6	4%
Ղազանչի	604	12	9%
Մեծ Սեպասար	933	17	13%
Սարագյուղ	233	6	4%
Սիզավետ	378	9	7%
Փոքր Սեպասար	241	6	4%
Ընդամենը	7568	137	100%


**Աղյուսակ 2.2.2. Իրականացված քանակական դեմ առ դեմ հարցումների քանակն Աշոցք համայնքում**

Համաձայն հարցման արդյունքների՝ համայնքի բնակչության շրջանում փողոցային լուսավորության ապահովումը համարվում է կարևոր հիմնախնդիր: «Ձեր ընտանիքի և Ձեր համայնքի առջև ծառայած մյուս հիմնախնդիրների համեմատ որքանով է Ձեզ համար կարևոր համայնքում փողոցային լուսավորության ապահովումը» հարցին հարցման ենթարկված ընդհանուր բնակչության 59%-ը պատասխանել է՝ «չափազանց կարևոր է», 39%-ը՝ «ավելի շուտ կարևոր է»: Բնակչության միայն 3%-ի համար է այս հիմնախնդիրը իրենց ընտանիքի և համայնքի առջև ծառայած մյուս հիմնախնդիրների համեմատ գնահատվել նվազ կարևոր: Այս ոլորտն առավել կարևորել են Աշոցք, Թավշուտ, Սարագյուղ, Սիզավետ, Փոքր Սեպասար բնակավայրերի բնակիչները (Աղյուսակ 2.2.3):

Բնակավայր	Չափազանց կարևոր է	Ավելի շուտ կարևոր է	Ավելի շուտ կարևոր չէ	Ընդհանրապես կարևոր չէ
Աշոցք	89%	11%	0%	0%
Բավրա	23%	77%	0%	0%
Զույգաղբյուր	27%	73%	0%	0%
Թավշուտ	78%	22%	0%	0%
Կարմրավան	43%	43%	0%	14%
Կրասար	0%	100%	0%	0%
Ղազանչի	17%	83%	0%	0%
Մեծ Սեպասար	67%	20%	7%	7%
Սարագյուղ	83%	17%	0%	0%
Սիզավետ	100%	0%	0%	0%
Փոքր Սեպասար	100%	0%	0%	0%
Ընդամենը	59%	39%	1%	2%


**Աղյուսակ 2.2.3 փողոցային լուսավորության ապահովվածության հիմնախնդրի կարևորությունը համայնքի բնակիչների համար**

Այն հարցին, թե ձեր բնակավայրի ներբնակավայրային գլխավոր փողոցներն արդյոք ապահովված են փողոցային լուսավորության համակարգով, Բավրա, Թավշուտ, Կրասար, Սարագյուղ և Փոքր Սեպասար բնակավայրերի բոլոր բնակիչները պատասխանել են, որ ներբնակավայրային գլխավոր փողոցները լիովին ապահովված են փողոցային լուսավորությամբ: Աշոցքում այս պատասխանն են տվել բնակիչների 90%-ը: Զույգաղբյուր, Կարմրավան և Մեծ Սեպասար բնակավայրերում բնակիչների գերակշիռ մասը պատասխանել է, որ գլխավոր փողոցները մասամբ են ապահովված լուսավորությամբ, իսկ ահա Սիգավեստում բոլոր բնակիչները պատասխանել են, որ լուսավորությունը գլխավոր փողոցներում առհասարակ բացակայում է (Գրաֆիկ 12):




**Գրաֆիկ 11. Ներբնակավայրային գլխավոր փողոցներում լուսավորության առկայությունն ըստ բնակիչների գնահատականների**

Կրասար և Սարագյուղ բնակավայրերի բոլոր բնակիչները նշել են, որ իրենց բնակավայրերի ներբնակավայրային երկրորդական փողոցները և նրբանցքները լիովին ապահովված են լուսավորությամբ: Աշոցքում, Թավշուտում և Փոքր Սեպասարում բնակչության գերակշիռ մասը նշել են, որ երկրորդական փողոցները լիովին ապահովված են լուսավորությամբ, իսկ Զույգաղբյուրում և Ղազանչիում՝ ապահովված են մասնակի: Բավրայում, Կարմրավանում և Մեծ Սեպասարում բնակչության կեսը նշել են, որ երկրորդական փողոցները և նրբանցքները ընդհանրապես ապահովված չեն լուսավորությամբ, իսկ Սիգավեստում՝ բոլոր բնակիչներն են նշել այս պատասխանը (Գրաֆիկ 13):



**Գրաֆիկ 12. Ներքնակավայրային երկրորդական փողոցներում, նրբանցքներում, փակուղիներում լուսավորության առկայությունն ըստ բնակիչների գնահատականների**


Ինչ վերաբերում է միջքնակավայրային ճանապարհներին, ապա միայն Աշոցք և Կրասար բնակավայրերի բնակչության գերակշիռ մասն են նշել, որ այս ճանապարհներն ապահովված են լուսավորությամբ, իսկ Զույգադբյուրի և Ղազանչիի դեպքում՝ մասամբ են ապահովված: Մնացած բոլոր բնակավայրերում բնակչության գերակշիռ մասը նշել է, որ միջքնակավայրային ճանապարհներն ապահովված չեն փողոցային լուսավորությամբ (Գրաֆիկ 14):



**Գրաֆիկ 13. Միջքնակավայրային ճանապարհների երկայնքով լուսավորության առկայությունն ըստ բնակիչների գնահատականների**



«Ընդհանուր առմամբ մոտավոր հաշվարկներով Ձեր գյուղի/քաղաքի փողոցների քանի՞ տոկոսն է ապահովված փողոցային լուսավորությամբ» հարցին ի պատասխան Աշոցքի, Թավշուտի, Կրասարի, Սարազյուղի և Փոքր Սեպասարի բնակավայրերի բնակչության կողմից տրված միջին գնահատականներով բնակավայրերի 80%-ից ավելին ապահովված է լուսավորությամբ: Բավրայում և Կարմրավանում ըստ բնակիչների կարծիքների ապահովված է համապատասխանաբար 70%-ը և 66%-ը: Միջինին մոտ գնահատականներ են տրվել Զույգաղբյուր, Ղազանչի, Մեծ Սեպասար բնակավայրերի բնակիչների կողմից, իսկ ահա Սիզավետում լուսավորության համակարգը ընդհանրապես բացակայում է:



**Գրաֆիկ 14 Բնակավայրերի փողոցների քանի տոկոսն է ապահովված լուսավորությամբ. միջինացված ցուցանիշ ըստ բնակիչների գնահատականների**

Լուսավորության համակարգի միացման և անջատման ժամերի վերաբերյալ հարցին ի պատասխան Աշոցք համայնքի բնակավայրերի որոշ բնակիչները տվել են նույն պատասխանները, որոշ դեպքերում՝ տարբեր: Որպես լուսավորության համակարգի միացման ժամ Բավրա, Թավշուտ, Կրասար, Ղազանչի և Սարազյուղ բնակավայրերի բնակիչները տվել են 20:00 պատասխանը ամռային ամիսների համար, իսկ ձմեռային ամիսների համար 18:00: Աշոցքում, Զույգաղբյուրում, Կարմրավանում, Մեծ Սեպասարում և Փոքր Սեպասարում ձմեռային ամիսների համար բնակիչների կողմից նշված պատասխանների միջոցով կազմել են լուսավորության միացման համար որոշակի ժամանակային միջակայքեր, հիմնականում՝ 19:00-21:00 հատվածում: Ինչ վերաբերում է այս բնակավայրերում ձմեռային ամիսներին լուսավորության միացման ժամերին, ապա այստեղ նշվել են 18:00-20:00 միջակայքում ընկած տարբեր ժամեր: Լուսավորության անջատման համար նույնպես նշվել են տարբեր ժամեր, հիմնականում՝ 00:00, սակայն հնչել են նաև 23:00, 01:00, 02:00 տարբերակները (Աղյուսակ 2.2.4):

Բնակավայր	Ամառային ամիսներ		Ձմեռային ամիսներ	
	Միացման ժամ	Անջատման ժամ	Միացման ժամ	Անջատման ժամ
Աշոցք	20:00-21:00	00:00	18:00-20:00	00:00
Բավրա	20:00	00:00 կամ 01:00	18:00	01:00
Զույգաղբյուր	20:00 կամ 20:30	00:00	18:00	22:00 կամ 00:00
Թավշուտ	20:00	01:00 կամ 02:00	18:00	00:00-02:00
Կարմրավան	20:30 կամ 21:00	00:00	19:00 կամ 20:00	23:00 կամ 00:00
Կրասար	20:00	00:00-02:00	18:00	01:00
Ղազանչի	20:00	00:00	18:00	00:00
Մեծ Սեպասար	19:00-21:00	00:00-02:00	18:00 կամ 19:00	00:00-02:00
Սարագյուղ	20:00	00:00-02:00	18:00	23:00-01:00
Փոքր Սեպասար	19:00 կամ 21:00	00:00	Նոր են գործարկել	

**Աղյուսակ 2.2.4 Աշոցք համայնքում փողոցային լուսավորության միացման և անջատման ժամերն ըստ բնակիչների կողմից տրված պատասխանների**

«Ինչ էք կարծում, միացման/անջատման այդ ժամերը բավարա՞ր են փողոցային լուսավորվածության պատշաճ ապահովման համար» հարցին հարցման ենթարկված բնակչության շուրջ 81%-ը միացման/անջատման ռեժիմը համարել է բավարար, 19%-ը՝ անբավարար: Մյուս բնակավայրերի համեմատ լուսավորության միացման տևողությունը հատկապես անբավարար են համարել Կարմրավան, Բավրա, Մեծ Սեպասար, Ղազանչի բնակավայրերի բնակիչները (Աղյուսակ 2.2.5):

Բնակավայր	Ընդհանրապես բավարար չեն	Ավելի շուտ բավարար չեն	Ավելի շուտ բավարար են	Լիովին բավարար են
Աշոցք	5%	11%	19%	65%
Բավրա	0%	23%	8%	69%
Զույգաղբյուր	0%	18%	36%	45%
Թավշուտ	0%	0%	33%	67%
Կարմրավան	0%	57%	14%	29%
Կրասար	0%	0%	0%	100%
Ղազանչի	8%	17%	50%	25%
Մեծ Սեպասար	0%	29%	59%	12%
Սարագյուղ	0%	0%	0%	100%
Փոքր Սեպասար	0%	17%	0%	83%
Ընդամենը	2%	17%	26%	55%


**Աղյուսակ 2.2.5 Բնակիչների գնահատականները փողոցային լուսավորության միացման տևողության վերաբերյալ**

Բնակչության գերակշիռ մասը համարում է, որ համայնքապետարանն իրականացնում է խափանված լուսատուների փոխարինում անսարքություններ առաջանալուց հետո: Իրականացնում է երբեմն-երբեմն, խնդիրներ առաջանալուց հետո բավականին ուշ տարբերակը հատկապես նշել են Զույգաղբյուր, Կարմրավան և Ղազանչի բնակավայրերի բնակիչների կողմից: Բավրա, Թավշուտ, Կրասար բնակավայրերի բնակիչների գերակշիռ մասը նշել են, որ այս առումով խնդիրներ չեն առաջացել (Աղյուսակ 2.2.6):

Բնակավայր	Ընդհանրապես չի իրականացնում	Իրականացնում է երբեմն-երբեմն, խնդիրներ առաջանալուց հետո բավականին ուշ	Իրականացնում է հաճախ, խնդիրներ առաջանալուց անմիջապես հետո	Խնդիրներ չեն առաջացել մինչ այժմ
Աշոցք	3%	5%	53%	40%
Բավրա	0%	8%	0%	92%
Զույգաղբյուր	0%	82%	18%	0%
Թավշուտ	0%	11%	0%	89%
Կարմրավան	0%	60%	40%	0%
Կրասար	0%	0%	17%	83%
Ղազանչի	0%	42%	58%	0%
Մեծ Մեպասար	0%	12%	59%	29%
Սարագյուղ	0%	0%	50%	50%
Փոքր Մեպասար	0%	0%	50%	50%
Ընդամենը	1%	19%	39%	41%

**Աղյուսակ 2.2.6 Բնակիչների գնահատականները փողոցային լուսատուների սպասարկման վերաբերյալ**

Համայնքի բնակիչներին առաջարկվել է 1-ից 10 բալանոց սանդղակով գնահատել փողոցային լուսավորության ապահովման ոլորտում համայնքապետարանի կողմից մատուցվող ծառայություններից իրենց ընդհանուր բավարարվածությունը: Համաձայն գնահատման արդյունքների՝ Կրասար և Փոքր Մեպասար համայնք բնակիչների կողմից տրվել են առավելագույն 10 միավոր գնահատականներ: 8 միավորով և բարձր են գնահատվել նաև Աշոցք, Բավրա, Թավշուտ, Սարագյուղ բնակավայրերի բնակիչների բավարարվածությունը լուսավորության ոլորտում մատուցվող ծառայություններից: Այս ցուցանիշից մի փոքր ավելի ցածր գնահատական է ստացվել Զույգաղբյուր և Կարմրավան բնակավայրերի համար: Միջինից ցածր գնահատական է տրվել Ղազանչի և Մեծ Մեպասար բնակավայրերի բնակիչների կողմից, իսկ Միզավետում, որտեղ փողոցային լուսավորության համակարգ առկա չէ, գնահատականը կազմել է 1: Համայնքապետարանի միջին գնահատականը ամբողջ խոշորացված համայնքի համար կազմել է **7,02** միավոր հնարավոր 10-ից (Գրաֆիկ 16):



**Գրաֆիկ 15. Փողոցային լուսավորության ապահովման ծառայություններից բնակչության բավարարվածությունը Աշոցք համայնքի բնակավայրերի համար**

Համայնքի բնակիչներին հնարավորություն է տրվել ներկայացնել իրենց առաջարկություններն ուղղված փողոցային լուսավորության ապահովման ծառայության որակի բարելավմանը: Ընդհանուր առմամբ բնակիչների կողմից առաջարկություններն այս ոլորտում քիչ են եղել: Ղազանչի և Բավրա բնակավայրի բնակիչներն առաջարկել են լուսավորել նաև երկրորդական փողոցները, Աշոցք, Բավրա, Ղազանչի բնակավայրերի բնակիչներն առաջարկել են ավելացնել լուսատուների թիվը: Սիգավետում առաջարկել են լուսավորությամբ ապահովել գոնե գլխավոր փողոցները և տեղադրել լուսատուներ: Կարմրավան բնակավայրում առաջարկել են իրականացնել խափանված լուսատուների ժամանակին սպասարկում, իսկ Աշոցքում և Բավրայում որոշ փողոցներում լուսավորությունն անջատել ավելի ուշ (Աղյուսակ 2.2.7):

Առաջարկություններ	Աշոցք	Բավրա	Զույգադրյուր	Թավշուտ	Կարմրավան	Կրասար	Ղազանչի	Մեծ Մեպասար	Սարագյուղ	Սիգավետ	Փոքր Մեպասար
Ավելացնել լուսատուները	2	3	0	0	0	0	1	0	0	2	0
Լուսավորել երկրորդական փողոցները	0	2	0	0	0	0	5	0	0	0	0
Լուսավորություն իրականացվի գոնե գլխավոր փողոցում	0	0	0	0	0	0	0	0	0	4	0
Խափանված լուսատուների ժամանակին սպասարկում	0	0	0	0	1	0	0	0	0	0	0
Որոշ փողոցներում լուսավորությունը ավելի ուշ անջատել	1	1	0	0	0	0	0	0	0	0	0

**Աղյուսակ 2.2.7: Փողոցային լուսավորության ոլորտի բարելավմանն ուղղված առաջարկներ համայնքի բնակավայրերից**

### 2.2.3 Աշոցք խոշորացված համայնքում փողոցային լուսավորության ապահովման ոլորտում մոնիթորինգի արդյունքներ

Լուսավորության համակարգի մոնիթորինգի շրջանակներում Աշոցք համայնքում դիտարկման են ենթարկվել ընդհանուր առմամբ 52 փողոցներ, որոնցից 18-ը եղել են գլխավոր փողոցներ, 33-ը՝ երկրորդական, իսկ 1-ը՝ միջբնակավայրային: Դիտարկման ենթարկված փողոցներից 25-ը տեղակայված են եղել բնակավայրերի կենտրոնական հատվածներում, իսկ 27-ը՝ ծայրամասերում: Համայնքում դիտարկման ենթարկված փողոցների ընդհանուր երկարությունը կազմել է 26,491 մետր (Աղյուսակ 2.2.8):

Բնակավայր	Դիտարկված փողոցների երկարություն (մետր)	Փողոցի տեղադիրքը բնակավայրում		Դիտարկված փողոցի տիպը		
		Կենտրոն	Ծայրամաս	Գլխավոր փողոց	Երկրորդական փողոց	Միջբնակ.
Աշոցք	5131	4	5	2	6	1
Բավրա	2295	2	3	2	3	0
Զույգադրյուր	540	2	0	2	0	0
Թավշուտ	3520	2	4	1	5	0
Կարմրավան	1060	0	2	1	1	0
Կրասար	2130	2	4	2	4	0
Ղազանչի	2470	5	1	3	3	0
Մեծ Մեպասար	2285	2	4	1	5	0
Սարազյուղ	1860	2	1	1	2	0
Սիզավետ	3050	2	2	2	2	0
Փոքր Մեպասար	2150	2	1	1	2	0
Ընդամենը	26491	25	27	18	33	1

#### Աղյուսակ 2.2.8 Դիտարկման ենթարկված փողոցներն Ախուրյան համայնքում

Դիտարկված 52 փողոցներից 28-ում կամ ընդհանուր առմամբ դիտարկված փողոցների 54%-ում առկա են եղել լուսավորության հենասյուներ: Եթե այս տվյալը ներկայացնենք փողոցների երկարության ցուցանիշով, ապա դիտարկված ընդհանուր 26.49 կմ երկարությամբ փողոցներից լուսավորության հենասյուներով են ապահովված եղել ընդհանուր առմամբ փողոցների 14.99 կմ հատվածը համ դիտարկված ընդհանուր փողոցների երկարության 56.5%-ը<sup>4</sup>: Մոնիթորինգի այցելության ժամանակ լուսավորություն միացված է եղել 17 փողոցում, որը կազմում է ընդհանուր առմամբ 9,7 կմ ճանապարհ. ընդհանուր առմամբ դիտարկված ճանապարհների երկարության 61%-ը կամ լուսավորության հենասյուներով ապահովված ճանապարհների 37%-ում (Աղյուսակ 2.2.9):

<sup>4</sup> Ցուցանիշը մեկնաբանելիս անհրաժեշտ է նկատի ունենալ, որ դիտարկված փողոցների ցանկում պարտադիր ներառված են եղել գլխավոր փողոցները, որոնք սովորաբար ապահովված են լինում փողոցային լուսավորությամբ, ուստի ցուցանիշը զուտ պատահականության սկզբունքով ընտրված փողոցների համար հաշվարկված ցուցանիշ չէ:

Բնակավայր	Փողոցում լուսավորության հենասյուների առկայություն		Փողոցում լուսավորության հենասյուների առկայություն ըստ փողոցի երկարության		Միացված են եղել լուսատուները	
	Այո	Ոչ	Սպահովված է	Սպահովված չէ	Այո	Ոչ
Աշոցք	8	1	4906	225	8	1
Բավրա	3	2	1615	680	3	2
Զույգաղբյուր	1	1	200	340	1	1
Թավշուտ	0	6	0	3520	0	6
Կարմրավան	2	0	1060	0	1	1
Կրասար	6	0	2130	0	0	6
Ղազանչի	2	4	1070	1400	1	5
Մեծ Մեպասար	0	6	0	2285	0	6
Սարագյուղ	3	0	1860	0	3	0
Միգավետ	0	4	0	3050	0	4
Փոքր Մեպասար	3	0	2150	0	0	3
Ընդամենը	28	24	14991	11500	17	35

**Աղյուսակ 3.2.9: Փողոցներում լուսավորության հենասյուների առկայություն և լուսավորում**

Համայնքում մոնիթորինգի կողմից ընդհանուր առմամբ արձանագրվել է 269 լուսավորության հենասյուն, որոնցից 92-ը տեղակայված են եղել Աշոցք գյուղում, 52-ը՝ Ղազանչիում, Բավրայում՝ 34-ը: Համեմատաբար ավելի մեծ թվով հենասյուներ են առկա եղել նաև Կրասարում, Սարագյուղում և Փոքր Մեպասարում: Արձանագրված հենասյուների 82%-ը եղել են սպասարկող հենասյուներ (կահավորված են եղել սարքին վիճակում գտնվող լուսատուով): 71 լուսավորության հենասյուներ չեն ունեցել կանթեղ ամրացնելու հարմարանք կամ կահավորված են եղել ոչ սարքին վիճակում գտնվող լուսատուով: 5 հենասյուներ եղել են կրկնակի լուսատուով կահավորված, մնացած բոլոր հենասյուները կահավորված են եղել մեկ լուսատուով: Համաձայն մոնիթորինգի գնահատականների լուսատուների 68%-ը եղել են էներգախնայող (LED) լուսատուներ: Առավել մեծ թվով էներգախնայող լուսատուներ առկա են եղել Աշոցք, Բավրա, Ղազանչի, Սարագյուղ բնակավայրերում: Հենասյուների տեղակայման քայլը միջինում կազմել է 74 մետր: Այս ցուցանիշն առավել փոքր է Զույգաղբյուր, Ղազանչի, Աշոցք, Բավրա բնակավայրերում: Ամենամեծ ցուցանիշն արձանագրվել է Փոքր Մեպասարում՝ կազմելով 179 մետր (Աղյուսակ 2.2.10):

Բնակավայր	Առկա հենասյուների քանակ	Սպասարկող հենասյուներ	Լուսատու չունեցող/ոչ սարքին վիճակում գտնվող լուսատու ունեցող հենասյուների քանակ	Էներգախնայող (LED) լուսատուների քանակ	Հենասյուների տեղակայման քայլ (մետր)
Աշոցք	92	82	12	72	51
Բավրա	34	33	2	28	58
Զույգաղբյուր	7	4	8	4	29
Կարմրավան	14	12	4	0	75
Կրասար	25	22	11	15	81
Ղազանչի	52	24	28	24	21
Սարագյուղ	24	24	0	24	80
Փոքր Սեպասար	21	20	6	17	179
Ընդամենը/միջինում	269	221	71	184	74

**Աղյուսակ 2.2.10. Հենասյուների քանակը և լուսատուների առկայությունը բնակավայրերում**

Այն փողոցներում որտեղ երեկոյան ժամերին միացված է եղել փողոցային լուսավորություն, իրականացվել է փողոցի լուսավորվածության չափում լյուքսմետր կոչվող սարքի միջոցով: Չափումները հիմնականում իրականացվել են երեկոյան 21:00-ից 21:30 հատվածում: Համաձայն ստացված արդյունքների առավելագույն լուսավորված հատվածում լուսավորվածության չափը համայնքում առավելագույնը եղել է 19 լյուքս, որն արձանագրվել է Աշոցք բնակավայրում: 17լք առավելագույն լուսավորվածությունն արձանագրվել է Բավրայում, 7լք՝ Սարագյուղում, մնացած բնակավայրերում լուսավորվածությունը կազմել է 4լք: Ինչ վերաբերում է փողոցների միջին լուսավորվածության չափումներին, ապա այստեղ լուսավորվածությունն առավել բարձր է եղել Աշոցք և Բավրա բնակավայրերում: Միջին լուսավորվածության ցուցանիշը կազմել է 6,21 լք. (Աղյուսակ 2.2.11): Լուսավորվածությունն առավել բարձր է եղել Աշոցք, Բավրա և Սարագյուղ բնակավայրերում, իսկ ամենացածրը եղել է Ղազանչիում:

Բնակավայր	Առավելագույն լուսավորված հատվածում լուսավորվածության չափը (լյուքս)	Փողոցների լուսավորվածության չափը միջինում (լյուքս)
Աշոցք	19	7.83
Բավրա	17	7.33
Զույգաղբյուր	4	3.00
Կարմրավան	4	2.33
Ղազանչի	4	1.67
Սարագյուղ	7	4.67
Առավելագույնը/միջինում	19	6.21

**Աղյուսակ 2.2.11. Ճանապարհային պատվածքի լուսավորվածությունը Ախուրյան համայնքի բնակավայրերում**

Մոնիթորինգի ընթացքում ճանապարհային պատվածքի լուսավորվածության չափումներ են իրականացնել նաև հետիոտնային անցումների հատվածներում, քանի որ համաձայն նորմատիվային պահանջների անցման գոտիների համար լույսի աղբյուրի գունավորությունը պետք է լինի ցայտուն՝ համեմատած երթևեկելի մասում լուսավորման համար կիրառվող կանթեղների հետ: Հետիոտնային անցում առկա է եղել միայն Աշոցքում, որտեղ լուսավորվածության միջին չափը եղել է 21լք, որը գերազանցում է Աշոցքի փողոցների լուսավորվածության միջին չափը:

**Մոնիթորինգի արդյունքների ամփոփաթեթը Աշոցք համայնքի համար՝**

Մոնիթորինգային ցուցանիշ	Արդյունք
<b>Ցուցանիշ A:</b> Փողոցային լուսավորությամբ ապահովված բնակավայրերի քանակ/համայնքի կազմում ներառված բնակավայրերի քանակ	10/11
<b>Ցուցանիշ B:</b> Փողոցային լուսավորությամբ ապահովված բնակավայրերի բնակիչների մասնաբաժինը համայնքի ընդհանուր բնակչության թվի նկատմամբ	95%
<b>Ցուցանիշ C:</b> Համայնքի՝ փողոցային լուսավորությամբ ապահովվածության աստիճան <i>C=լուսավորությամբ ապահովված դիտարկված փողոցների երկարություն/ընդամենը դիտարկված փողոցների երկարություն</i>	57%
<b>Ցուցանիշ D:</b> Փողոցի երկայնքով լուսավորության հենասյուների քայլ <i>D=լուսավորության հենասյուներով ապահովված փողոցի երկարություն/տվյալ փողոցում առկա հենասյուների քանակ</i>	74 մետր
<b>Ցուցանիշ E:</b> Սարքին վիճակում գտնվող լուսատուներով կահավորված հենասյուների մասնաբաժին <i>E=սարքին վիճակում գտնվող լուսատուներով կահավորված հենասյուներ/ընդհանուր հենասյուների թիվ</i>	82%
<b>Ցուցանիշ F:</b> Էներգախնայող (LED) լուսատուների մասնաբաժին ընդհանուր լուսատուների թվի մեջ <i>F=էներգախնայող լուսատուներ/ընդհանուր լուսատուների թիվ</i>	83%
<b>Ցուցանիշ G:</b> Ճանապարհային պատվածքի միջին լուսավորվածության ցուցանիշ <i>G=համայնքում արված բոլոր բոլոր չափումների միջին թվաբանական</i>	6.21լք



## 2.3 Փողոցային լուսավորության համակարգը Թումանյան խոշորացված համայնքում

### 2.3.1 Փողոցային լուսավորության ապահովման ոլորտում Թումանյան համայնքի հնարավորությունները

Համաձայն համայնքի կողմից տրամադրված տվյալների՝ Թումանյան համայնքում առկա են թվով 173 լուսավորության հենասյուներ, որոնց հիմնական մասը տեղակայված է Թումանյան քաղաքում՝ թվով 85-ը: Մյուս համայնքները, որտեղ համեմատաբար մեծ թիվ են կազմում լուսավորության հենասյուները Մարց և Շամուտ բնակավայրերն են՝ համապատասխանաբար 26 և 13 հենասյուն: Այնուամենայնիվ լուսատուներով կահավորված են միայն Թումանյան, Լորուտ և Մարց բնակավայրերը: Թումանյան համայնքում ամառային ամիսներին լուսավորությունը միացվում է 21:00-ին, իսկ ձմեռային ամիսներին 18:00-ին և անջատվում է 00:00-ին: Լորուտում լուսավորության միացման և անջատման ժամերն են ամառային ամիսներին՝ 20:00-07:00, ձմեռային ամիսներին՝ 18:00-08:00-ն (Աղյուսակ 2.3.1): Համայնքը չունի լուսավորության համակարգի ապասարկման համար նախատեսված տեխնիկա:

Բնակավայր	Լուսավորության հենասյուներ և լուսատուներ			
	Լուսավորության հենասյուների քանակ	Լուսատուներով կահավորված հենասյուների քանակ	Սարքին վիճակում գտնվող լուսատուների քանակ	Լուսավորության համակարգի միացման և անջատման ժամերը
Թումանյան	85	85	85	Ամառային ամիսներ 21:00-00:00 Ձմեռային ամիսներ 18:00-00:00
Աթան	2	0	0	-
Ահնիձոր	4	0	0	-
Լորուտ	13	13	13	Ամառային ամիսներ 20:00-07:00 Ձմեռային ամիսներ 18:00-08:00
Շամուտ	26	0	0	-
Քարինջ	3	0	0	-
Մարց	40	17	0	Ամառային ամիսներ 21:00-00:00 Ձմեռային ամիսներ 19:00-00:00
Ընդամենը	173	98	98	-

**Աղյուսակ 2.3.1: Թումանյան խոշորացված համայնքի բնակավայրերում առկա լուսավորության հենասյուները, առկա լուսատուները և լուսավորության համակարգի միացման-անջատման ժամերը**

### 2.3.2 Թումանյան համայնքի բնակչության բավարարվածությունը փողոցային լուսավորության ապահովման ծառայություններից

Թումանյան համայնքում իրականացվել է 134 քանակական դեմ առ դեմ հարցումներ համայնքի բնակիչների հետ՝ ընդգրկելով համայնքի մաս կազմող բոլոր բնակավայրերի բնակիչներին: Ըստ առանձին բնակավայրերի հարցման ենթարկված բնակչության թվի բաշխումը ներկայացված է Աղյուսակ 2.3.2-ում:

Բնակավայր	Մշտական բնակչության թիվը բնակավայրում	Հարցումների քանակ	Ընդհանուրի մեջ մասնաբաժինը
Թումանյան	1866	46	34%
Աթան	202	9	7%
Ահնիձոր	182	8	6%
Լորուտ	1012	30	22%
Շամուտ	230	16	12%
Քարինջ	634	9	7%
Մարց	495	16	12%
Ընդամենը	4621	134	100%

**Աղյուսակ 4.3.2. Իրականացված քանակական դեմ առ դեմ հարցումների քանակ Թումանյան համայնքում**


Համաձայն հարցման արդյունքների՝ համայնքի բնակչության շրջանում փողոցային լուսավորության ապահովումը համարվում է կարևոր հիմնախնդիր: «Ձեր ընտանիքի և Ձեր համայնքի առջև ծառայած մյուս հիմնախնդիրների համեմատ որքանով է Ձեզ համար կարևոր համայնքում փողոցային լուսավորության ապահովումը» հարցին հարցման ենթարկված ընդհանուր բնակչության 75%-ը պատասխանել է՝ «չափազանց կարևոր է», 20%-ը՝ «ավելի շուտ կարևոր է»: Բնակչության միայն 5%-ի համար է այս հիմնախնդիրը իրենց ընտանիքի և համայնքի առջև ծառայած մյուս հիմնախնդիրների համեմատ գնահատվել նվազ կարևոր: Այս ոլորտն առավել կարևորել են Աթան, Ահնիձոր, Լորուտ և Քարինջ բնակավայրերի բնակիչները (Աղյուսակ 2.2.3):

Բնակավայր	Չափազանց կարևոր է	Ավելի շուտ կարևոր է	Ավելի շուտ կարևոր չէ	Ընդհանրապես կարևոր չէ
Թումանյան	80%	17%	2%	0%
Աթան	89%	11%	0%	0%
Ահնիձոր	88%	13%	0%	0%
Լորուտ	90%	7%	3%	0%
Շամուտ	31%	56%	6%	6%
Քարինջ	86%	14%	0%	0%
Մարց	56%	31%	13%	0%
Ընդամենը	75%	20%	4%	1%

**Աղյուսակ 2.2.3 փողոցային լուսավորության ապահովվածության հիմնախնդրի կարևորությունը համայնքի բնակիչների համար**


Բնակիչներին առաջարկվել է գնահատել, թե իրենց համայնքի ներբնակավայրային և միջբնակավայրային փողոցները որքանով են ապահովված փողոցային լուսավորությամբ՝ առաջարկվելով գնահատման համար ընտրել «լիովին ապահովված են», «մասամբ ապահովված են» կամ «ընդհանրապես ապահովված չեն» տարբերակներից որևէ մեկը: Համաձայն արդյունքների՝ Աթան, Ահնիձոր, Շամուտ գյուղներում բոլոր բնակիչները նշել են, որ իրենց բնակավայրերում լուսավորություն չկա: Թումանյանում հարցման ենթարկված բնակչության 80%-ը համարում է, որ ներհամայնքային գլխավոր փողոցները լիովին ապահովված են փողոցային լուսավորությամբ, Մարցում այսպես է կարծում 44%-ը, Քարինջում՝ 22%: Լորուտում հարցման ենթարկված բնակչության 97%-ը համարում է, որ իրենց բնակավայրերի գլխավոր

փողոցներն ապահովված են լուսավորությամբ, Քարինջում այս կարծիքն ունի հարցման ենթարկված բնակչության 56%-ը, Մարցում՝ 50% (Գրաֆիկ 17):




**Գրաֆիկ 16. Ներբնակավայրային գլխավոր փողոցներում լուսավորության առկայությունն ըստ բնակիչների գնահատականների**

Ի տարբերություն ներբնակավայրային գլխավոր փողոցների՝ ներբնակավայրային երկրորդական փողոցների և նրբանցքների համար տրված գնահատականներն առավել բացասական են բոլոր բնակավայրերի համար՝ բացառությամբ Թումանյան բնակավայրի, որտեղ առավելապես գերակշռել են «լիովին ապահովված են» կամ «մասամբ ապահովված են» տարբերակները: Քարինջում և Մարցում այս վերջին տարբերակն են նշել համապատասխանաբար հարցման ենթարկված բնակիչների 11%-ը և 19%-ը (Գրաֆիկ 18):



**Գրաֆիկ 17. Ներքնակավայրային երկրորդական փողոցներում, նրբանցքներում, փակուղիներում լուսավորության առկայությունն ըստ բնակիչների գնահատականների**


Ինչ վերաբերում է միջբնակավայրային ճանապարհների երկայնքով լուսավորության առկայությանը, ապա գրեթե բոլոր բնակավայրերի բնակիչների կողմից տրվել են բացասական գնահատականներ: Միայն Թումանյան քաղաքում բնակիչների 14%-ը նշել է, որ միջբնակավայրային ճանապարհները լիովին ապահովված են լուսավորությամբ, իսկ 11%-ը՝ մասամբ են ապահովված: Մարցում այս վերջին կարծիքն է արտահայտել հարցման ենթարկված բնակչության 6%-ը (Գրաֆիկ 19):



**Գրաֆիկ 18. Միջբնակավայրային ճանապարհների երկայնքով լուսավորության առկայությունն ըստ բնակիչների գնահատականների**

Բնակիչներին հարց է տրվել, թե իրենց կարծիքով ընդհանուր առմամբ մոտավոր հաշվարկներով իրենց բնակավայրի փողոցների քանի՞ տոկոսն է ապահովված փողոցային լուսավորությամբ, ինչին ի պատասխան

տրված գնահատականների միջինացված արժեքները ներկայացված են Գրաֆիկ 10-ում: Լուսավորված է միայն Թումանյան բնակավայրը, որտեղ համաձայն բնակիչների կողմից տրված գնահատականների լուսավորված է փողոցների 74%-ը: Մարցում միջին գնահատականը կազմել է 45%, Քարինջում՝ 21%, իսկ Լորուտում և Աթանում համապատասխանաբար 14% և 3% (Գրաֆիկ 20):



**Գրաֆիկ 19. Բնակավայրերի փողոցների քանի տոկոսն է ապահովված լուսավորությամբ. միջինացված ցուցանիշ ըստ բնակիչների գնահատականների**

«Ինչ էք կարծում, միացման/անջատման այդ ժամերը բավարարո՞ւ են փողոցային լուսավորվածության պատշաճ ապահովման համար» հարցին հարցման ենթարկված բնակչության շուրջ 82%-ը համարել է բավարար, 18%-ը՝ անբավարար: Լուսավորության միացման տևողությունը հատկապես անբավարար են համարել Քարինջ բնակավայրի բնակիչները (2.3.5)

Բնակավայր	Ընդհանրապես բավարար չեն	Ավելի շուտ բավարար չեն	Ավելի շուտ բավարար են	Լիովին բավարար են
Թումանյան	4%	11%	41%	43%
Լորուտ	7%	10%	67%	17%
Քարինջ	50%	0%	33%	17%
Մարց	0%	19%	75%	6%
Ընդամենը	7%	11%	54%	28%


**Աղյուսակ 2.3.5 Բնակիչների գնահատականները փողոցային լուսավորության միացման տևողության վերաբերյալ**

«Արդյո՞ք համայնքապետարանն իրականացնում է փողոցային լուսատուների սպասարկում, խափանված լուսատուների փոխարինման աշխատանքներ» հարցին բնակիչների 14%-ը նշել է, որ «ընդհանրապես չի իրականացնում», 27%-ը՝ «իրականացնում է երբեմն-երբեմն, ինդիվիդուալ առաջանալուց հետո բավականին ուշ», 34%-ը՝ «իրականացնում է հաճախ, ինդիվիդուալ առաջանալուց անմիջապես հետո»: Հարցման ենթարկված բնակիչների 25%-ը նշել է, որ մինչ տվյալ պահը ինդիվիդուալ չեն առաջացել (Աղյուսակ 2.3.6):

Բնակավայր	Ընդհանրապես չի իրականացնում	Իրականացնում է երբեմն-երբեմն, խնդիրներ առաջանալուց հետո բավականին ուշ	Իրականացնում է հաճախ, խնդիրներ առաջանալուց անմիջապես հետո	Խնդիրներ չեն առաջացել մինչ այժմ
Թումանյան	0%	38%	60%	2%
Աթան	100%	0%	0%	0%
Լորուտ	4%	0%	11%	86%
Քարինջ	20%	20%	60%	0%
Մարց	19%	63%	13%	6%
Ընդամենը	14%	27%	34%	25%

**Աղյուսակ 2.3.6 Բնակիչների գնահատականները փողոցային լուսատուների սպասարկման վերաբերյալ**

Համայնքի բնակիչներին առաջարկվել է 1-ից 10 բալանոց սանդղակով գնահատել Փողոցային լուսավորության ապահովման ոլորտում համայնքապետարանի կողմից մատուցվող ծառայություններից իրենց ընդհանուր բավարարվածությունը: Այն բնակավայրերում, որտեղ առկա չէ փողոցային լուսավորության ապահովման ծառայություններ, բնակիչների կողմից տրվել է նվազագույն բացասական գնահատական, որոնք են Աթանը, Ահնիձորը, Շամուտը: Լորուտի և Քարինջի դեպքում նույնպես գնահատականները բավականին ցածր են՝ համապատասխանաբար 2.8 միավոր և 3.88 միավոր: Միայն Թումանյան և Մարց բնակավայրերի դեպքում է բնակիչների կողմից տրվել միջինից բարձր գնահատական. Թումանյան համայնքի դեպքում տրվել է 7.83 միավոր, իսկ Մարցի դեպքում՝ 6.25: Համայնքապետարանի միջին գնահատականը ամբողջ խոշորացված համայնքի համար կազմել է **4,58** միավոր հնարավոր 10-ից (Գրաֆիկ 21):



**Գրաֆիկ 20. Փողոցային լուսավորության ապահովման ծառայություններից բնակչության բավարարվածությունը Թումանյան համայնքի բնակավայրերի համար**

Հարցման այն մասում, երբ բնակիչներին հնարավորություն է տրվել ներկայացնել առաջարկություններ ուղղված փողոցային լուսավորության ապահովման ծառայությունների որակի բարելավմանը, բնակիչների կողմից առավել հաճախ նշվել է ավելացվի լուսավորության հենասյուների քանակը/համայնքն ապահովվի

լուսավորությամբ առաջարկը՝ հատկապես Լորուտ բնակավայրի բնակիչների կողմից: Այս բնակավայրի բնակիչները նաև առաջարկել են, որ լուսավորություն լինի ամբողջ բնակավայրի տարածքում՝ ներառելով նաև երկրորդական փողոցները: Ահնիձոր և Շամուտ բնակավայրերի բնակիչներն առաջարկել են, որ գոնե լուսավորություն ապահովվի գլխավոր փողոցների երկայնքով: Երկրորդական փողոցների լուսավորման հարցը բարձրացվել է նաև Թումանյան և Մարց բնակավայրերի բնակիչների կողմից, իսկ Թումանյան քաղաքում նաև առաջարկել են, որ լուսավորությամբ ապահովվեն նաև բակային հատվածները, շքամուտքերը: Համայնքի բնակիչների կողմից բարձրացված մյուս առաջարկությունները ներկայացված են Աղյուսակ 2.3.7-ում:

Առաջարկություն	Թումանյան	Աթան	Ահնիձոր	Լորուտ	Շամուտ	Քարինջ	Մարց
Ավելացվի լուսավորության հենասյուների քանակը/համայնքն ապահովվի լուսավորությամբ	4	6	1	17	2	4	1
Ամբողջ բնակավայրի տարածքն ապահովված լինի լուսավորությամբ	0	2	0	8	1	2	1
Լուսավորություն առկա լինի նաև երկրորդական փողոցներում	5	1	0	1	0	1	3
Գոնե գլխավոր փողոցներն ապահովված լինեն լուսավորությամբ	0	0	6	1	3	0	0
Լուսավորությամբ ապահովվեն նաև բակային հատվածները, շքամուտքերը	2	0	0	0	0	0	0
Պահպանեն միացման-անջատման գրաֆիկը	0	0	0	0	0	0	2
Խափանված լուսատուները ժամանակին փոխարինվեն	0	0	0	0	0	0	2
Լուսավորությունը միացված լինի տարվա բոլոր ամիսներին	0	0	0	0	0	0	1
Լուսավորությունը միացված լինի ամեն օր	0	0	0	0	0	0	1
Առավել երկար ժամանակով միացված լինի լուսավորությունը	1	0	0	0	0	0	0
Լուսավորություն առկա լինի կամրջի վրա	1	0	0	0	0	0	0
Հրապարակներում ավելի շատ տեղադրվեն լուսատուներ՝ նստատեղերի մոտ	1	0	0	0	0	0	0
Վթարային սյուները փոխարինվեն	1	0	0	0	0	0	0

**Աղյուսակ 2.3.7: Փողոցային լուսավորության ոլորտի բարելավմանն ուղղված առաջարկներ համայնքի բնակավայրերի**

### 2.3.3 Թումանյան խոշորացված համայնքում փողոցային լուսավորության ապահովման ոլորտի մոնիթորինգի արդյունքներ

Թումանյան համայնքում դիտարկման են ենթարկվել ընդհանուր առմամբ 30 փողոցներ, որոնցից 12-ը եղել են գլխավոր փողոցներ, իսկ 18-ը՝ երկրորդական: Համայնքում դիտարկման ենթարկված փողոցների ընդհանուր երկարությունը կազմել է 16,591կմ: Դիտարկված 30 փողոցներից լուսավորության հենասյուներ առկա են եղել 12-ում կամ ընդամենը դիտարկված փողոցների 40%-ում: Դիտարկված ընդհանուր 16,591կմ երկարությամբ փողոցներից լուսավորության հենասյուներով են ապահովված եղել ընդհանուր առմամբ փողոցների 6.6 կմ հատվածը համ դիտարկված ընդհանուր փողոցների երկարության 39%-ը: Մոնիթորների այցելության ժամանակ լուսավորություն միացված է եղել դիտարկված ընդհանուր փողոցների երկարության 35%-ում կամ 5.9 կմ հատվածում (Աղյուսակ 2.3.1):

Բնակավայր	Փողոցներում լուսավորության առկայություն (քանակ)		Փողոցներում լուսավորության առկայություն (երկարություն, մետր)		Միացված է եղել լուսավորությունը (երկարություն, մետր)
	Առկա են հենասյուներ	Առկա չեն հենասյուներ	Առկա են հենասյուներ	Առկա չեն հենասյուներ	
Թումանյան	8	2	5038	2215	5038
Աթան	1	1	300	350	0
Ահնիձոր	1	2	450	370	0
Լորուտ	1	0	350	0	350
Մարց	1	3	500	820	500
Շամուտ	0	2	0	700	0
Քարինջ	0	8	0	5858	0
Ընդամենը	12	18	6638	7378	5888

#### Աղյուսակ 2.3.1. Փողոցներում լուսավորության հենասյուների առկայություն և լուսավորում

Հենասյուներով ապահովված են եղել միայն Աթան, Ահնիձոր, Թումանյան, Լորուտ և Մարց համայնքներում դիտարկված փողոցները: Թումանյանում դիտարկված 10 փողոցներից 8-ը ապահովված են եղել լուսավորության հենասյուներով: Աթան, Ահնիձոր, Լորուտ և Մարց համայնքներում այդպիսի փողոցների թիվը մեկն է: Ընդհանուր առմամբ մոնիթորների կողմից հաշվարկվել է թվով 101 լուսավորության հենասյուներ, որոնցից 25-ը չեն ունեցել լուսատուներ կամ կահավորված են եղել ոչ սարքին վիճակում գտնվող լուսատուներով (ընդհանուր լուսատուների 25%-ը): Աթանում առկա 3 հենասյուներից և ոչ մեկը կահավորված չի եղել սարքին վիճակում գտնվող լուսատուով: Ամենամեծ թվով հենասյուների քանակը, որոնք կահավորված չեն եղել լուսատուներով կամ կահավորված են եղել ոչ սարքին վիճակում գտնվող լուսատուներով, արձանագրվել է Մարց համայնքում, որտեղ չեն սպասարկել հենասյուների 55%-ը (Աղյուսակ 2.3.2): Ընդհանուր առմամբ հենասյուների տեղակայման միջին խտությունը դիտարկված փողոցների երկայնքով կազմել է 121 մետր<sup>5</sup>:

<sup>5</sup> Ցուցանիշը հաշվարկվել է դիտարկման ենթարկված փողոցների ընդհանուր երկարությունը (որտեղ առկա են եղել լուսավորության հենասյուներ) հարաբերելով տվյալ փողոցում առկա հենասյուների քանակի վրա



Բնակավայր	Առկա հենասյուների քանակ	Լուսատու չունեցող/ոչ սարքին վիճակում գտնվող լուսատու ունեցող հենասյուների քանակ	Հենասյուների տեղակայման միջին խտություն (մետր)
Աթան	3	0	100
Ահնիձոր	3	3	150
Թումանյան	42	1	146
Լորուտ	15	0	23
Մարց	38	21	13
Ընդամենը/միջինում	101	25	121

**Աղյուսակ 2.3.2 Հենասյուների քանակը և լուսատուների առկայությունը բնակավայրերում**

Դիտարկված բոլոր հենասյուները եղել են մեկ լուսատուով կահավորված: Լամպ ամրացնելու հարմարանք չունեցող հենասյուներ առկա չեն եղել: Համաձայն մոնիթորների գնահատականների բոլոր լուսատուները եղել են էներգախնայող (LED) լուսատուներ:

Այն փողոցներում, որտեղ միացված է եղել փողոցային լուսավորությունը չափվել է նաև լուսավորվածության չափը: Դիտարկումն իրականացվել է փողոցի ամենաշատ լուսավորված հատվածում (որը որոշվել է ակնադիտական մեթոդով) և փողոցի երեք մասերում<sup>6</sup>: Փողոցների առավելագույն լուսավորված հատվածում առավելագույն լուսաքի չափը արձանագրվել է Թումանյան քաղաքում՝ 71 լուսաք: Միջին լուսավորվածության չափը Թումանյանում կազմել է 4.21 լուսաք, ինչը նշանակալի ցածր է սահմանված նորմերից, եթե հաշվի առնենք, որ այստեղ դիտարկված հիմնական ճանապարհները «Գ2» տիպի ճանապարհներ են<sup>7</sup> և այստեղ ճանապարհային պատվածքի միջին լուսավորվածությունը պետք է լինի ոչ պակաս քան 10 լուսաք: Մարցում արձանագրված առավելագույն լուսավորվածությունը եղել է 24 լուսաք, մինչդեռ միջին լուսավորվածությունը 3.33 լուսաք: Այստեղ նույնպես ինչպես և Մարցում լուսավորվածության չափը չի համապատասխանում սահմանված նորմատիվներին հաշվի առնելով, որ գյուղական բնակավայրերում բնակելի կառուցմապատման հիմնական փողոցների համար ճանապարհային պատվածքի լուսավորվածության նվազագույն շեմ սահմանված է 6 լուսաքը, իսկ երկրորդական փողոցների և նրբանցքների համար՝ 4 լուսաքը (Աղյուսակ 2.3.3):

Բնակավայր	Առավելագույն լուսավորված հատվածում լուսաքի չափը	Փողոցների լուսավորվածության միջին լուսաքի չափը
Թումանյան	71	4.21
Լորուտ	4	0.33
Մարց	24	3.33
Առավելագույնը/միջինում	71	<b>3.73</b>

**Աղյուսակ 2.3.3 Ճանապարհային պատվածքի լուսավորվածության չափերը Թումանյան համայնքի բնակավայրերում**

<sup>6</sup> Տես առավել մանրամասն Մեթոդաբանություն բաժնում

<sup>7</sup> Տրանսպորտային և հետիոտնային կապեր բնակելի շրջանների և միկրոշրջանների սահմաններում, ելք դեպի կենտրոնի մայրուղային փողոցներ:

Մոնիթորինգի ընթացքում նախատեսվում էր ճանապարհային պատվածքի լուսավորվածության չափումներ իրականացնել նաև հետիոտնային անցումների հատվածներում, քանի որ այստեղ նորմատիվները տարբերվում են, սակայն Թումանյան համայնքում դիտարկված 30 փողոցներից և ոչ մեկում չեն եղել անցման նշանով կահավորված և գծանշված հետիոտնային անցումներ, ուստի այսպիսի հատվածներում լուսավորվածության չափումներ չեն իրականացվել:

**Մոնիթորինգի արդյունքների ամփոփաթեթը Թումանյան համայնքի համար՝**

Մոնիթորինգային ցուցանիշ	Արդյունք
<b>Ցուցանիշ A:</b> Փողոցային լուսավորությամբ ապահովված բնակավայրերի քանակ/համայնքի կազմում ներառված բնակավայրերի քանակ	4/7
<b>Ցուցանիշ B:</b> Փողոցային լուսավորությամբ ապահովված բնակավայրերի բնակիչների մասնաբաժինը համայնքի ընդհանուր բնակչության թվի նկատմամբ	87%
<b>Ցուցանիշ C:</b> Համայնքի՝ փողոցային լուսավորությամբ ապահովվածության աստիճան <i>C=լուսավորությամբ ապահովված դիտարկված փողոցների երկարություն/ընդամենը դիտարկված փողոցների երկարություն</i>	35%
<b>Ցուցանիշ D:</b> Փողոցի երկայնքով լուսավորության հենասյուների քայլ <i>D=լուսավորության հենասյուներով ապահովված փողոցի երկարություն/տվյալ փողոցում առկա հենասյուների քանակ</i>	121 մետր
<b>Ցուցանիշ E:</b> Սարքին վիճակում գտնվող լուսատուներով կահավորված հենասյուների մասնաբաժին <i>E=սարքին վիճակում գտնվող լուսատուներով կահավորված հենասյուներ/ընդհանուր հենասյուների թիվ</i>	96%
<b>Ցուցանիշ F:</b> Էներգախնայող (LED) լուսատուների մասնաբաժին ընդհանուր լուսատուների թվի մեջ <i>F=էներգախնայող լուսատուներ/ընդհանուր լուսատուների թիվ</i>	100%
<b>Ցուցանիշ G:</b> Ճանապարհային պատվածքի միջին լուսավորվածության ցուցանիշ <i>G=համայնքում արված բոլոր բոլոր չափումների միջին թվաբանական</i>	3.73 լք

## 2.4 Փողոցային լուսավորության համակարգը Ստեփանավան խոշորացված համայնքում

### 2.4.1 Փողոցային լուսավորության ապահովման ոլորտում Ստեփանավան համայնքի տեխնիկական ապահովվածությունը

Համաձայն համայնքի կողմից տրամադրված տեղեկատվության՝ Ստեփանավան խոշորացված համայնքում ընդհանուր առմամբ առկա են 1485 լուսավորության հենասյուներ, որոնց գերակշիռ մասը տեղակայված են Ստեփանավան քաղաքում՝ թվով 1406 հատ: Կաթնաղբյուրում առկա են 57 հենասյուներ, Արմանիսում՝ 22, իսկ ահա Ուրասար բնակավայրում հենասյուներ ընդհանրապես չկան համաձայն համայնքի կողմից տրամադրված տվյալների: Ստեփանավան համայնքում առկա են թվով 1530 լուսատուներ<sup>8</sup>, որոնցից սարքին վիճակում են գտնվում 1518-ը: Կաթնաղբյուրում և Արմանիսում առկա բոլոր հենասյուները կահավորված են մեկական սարքին վիճակում գնտվող լուսատուով: Լուսավորության միացման-անջատման ժամերը ամառային ամիսներին բոլոր բնակավայրերի համար 21:00-05:00-ն է, իսկ ձմեռային ամիսներին Կաթնաղբյուրի և Արմանիսի համար 18:00-06:00-ն, Ստեփանավանի համար՝ 19:00-06:00 (Աղյուսակ 2.4.1): Լուսավորության համակարգի սպասարկման համար համայնքը չունի ոչ մի մեքենա-աշտարակ:

Բնակավայր	Լուսավորության հենասյուներ և լուսատուներ			
	Լուսավորության հենասյուների քանակ	Լուսատուներով կահավորված հենասյուների քանակ	Սարքին վիճակում գտնվող լուսատուների քանակ	Լուսավորության համակարգի միացման և անջատման ժամերը
Ստեփանավան	1406	1530	1518	Ամառային ամիսներ 21:00-05:00 Ձմեռային ամիսներ 19:00-06:00
Ուրասար	0	0	0	-
Կաթնաղբյուր	57	57	57	Ամառային ամիսներ 21:00-05:00 Ձմեռային ամիսներ 18:00-06:00
Արմանիս	22	22	22	Ամառային ամիսներ 21:00-05:00 Ձմեռային ամիսներ 18:00-06:00
Ընդամենը	1485	1609	1597	

**Աղյուսակ 2.4.1: Ստեփանավան խոշորացված համայնքի բնակավայրերում առկա լուսավորության հենասյուները, առկա լուսատուները և լուսավորության համակարգի միացման-անջատման ժամերը**

### 2.4.2 Ստեփանավան համայնքի բնակչության բավարարվածությունը փողոցային լուսավորության ապահովման ծառայություններից

Լուսավորության համակարգից բնակչության բավարարվածության ուսումնասիրության համար Ստեփանավան համայնքում իրականացվել է թվով 156 քանակական դեմ առ դեմ հարցումներ համայնքի

<sup>8</sup> Թիվը մեծ է հենասյուների քանակից, քանի որ համայնքում առկա են կրկնակի լուսատուով կահավորված հենասյուներ

բնակիչների հետ, որից 117-ը Ստեփանավան բնակավայրում, 17-ը՝ Ուրասարում և 22-ը՝ Կաթնաղբյուրում (Աղյուսակ 2.4.2-ում):

Բնակավայր	Մշտական բնակչության թիվը բնակավայրում	Հարցումների քանակ	Ընդհանուրի մեջ մասնաբաժինը
Ստեփանավան	19141	117	75%
Ուրասար	399	17	11%
Կաթնաղբյուր	987	22	14%
Ընդամենը	20527	156	100%


**Աղյուսակ 25.4.2 Իրականացված քանակական դեմ առ դեմ հարցումների քանակ Ստեփանավան համայնքում**

Համաձայն հարցման արդյունքների՝ համայնքի բնակչության շրջանում փողոցային լուսավորության ապահովումը համարվում է կարևոր հիմնախնդիր: «Ձեր ընտանիքի և Ձեր համայնքի առջև ծառայած մյուս հիմնախնդիրների համեմատ որքանով է Ձեզ համար կարևոր համայնքում փողոցային լուսավորության ապահովումը» հարցին հարցման ենթարկված ընդհանուր բնակչության 65%-ը պատասխանել է՝ «չափազանց կարևոր է», 34%-ը՝ «ավելի շուտ կարևոր է»: Բնակչության միայն 2%-ի համար է այս հիմնախնդիրը իրենց ընտանիքի և համայնքի առջև ծառայած մյուս հիմնախնդիրների համեմատ գնահատվել նվազ կարևոր: Այս ոլորտն առավել կարևորել են Ուրասար բնակավայրերի բնակիչները, որտեղ փողոցային լուսավորության համակարգն ընդհանրապես բացակայում է (Աղյուսակ 2.4.3):

Բնակավայր	Չափազանց կարևոր է	Ավելի շուտ կարևոր է	Ավելի շուտ կարևոր չէ	Ընդհանրապես կարևոր չէ
Ստեփանավան	59%	41%	1%	0%
Ուրասար	94%	6%	0%	0%
Կաթնաղբյուր	75%	20%	0%	5%
Ընդամենը	65%	34%	1%	1%


**Աղյուսակ 2.4.3 Փողոցային լուսավորության ապահովվածության հիմնախնդրի կարևորությունը համայնքի բնակիչների համար**

Բնակիչներին առաջարկվել է գնահատել, թե իրենց համայնքի ներբնակավայրային և միջբնակավայրային փողոցները որքանով են ապահովված փողոցային լուսավորությամբ՝ առաջարկվելով գնահատման համար ընտրել «լիովին ապահովված են», «մասամբ ապահովված են» և «ընդհանրապես ապահովված չեն» տարբերակներից որևէ մեկը: Համաձայն արդյունքների՝ Ստեփանավան և Կաթնաղբյուր բնակավայրերի բնակիչների 95%-ը և ավելի նշել են, որ ներբնակավայրային գլխավոր փողոցները լիովին ապահովված են փողոցային լուսավորությամբ: Ուրասարում լուսավորության համակարգը ընդհանրապես բացակայում է:




**Գրաֆիկ 21. Ներբնակավայրային գլխավոր փողոցներում լուսավորության առկայությունն ըստ բնակիչների գնահատականների**

Ներբնակավայրային երկրորդական փողոցների և նրբանցքների համար տրված գնահատականների համաձայն Ստեփանավանում բնակչության 48%-ը նշել է, որ երկրորդական փողոցները և նրբանցքները լիովին ապահովված են լուսավորությամբ, 49%-ը՝ մասամբ են ապահովված, իսկ 4%-ը ընդհանրապես ապահովված չեն: Կաթնաղբյուրում ավելի մեծ թվով բնակիչներ են նշել, որ իրենց բնակավայրի երկրորդական փողոցներն ապահովված են լուսավորությամբ՝ 91%-ը, իսկ 9%-ի կարծիքով՝ փողոցները մասամբ են ապահովված լուսավորությամբ (Գրաֆիկ 22):




**Գրաֆիկ 22. Ներբնակավայրային երկրորդական փողոցներում, նրբանցքներում, փակուղիներում լուսավորության առկայությունն ըստ բնակիչների գնահատականների**

Միջբնակավայրային ճանապարհների դեպքում, Ստեփանավան համայնքում բնակչության գերակշիռ մասը նշել է որ ճանապարհները մասամբ են ապահովված լուսավորությամբ, 14%-ի կարծիքով՝ լիովին են ապահովված, 16%-ի կարծիքով՝ ընդհանրապես ապահովված չեն (Գրաֆիկ 23): Կաթնաղբյուրում բնակչության գերակշիռ մասը նշել է, որ միջբնակավայրային ճանապարհները լիովին ապահովված են լուսավորությամբ, 5%-ի՝ լուսավորությամբ ապահովված են մասամբ, իսկ 10%-ը համարում է, որ ընդհանրապես ապահովված չեն:



**Գրաֆիկ 23. Միջբնակավայրային ճանապարհների երկայնքով լուսավորության առկայությունն ըստ բնակիչների գնահատականների**

Բնակիչներին հարց է տրվել, թե ըստ իրենց կարծիքի ընդհանուր առմամբ մոտավոր հաշվարկներով իրենց գյուղի փողոցների քանի՞ տոկոսն է ապահովված փողոցային լուսավորությամբ, ինչին ի պատասխան տրված գնահատականների միջինացված արժեքները ներկայացված են Գրաֆիկ 24-ում: Համաձայն այս գնահատականների՝ Ստեփանավան քաղաքում լուսավորված է փողոցների 80%-ը, իսկ Կաթնաղբյուրում՝ 77%-ը:



**Գրաֆիկ 24. Բնակավայրերի փողոցների քանի տոկոսն է ապահովված լուսավորությամբ. միջինացված ցուցանիշ ըստ բնակիչների գնահատականների**

Լուսավորության համակարգի միացման ժամի վերաբերյալ հարցին ի պատասխան Ստեփանավան քաղաքի բնակիչները որպես ամառային ամիսներին լուսավորության միացման ժամ հիմնականում նշել են 20:00-ն (հարցման ենթարկված բնակիչների 70%-ը տվել է այս պատասխանը), որոշ բնակիչներ թեև նշել են նաև 21:00-ն: Ձմեռային ամիսների համար առավել հաճախ տրվել է 19:00 պատասխանը (հարցման ենթարկված բնակիչների 65%-ը), ինչպես նաև նշվել է 18:00-ն որպես փողոցային լուսավորության միացման ժամ: Լուսավորության համակարգի անջատման ժամերի վերաբերյալ բնակիչները հիմնականում նշել են 00:00-ն և՛ ամառային, և՛ ձմեռային ռեժիմի համար:

Կաթնաղբյուր բնակավայրի դեպքում դեպքում փողոցային լուսավորության միացման ժամի վերաբերյալ հարցին տրվել են տարբեր պատասխաններ բնակիչների կողմից. Ամառային ռեժիմում միացման ժամի

համար առավել հաճախ նշվել է 20:00 պատասխանը, թեև բնակիչների մի մասը նշել է նաև 21:00 ժամը, ձմեռային ռեժիմում՝ 18:00-20:00 միջակայքում տարբեր ժամեր, թեև առավել հաճախ հնչել է 19:00 տարբերակը: Անջատման ժամի վերաբերյալ երկու սեզոնի համար էլ նշվել է 00:00 և 01:00 տարբերակները՝ գրեթե հավասար բաշխմամբ:

Բնակավայր	Ամառային ամիսներ		Զմեռային ամիսներ	
	Միացման ժամ	Անջատման ժամ	Միացման ժամ	Անջատման ժամ
Ստեփանավան	20:00	00:00	19:00	00:00
Կաթնաղբյուր	20:00	00:00-01:00	18:00-20:00	00:00-01:00

**Աղյուսակ 2.4.4 Ստեփանավան համայնքում փողոցային լուսավորության միացման և անջատման ժամերն ըստ բնակիչների կողմից տրված պատասխանների**

Հարցին հարցման ենթարկված բնակչության շուրջ 90%-ը միացման/անջատման այդ ժամերը համարել է բավարար, և միայն 10%-ն է համարել անբավարար: Լուսավորության միացման տևողությունը հատկապես անբավարար են համարել Բասեն և Կամո բնակավայրերի բնակիչները (2.4.5)

Բնակավայր	Ընդհանրապես բավարար չեն	Ավելի շուտ բավարար չեն	Ավելի շուտ բավարար են	Լիովին բավարար են
Ստեփանավան	3%	6%	64%	27%
Կաթնաղբյուր	0%	16%	63%	21%
Ընդամենը	2%	8%	64%	26%

**Աղյուսակ 2.4.5 Բնակիչների գնահատականները փողոցային լուսավորության միացման տևողության վերաբերյալ**


Ինչ վերաբերում է համայնքապետարանի կողմից փողոցային լուսատուների սպասարկմանը, ապա հարցման ենթարկված բնակչության միայն 1%-ն է նշել, որ համայնքապետարանն «ընդհանրապես չի իրականացնում» խափանված լուսատուների փոխարինման աշխատանքներ, 18%-ը նշել է, որ «իրականացնում է երբեմն-երբեմն, խնդիրներ առաջանալուց հետո բավականին ուշ»: 72%-ի կարծիքով համայնքապետարանը խափանված լուսատուների սպասարկման աշխատանքներ «իրականացնում է հաճախ, խնդիրներ առաջանալուց անմիջապես հետո», իսկ հարցման ենթարկված բնակչության 8%-ը նշել է, որ մինչ տվյալ պահը խնդիրներ չեն առաջացել (Աղյուսակ 2.4.6):

Բնակավայր	Ընդհանրապես չի իրականացնում	Իրականացնում է երբեմն-երբեմն, խնդիրներ առաջանալուց հետո բավականին ուշ	Իրականացնում է հաճախ, խնդիրներ առաջանալուց անմիջապես հետո	Խնդիրներ չեն առաջացել մինչ այժմ
Ստեփանավան	2%	18%	77%	4%
Կաթնաղբյուր	0%	20%	45%	35%
Ընդամենը	1%	18%	72%	8%

**Աղյուսակ 2.4.6 Բնակիչների գնահատականները փողոցային լուսատուների սպասարկման վերաբերյալ**

Համայնքի բնակիչներին առաջարկվել է 1-ից 10 բալանոց սանդղակով գնահատել Փողոցային լուսավորության ապահովման ոլորտում համայնքապետարանի կողմից մատուցվող ծառայություններից իրենց ընդհանուր բավարարվածությունը: Ուրասարում ինչպես և ակնկալվում էր, տրվել է նվազագույն

բացասական գնահատական, քանի որ այստեղ բացակայում է փողոցային լուսավորության ծառայությունը: Ինչ վերաբերում է Ստեփանավան և Կաթնաղբյուր բնակավայրերին, ապա այստեղ գնահատականները բավականին բարձր են՝ համապատասխանաբար՝ 8.18 միավոր և 7.19 միավոր: Համայնքապետարանի միջին գնահատականը ամբողջ խոշորացված համայնքի համար կազմել է **7.3** միավոր հնարավոր 10-ից (Գրաֆիկ 25):



**Գրաֆիկ 25. Փողոցային լուսավորության ապահովման ծառայություններից բնակչության բավարարվածությունը Ստեփանավան համայնքի բնակավայրերի համար**

Համայնքի բնակիչներին հնարավորություն է տրվել ներկայացնել իրենց առաջարկություններն ուղղված փողոցային լուսավորության ապահովման ծառայության որակի բարելավմանը: Ուրասար բնակավայրի բնակիչներն առաջարկել են իրենց բնակավայրում տեղադրել լուսատուներ, իսկ Ստեփանավան և Կաթնաղբյուր համայնքի բնակիչները ավելացնել լուսատուների քանակը: Ստեփանավան քաղաքից ստացվել են նաև առաջարկություններ լուսավորել երկրորդական փողոցները, կիրառվել լուսավորության էներգախնայող տարբերակներ, վերանորոգել ոչ սարքին վիճակում գտնվող լուսատուները, լուսավորել փողոցների երկու մայրերն էլ և ավելացնել լուսավորության միացման տևողությունը: Այս վերջին առաջարկը հնչեցվել է նաև Կաթնաղբյուր բնակավայրի բնակիչների կողմից (Աղյուսակ 2.4.7):

Առաջարկություններ	Ստեփանավան	Ուրասար	Կաթնաղբյուր
Տեղադրել լուսատուներ/ավելացնել լուսատուների քանակը	3	10	1
Երկրորդական փողոցները նույնպես լուսավորել	2	0	0
Կիրառեն լուսավորության էներգախնայող տարբերակներ	1	0	0
Ավելացնել լուսավորության միացման տևողությունը	4	0	2
Վերանորոգել ոչ սարքին լուսատուները	3	0	0
Լուսավորել փողոցների երկու մայրերն էլ	1	0	0

**Աղյուսակ 2.4.7: Փողոցային լուսավորության ոլորտի բարելավմանն ուղղված առաջարկներ համայնքի բնակավայրերից**



### 2.4.3 Ստեփանավան խոշորացված համայնքում փողոցային լուսավորության ապահովման ոլորտի մոնիթորինգի արդյունքներ

Ստեփանավան խոշորացված համայնքում մոնիթորինգ է իրականացվել ընդհանուր առմամբ 33 փողոցներում, որոնցից 12-ը եղել են գլխավոր փողոցներ, իսկ 21-ը՝ երկրորդական: Դիտարկված փողոցներից 18-ը եղել են բնակավայրի կենտրոնական մասում տեղակայված, 15-ը՝ ծայրամասում: Համայնքում դիտարկման ենթարկված փողոցների ընդհանուր երկարությունը կազմել է 25,950մ (Աղյուսակ 2.4.8):

Բնակավայր	Դիտարկված փողոցների երկարություն (մետր)	Փողոցի տեղադիրքը բնակավայրում		Դիտարկված փողոցի տիպը	
		Կենտրոն	Ծայրամաս	Գլխավոր փողոց	Երկրորդական փողոց
Ստեփանավան	14450	12	8	8	12
Ուրասար	4700	2	3	1	4
Կաթնաղբյուր	6800	4	4	3	5
Ընդամենը	25950	18	15	12	21

**Աղյուսակ 2.4.8. Դիտարկման ենթարկված փողոցներն Ստեփանավան համայնքում**

Դիտարկված 33 փողոցներից լուսավորության հենասյուներ առկա են եղել 27-ում, կամ ընդամենը դիտարկված փողոցների 82%-ում: Դիտարկված ընդհանուր 16,591կմ երկարությամբ փողոցներից լուսավորության հենասյուներով են ապահովված եղել ընդհանուր առմամբ փողոցների 21 կմ հատվածը համ դիտարկված ընդհանուր փողոցների երկարության 81%-ը: Մոնիթորինգի այցելության ժամանակ լուսավորություն միացված է եղել դիտարկված ընդհանուր փողոցների երկարության 79%-ում կամ 21 կմ հատվածում (Աղյուսակ 2.4.9): Հենասյուներով ապահովված են եղել միայն Ստեփանավան և Կաթնաղբյուր բնակավայրերում դիտարկված փողոցները:

Բնակավայր	Փողոցներում լուսավորության առկայություն (քանակ)		Փողոցներում լուսավորության առկայություն (երկարություն, մետր)		Միացված է եղել լուսավորությունը (երկարություն, մետր)
	Առկա են հենասյուներ	Առկա չեն հենասյուներ	Առկա են հենասյուներ	Առկա չեն հենասյուներ	
Ստեփանավան	19	1	14250	200	14250
Ուրասար	0	5	0	4700	0
Կաթնաղբյուր	8	0	6800	0	6300
Ընդամենը	27	6	21050	4900	20550

**Աղյուսակ 2.4.9 Հենասյուների քանակը և լուսատուների առկայությունը բնակավայրերում**

Ընդհանուր առմամբ մոնիթորինգի կողմից հաշվարկվել են թվով 534 լուսավորության հենասյուներ, որոնցից 122-ը չեն ունեցել լուսատուներ կամ կահավորված են եղել ոչ սարքին վիճակում գտնվող լուսատուներով (ընդհանուր լուսատուների 23%-ը): Մեծ թվով չկահավորված կամ ոչ սարքին վիճակում գտնվող լուսատուներով կահավորված հենասյուներ առկա են եղել Կաթնաղբյուրում: Ընդհանուր առմամբ

հենասյունների տեղակայման միջին խտությունը դիտարկված փողոցների երկայնքով կազմել է 49 մետր<sup>9</sup> (Աղյուսակ 2.4.10): Ստեփանավան համայնքում դիտարկված բոլոր լուսատուները եղել են մեկ լուսատուով կահավորված: Համաձայն մոնիթորինգների դիտարկումների համայնքում էներգախնայող լուսատուներ տեղադրված չեն:

Բնակավայր	Առկա հենասյունների քանակ	Լուսատու չունեցող/ոչ սարքին վիճակում գտնվող լուսատու ունեցող հենասյունների քանակ	Հենասյունների տեղակայման միջին քայլ (մետր)
Ստեփանավան	413	25	40
Կաթնաղբյուր	121	97	58
Ընդամենը/միջինում	534	122	49

**Աղյուսակ 2.4.10 Հենասյունների քանակը և տեղակայման միջին քայլ**

Այն փողոցներում, որտեղ միացված է եղել փողոցային լուսավորությունը չափվել է նաև լուսավորվածության չափը: Դիտարկումն իրականացվել է փողոցի ամենաշատ լուսավորված հատվածում (որը որոշվել է ակնադիտական մեթոդով) և փողոցի երեք մասերում<sup>10</sup>: Փողոցների առավելագույն լուսավորված հատվածում առավելագույն լուքսի չափը արձանագրվել է Ստեփանավան քաղաքում՝ 16 լուքս: Միջին լուսավորվածության չափը Ստեփանավան քաղաքում կազմել է 8.05 լուքս, ինչը ցածր է սահմանված նորմերից, եթե հաշվի առնենք, որ այստեղ դիտարկված հիմնական ճանապարհները «Գ2» տիպի ճանապարհներ են<sup>11</sup> և այստեղ ճանապարհային պատվածքի միջին լուսավորվածությունը պետք է լինի ոչ պակաս քան 10 լուքս: Կաթնաղբյուրում արձանագրված առավելագույն լուսավորվածությունը եղել է 3 լուքս, մինչդեռ միջին լուսավորվածությունը 2.32 լուքս: Այստեղ նույնպես լուսավորվածության չափը չի համապատասխանում սահմանված նորմատիվներին հաշվի առնելով, որ գյուղական բնակավայրերում բնակելի կառուցմապատման հիմնական փողոցների համար ճանապարհային պատվածքի լուսավորվածության նվազագույն շեմ սահմանված է 6 լուքսը, իսկ երկրորդական փողոցների և նրբանցքների համար՝ 4 լուքսը (Աղյուսակ 2.4.11):

Բնակավայր	Առավելագույն լուսավորված հատվածում լուսավորվածության չափը (լուքս)	Փողոցների լուսավորվածության չափը միջինում (լուքս)
Ստեփանավան	16	8.05
Կաթնաղբյուր	3	2.32
Առավելագույնը/միջինում	16	6.4

**Աղյուսակ 2.4.11 Ճանապարհային պատվածքի լուսավորվածության չափերը Ստեփանավան համայնքի բնակավայրերում**

<sup>9</sup> Ցուցանիշը հաշվարկվել է դիտարկման ենթարկված փողոցների ընդհանուր երկարությունը (որտեղ առկա են եղել լուսավորության հենասյուններ) հարաբերելով տվյալ փողոցում առկա հենասյունների քանակի վրա

<sup>10</sup> Տես առավել մանրամասն Մեթոդաբանություն բաժնում

<sup>11</sup> Տրանսպորտային և հետիոտնային կապեր բնակելի շրջանների և միկրոշրջանների սահմաններում, ելք դեպի կենտրոնի մայրուղային փողոցներ:

**Մոնիթորինգի արդյունքների ամփոփաթեթը Ստեփանավան համայնքի համար՝**

Մոնիթորինգային ցուցանիշ	Արդյունք
<b>Ցուցանիշ A:</b> Փողոցային լուսավորությամբ ապահովված բնակավայրերի քանակ/համայնքի կազմում ներառված բնակավայրերի քանակ	2/3
<b>Ցուցանիշ B:</b> Փողոցային լուսավորությամբ ապահովված բնակավայրերի բնակիչների մասնաբաժինը համայնքի ընդհանուր բնակչության թվի նկատմամբ	98%
<b>Ցուցանիշ C:</b> Համայնքի՝ փողոցային լուսավորությամբ ապահովվածության աստիճան <i>C=լուսավորությամբ ապահովված դիտարկված փողոցների երկարություն/ընդամենը դիտարկված փողոցների երկարություն</i>	79%
<b>Ցուցանիշ D:</b> Փողոցի երկայնքով լուսավորության հենասյուների քայլ <i>D=լուսավորության հենասյուներով ապահովված փողոցի երկարություն/տվյալ փողոցում առկա հենասյուների քանակ</i>	49 մետր
<b>Ցուցանիշ E:</b> Սարքին վիճակում գտնվող լուսատուներով կահավորված հենասյուների մասնաբաժին <i>E=սարքին վիճակում գտնվող լուսատուներով կահավորված հենասյուներ/ընդհանուր հենասյուների թիվ</i>	77%
<b>Ցուցանիշ F:</b> Էներգախնայող (LED) լուսատուների մասնաբաժին ընդհանուր լուսատուների թվի մեջ <i>F=էներգախնայող լուսատուներ/ընդհանուր լուսատուների թիվ</i>	0%
<b>Ցուցանիշ G:</b> Ճանապարհային պատվածքի միջին լուսավորվածության ցուցանիշ <i>G=համայնքում արված բոլոր բոլոր չափումների միջին թվաբանական</i>	6.4

## 2.5 Փողոցային լուսավորության համակարգը Դիլիջան խոշորացված համայնքում

2.5.1 Փողոցային լուսավորության ապահովման ոլորտում Դիլիջան համայնքի հնարավորությունները Համաձայն համայնքի կողմից տրամադրված տվյալների՝ Դիլիջան համայնքում առկա են թվով 2096 լուսավորության հենասյուներ, որոնցից 1881-ը տեղակայված են Դիլիջան քաղաքում: Լուսավորության հենասյուներ են առկա նաև Թեղուտում, Հաղարծինում, Գոշում և Հովքում: Առկա բոլոր հենասյուները կահավորված են սարքին վիճակում գտնվող լուսատուներով, բացառությամբ Դիլիջան քաղաքում գտնվող 215 հենասյուների, որոնք համաձայն համայնքի կողմից տրամադրված տվյալների կահավորված չեն կանթեղներով: Լուսավորության հենասյուները բացակայում են Խաչարձան և Աղավնավանք բնակավայրերում: Բոլոր բնակավայրերում լուսավորության համակարգի միացման և անջատման ժամերը ամառային ամիսներին սահմանված է 20:45-ից մինչև 00:00, ձմեռային ամիսներին՝ 17:45-ից՝ 00:00 (Աղյուսակ 2.5.1): Լուսավորության համակարգի սպասարկման համար համայնքն 2017 թվականի արտադրության երկու մեքենա-աշտարակ, որոնցից մեկի աղեղի թռիչքի բարձրությունը կազմում է 12 մետր, մյուսինը՝ 22 մետր:

Բնակավայր	Լուսավորության հենասյուներ և լուսատուներ			
	Լուսավորության հենասյուների քանակ	Լուսատուներով կահավորված հենասյուների քանակ	Սարքին վիճակում գտնվող լուսատուների քանակ	Լուսավորության համակարգի միացման և անջատման ժամերը
Դիլիջան	1881 /որից 215 դատարկ/	1666	1666	Ամառային ամիսներ 20:45-00:00 Ձմեռային ամիսներ 17:45-00:00
Թեղուտ	64	64	64	Ամառային ամիսներ 20:45-00:00 Ձմեռային ամիսներ 17:45-00:00
Հաղարծին	74	74	74	Ամառային ամիսներ 20:45-00:00 Ձմեռային ամիսներ 17:45-00:00
Գոշ	16	16	16	Ամառային ամիսներ 20:45-00:00 Ձմեռային ամիսներ 17:45-00:00
Խաչարձան	0	0	0	Ամառային ամիսներ 20:45-00:00 Ձմեռային ամիսներ 17:45-00:00
Աղավնավանք	0	0	0	Ամառային ամիսներ 20:45-00:00 Ձմեռային ամիսներ 17:45-00:00
Հովք	61	61	61	Ամառային ամիսներ 20:45-00:00 Ձմեռային ամիսներ 17:45-00:00
Ընդամենը	2096	1881	1881	-

Աղյուսակ 2.5.1: Դիլիջան խոշորացված համայնքի բնակավայրերում առկա լուսավորության հենասյուները, առկա լուսատուները և լուսավորության համակարգի միացման-անջատման ժամերը

**2.5.2 Դիլիջան համայնքի բնակչության բավարարվածությունը փողոցային լուսավորության ապահովման ծառայություններից**

Տնային տնտեսությունների հետ քանակական դեմ առ դեմ հարցումների շրջանակներում Դիլիջան համայնքում իրականացվել է թվով 160 հարցումներ՝ ընդգրկելով համայնքի մաս կազմող բոլոր բնակավայրերի բնակիչներին: Առավել մեծ թվով հարցումներ իրականացվել են Դիլիջան քաղաքում (համայնքում արված հարցումների 49%-ը) և Հաղարծին գյուղում (համայնքում արված հարցումների 19%-ը): Ըստ առանձին բնակավայրերի հարցման ենթարկված բնակչության թվի բաշխումը ներկայացված է Աղյուսակ 2.5.2-ում:

Բնակավայր	Մշտական բնակչության թիվը բնակավայրում	Հարցումների քանակ	Ընդհանուրի մեջ մասնաբաժինը
Դիլիջան	18667	79	49%
Հաղարծին	4085	31	19%
Թեղուտ	1572	8	5%
Գոշ	1129	11	7%
Հովք	430	11	7%
Աղավնավանք	336	11	7%
Խաչարձան	372	9	6%
Ընդամենը	26591	160	100%


**Աղյուսակ 2.5.2 Իրականացված քանակական դեմ առ դեմ հարցումների քանակի բաշխումը Դիլիջան համայնքի բնակավայրերում**

Հարցին թե որքանով է կարևոր փողոցային լուսավորության առկայությունը համայնքում ընտանիքների և համայնքի այլ հիմնախնդիրների համատեքստում՝ Դիլիջան համայնքի բնակչության 88%-ը պատասխանել է, որ այս հիմնախնդիրը չափազանց կարևոր է, 11%-ը՝ ավելի շուտ կարևոր է և միայն 2%-ի կողմից այս խնդիրը կարևոր չի համարվել: Այս ոլորտը նաև առավելագույնս կարևորվել է Աղավնավանք և Խաչարձան բնակավայրերի բնակիչների կողմից, որտեղ փողոցային լուսավորության համակարգը առհասարակ բացակայում է:

Բնակավայր	Չափազանց կարևոր է	Ավելի շուտ կարևոր է	Ավելի շուտ կարևոր չէ	Ընդհանրապես կարևոր չէ
Դիլիջան	82%	16%	0%	1%
Հաղարծին	100%	0%	0%	0%
Թեղուտ	100%	0%	0%	0%
Գոշ	64%	27%	9%	0%
Հովք	100%	0%	0%	0%
Աղավնավանք	100%	0%	0%	0%
Խաչարձան	100%	0%	0%	0%
Ընդամենը	88%	11%	1%	1%


**Աղյուսակ 2.5.3 փողոցային լուսավորության ապահովվածության հիմնախնդրի կարևորությունը համայնքի բնակիչների համար**

Հարցին, թե ձեր բնակավայրի գլխավոր փողոցները որքանով են ապահովված փողոցային լուսավորությամբ, Հաղարծին և Թեղուտ բնակավայրերի բոլոր բնակիչները պատասխանել են, որ լիովին ապահովված են: Հովքում բնակչության 45%-ն է նշել, որ լիովին ապահովված են, Դիլիջանում՝ 42%-ը, մինչդեռ Գոշում ընդամենը 9%-ը: Գոշում հարցման ենթարկված բնակչության 73%-ը համարում է, որ գլխավոր փողոցները մասամբ են ապահովված լուսավորությամբ, Դիլիջանում այս կարծիքն ունեն 58%-ը, իսկ Հովքում՝ 45%-ը: Աղավնավանքում և Խաչարձանում ինչպես և սպասվում էր, բնակչության 100%-ը արձանագրել է, որ բնակավայրերում լուսավորություն ընդհանրապես չկա (Գրաֆիկ 27):




**Գրաֆիկ 26. Ներբնակավայրային գլխավոր փողոցներում լուսավորության առկայությունն ըստ բնակիչների գնահատականների**

Ինչ վերաբերում է ներբնակավայրային երկրորդական փողոցներին, ապա այստեղ առավելապես գերակշռում են ընդհանրապես ապահովված չեն պատասխանները, հատկապես Թեղուտում, Հովքում, Գոշում և Հաղարծինում: Միայն Դիլիջանում է բնակչության 48%-ը նշել, որ երկրորդական փողոցները և նրբանցքները մասամբ են ապահովված լուսավորությամբ, իսկ 10%-ի կարծիքով՝ փողոցները լիովին են ապահովված լուսավորությամբ (Գրաֆիկ 28):




**Գրաֆիկ 27. Ներբնակավայրային երկրորդական փողոցներում, նրբանցքներում, փակուղիներում լուսավորության առկայությունն ըստ բնակիչների գնահատականների**

Միջբնակավայրային ճանապարհների վերաբերյալ բնակիչների կողմից հնչեցված կարծիքների ամփոփման համաձայն, Թեդուտ, Աղավնավանք, Խաչարձան բնակավայրերի բոլոր բնակիչները կարծում են, որ միջբնակավայրային ճանապարհներն ընդհանրապես ապահովված չեն լուսավորությամբ: Հովքում այս կարծիքը հայտնել է հարցման ենթարկված բնակչության 91%-ը, Հաղարծինում՝ 74%-ը: Դիլիջան քաղաքում բնակչության 70%-ը համարում է, որ միջբնակավայրային ճանապարհները մասամբ են ապահովված լուսավորությամբ, Գո2ում այս կարծիքն ունի 80%-ը (Գրաֆիկ 29):



**Գրաֆիկ 28. Միջբնակավայրային ճանապարհների երկայնքով լուսավորության առկայությունն ըստ բնակիչների գնահատականների**

Բնակիչներին հարց է տրվել, թե ըստ իրենց կարծիքի ընդհանուր առմամբ մոտավոր հաշվարկներով իրենց գյուղի փողոցների քանի՞ տոկոսն է ապահովված փողոցային լուսավորությամբ, ինչին ի պատասխան տրված գնահատականների միջինացված արժեքները ներկայացված են Գրաֆիկ 30-ում: Համաձայն գնահատման արդյունքների Դիլիջան քաղաքի փողոցների 59%-ը ապահովված է լուսավորությամբ: Մյուս բնակավայրերում այս ցուցանիշը չի գերազանցում 30%-ը, իսկ Աղավնավանքում և Խաչարձանում կազմում է 0%:



**Գրաֆիկ 29. Բնակավայրերի փողոցների քանի տոկոսն է ապահովված լուսավորությամբ. միջինացված ցուցանիշ ըստ բնակիչների գնահատականների**

Դիլիջան, Հաղարծին, Գոշ բնակավայրերի բնակիչների կողմից որպես ամառային ամիսներին փողոցային լուսավորության միացման ժամ հիմնականում նշվել է 20:00-ն, թեև որոշ բնակիչներ նշել են նաև 21:00 տարբերակը, ձմեռային ամիսների համար նշվել է 18:00-20:00 հատվածում տարբեր ժամեր: Որպես լուսավորության անջատման ժամ երկու ռեժիմների համար էլ նշվել է 00:00 ժամը: Թեղուտում և Հովքում նմանատիպ պատկեր է, միայն թե այստեղ ձմեռային ամիսներին որպես լուսավորության միացման ժամ առավել հաճախ նշվել է 19:00 տարբերակը (Աղյուսակ 2.5.4):

Բնակավայր	Ամառային ամիսներ		Ձմեռային ամիսներ	
	Միացման ժամ	Անջատման ժամ	Միացման ժամ	Անջատման ժամ
Դիլիջան	20:00	00:00	18:00-20:00	00:00
Հաղարծին	20:00	00:00	18:00-20:00	00:00
Թեղուտ	20:00	00:00	19:00	00:00
Գոշ	20:00	00:00	18:00-20:00	00:00
Հովք				

**Աղյուսակ 2.5.4 Դիլիջան համայնքում փողոցային լուսավորության միացման և անջատման ժամերն ըստ բնակիչների կողմից տրված պատասխանների**



«Ինչ էք կարծում, միացման/անջատման այդ ժամերը բավարար են փողոցային լուսավորվածության պատշաճ ապահովման համար» հարցին հարցման ենթարկված բնակչության շուրջ 53%-ը համարել է բավարար, 47%-ը՝ անբավարար: Լուսավորության միացման տևողությունը համեմատաբար չի գոհացրել Դիլիջան և Գոշ բնակավայրերի բնակիչներին (Աղյուսակ 2.5.5):

Բնակավայր	Ընդհանրապես բավարար չեն	Ավելի շուտ բավարար չեն	Ավելի շուտ բավարար են	Լիովին բավարար են
Դիլիջան	16%	39%	41%	4%
Հաղարծին	6%	18%	65%	12%
Թեղուտ	0%	0%	100%	0%
Գոշ	9%	45%	36%	9%
Հովք	30%	0%	60%	10%
Ընդամենը	15%	32%	47%	6%


**Աղյուսակ 2.5.5 Դիլիջան համայնքում փողոցային լուսավորության միացման և անջատման ժամերն ըստ բնակիչների կողմից ստրված պատասխանների**

«Արդյո՞ք համայնքապետարանն իրականացնում է փողոցային լուսատուների սպասարկում, խափանված լուսատուների փոխարինման աշխատանքներ» հարցին բնակիչների 8%-ը նշել է, որ «ընդհանրապես չի իրականացնում», 54%-ը՝ «իրականացնում է երբեմն-երբեմն, խնդիրներ առաջանալուց հետո բավականին ուշ», 34%-ը՝ «իրականացնում է հաճախ, խնդիրներ առաջանալուց անմիջապես հետո»: Հարցման ենթարկված բնակիչների 4%-ը նշել է, որ մինչ տվյալ պահը խնդիրներ չեն առաջացել (Աղյուսակ 2.5.6): Խափանված լուսատուների սպասարկման աշխատանքներից հատկապես դժգոհություն են հայտնել Դիլիջան, Գոշ և Հովք համայնքի բնակիչները:

Բնակավայր	Ընդհանրապես չի իրականացնում	Իրականացնում է երբեմն-երբեմն, խնդիրներ առաջանալուց հետո բավականին ուշ	Իրականացնում է հաճախ, խնդիրներ առաջանալուց անմիջապես հետո	Խնդիրներ չեն առաջացել մինչ այժմ
Դիլիջան	10%	60%	27%	3%
Հաղարծին	0%	29%	62%	10%
Գոշ	10%	60%	20%	10%
Հովք	0%	56%	44%	0%
Ընդամենը	8%	54%	34%	4%

**Աղյուսակ 2.5.6 Բնակիչների գնահատականները փողոցային լուսատուների սպասարկման վերաբերյալ**

Համայնքի բնակիչներին առաջարկվել է 1-ից 10 բալանոց սանդղակով գնահատել Փողոցային լուսավորության ապահովման ոլորտում համայնքապետարանի կողմից մատուցվող ծառայություններից իրենց ընդհանուր բավարարվածությունը: 7 միավորից բարձր գնահատական է ստրվել միայն Հովք, Աղավնավանք, Խաչարձան բնակավայրերի բնակիչների կողմից: Մյուս չորս բնակավայրերի դեպքում Փողոցային լուսավորության ապահովման ոլորտում մատուցվող ծառայությունները բնակիչների կողմից գնահատվել են միջինից էլ ցածր: Համայնքապետարանի միջին գնահատականը ամբողջ խոշորացված համայնքի համար կազմել է **3,85** միավոր հնարավոր 10-ից (Գրաֆիկ 31):



**Գրաֆիկ 30. Փողոցային լուսավորության ապահովման ծառայություններից բնակչության բավարարվածությունը Դիլիջան համայնքի բնակավայրերի համար**

Համայնքի բնակիչներին հնարավորություն է տրվել ներկայացնել իրենց առաջարկություններն ուղղված փողոցային լուսավորության ապահովման ծառայության որակի բարելավմանը: Համայնքի բնակիչների կողմից հնչել են առաջարկություններ՝ լուսավորությամբ ապահովել նաև երկրորդական փողոցները, բնակավայրերի ամողջ տարածքներում և թաղամասերում առկա լինի լուսավորություն, լուսավորությունը միացված լինի ավելի երկար, հզորացնել լուսատուները և ավելացնել քանակը, խափանված լուսատուները ժամանակին սպասարկեն և այլն (Աղյուսակ 2.5.11):

Առաջարկություններ	Դիլիջան	Հաղարծին	Թեղուտ	Գոշ	Հովք	Աղավնավանք	Խաչարձան
Ամբողջ բնակավայրի տարածքն ապահովված լինի լուսավորությամբ	7	0	3	0	1	3	0
Լուսավորություն առկա լինի նաև երկրորդական փողոցներում	11	6	3	2	1	0	3
Լուսավորությունը միացված լինի ավելի երկար	4	0	0	0	0	0	0
Ավելի ուշադիր լինեն	1	0	0	0	0	0	0
Լուսավորություն առկա լինի նաև ծայրամասային թաղամասերում	2	11	1	0	0	0	0
Լուսավորության հզորությունը ուժեղացնել	4	0	0	0	0	0	0
Լուսավորությամբ ապահովվեն նաև բակային հատվածները, շքամուտքերը	1	0	0	0	0	0	0
Լուսավորություն լինի նաև միջբնակավայրային ճանապարհներին	0	1	0	0	0	0	0
Հնարավորության դեպքում ավելացնեն լուսատուների քանակը	1	0	0	0	2	0	0
Լուսավորություն առկա լինի կամրջի վրա	1	0	0	0	0	0	0
Հսկողություն իրականացվի	3	0	0	0	0	0	0
Մայրերում աճած ծառերը պարբերաբար կտրեն, որ չփակեն լույսը	1	0	0	0	0	0	0
Նրբանցքները ևս լուսավորվեն	3	1	0	0	0	0	0
Խափանված լուսատուները ժամանակին փոխարինվեն	4	0	0	1	0	0	0
Փողոցները հավասարապես լուսավորվեն	0	3	0	0	0	0	0

**Աղյուսակ 2.5.11: Փողոցային լուսավորության ոլորտի բարելավմանն ուղղված առաջարկներ համայնքի բնակավայրերից**

### 2.5.3 Դիլիջան խոշորացված համայնքում փողոցային լուսավորության ապահովման ոլորտի մոնիթորինգի արդյունքներ

Դիլիջան համայնքում դիտարկման են ենթարկվել ընդհանուր առմամբ 20 փողոցներ, որոնցից 11-ը եղել են գլխավոր փողոցներ, իսկ 9-ը՝ երկրորդական: Համայնքում դիտարկման ենթարկված փողոցների ընդհանուր երկարությունը կազմել է 39,100կմ: Դիտարկված 30 փողոցներից լուսավորության հենասյուներ առկա են եղել 12-ում կամ ընդամենը դիտարկված փողոցների 60%-ում: Դիտարկված ընդհանուր 39,100կմ երկարությամբ փողոցներից լուսավորության հենասյուներով են ապահովված եղել ընդհանուր առմամբ փողոցների 32,7 կմ հատվածը կամ դիտարկված ընդհանուր փողոցների երկարության 84%-ը: Մոնիթորների այցելության ժամանակ լուսավորություն միացված է եղել դիտարկված ընդհանուր փողոցների երկարության 80%-ում կամ 31,2 կմ հատվածում (Աղյուսակ 2.5.12):

Բնակավայր	Փողոցներում լուսավորության առկայություն (քանակ)		Փողոցներում լուսավորության առկայություն (երկարություն, մետր)		Միացված է եղել լուսավորությունը (երկարություն, մետր)
	Առկա են հենասյուներ	Առկա չեն հենասյուներ	Առկա են հենասյուներ	Առկա չեն հենասյուներ	
Դիլիջան	7	0	25200	0	25200
Հաղարծին	2	0	3000	0	1500
Թեղուտ	1	0	1700	0	1700
Գոշ	1	1	800	3000	800
Հովք	1	2	2000	0	2000
Աղավնավանք	0	3	0	2100	0
Խաչարձան	0	2	0	1300	0
Ընդամենը	12	8	32700	6400	31200

**Աղյուսակ 2.5.12. Փողոցներում լուսավորության հենասյուների առկայություն և լուսավորում**

Հենասյուներ առկա են եղել Դիլիջան, Հաղարծին, Թեղուտ, Գոշ և Հովք բնակավայրերում: Ընդհանուր առմամբ մոնիթորների կողմից հաշվարկվել է թվով 485 լուսավորության հենասյուներ, որոնցից 310-ը տեղակայված են եղել Դիլիջան քաղաքում: Լուսատուներով կահավորված չեն եղել Դիլիջան քաղաքում տեղակայված 20 հենասյուներ, որը կազմում է հենասյուների 4%-ը (Աղյուսակ 2.5.13): Ընդհանուր առմամբ հենասյուների տեղակայման միջին խտությունը դիտարկված փողոցների երկայնքով կազմել է 72 մետր<sup>12</sup>:

<sup>12</sup> Ցուցանիշը հաշվարկվել է դիտարկման ենթարկված փողոցների ընդհանուր երկարությունը (որտեղ առկա են եղել լուսավորության հենասյուներ) հարաբերելով տվյալ փողոցում առկա հենասյուների քանակի վրա

Բնակավայր	Առկա հենասյուների քանակ	Լուսատու չունեցող/ոչ սարքին վիճակում գտնվող լուսատու ունեցող հենասյուների քանակ	Հենասյուների տեղակայման միջին խտություն (մետր)
Դիլիջան	310	20	85
Հաղարծին	40	0	75
Թեղուտ	40	0	43
Գոշ	15	0	53
Հովք	80	0	25
Ընդամենը/միջինում	485	20	72

**Աղյուսակ 2.5.13 Հենասյուների քանակը և լուսատուների առկայությունը բնակավայրերում**

Դիտարկված 485 հենասյուներից 70-ը եղել են կրկնակի լուսատուով կահավորված: Լամպ ամրացնելու հարմարանք չունեցող հենասյուներ առկա չեն եղել: Համաձայն մոնիթորների գնահատականների շուրջ 260 լուսատուներ եղել են էներգախնայող (LED) լուսատուներ:

Այն փողոցներում, որտեղ միացված է եղել փողոցային լուսավորությունը չափվել է նաև լուսավորվածության չափը: Դիտարկումն իրականացվել է փողոցի ամենաշատ լուսավորված հատվածում (որը որոշվել է ակնադիտական մեթոդով) և փողոցի երեք մասերում<sup>13</sup>: Փողոցների առավելագույն լուսավորված հատվածում առավելագույն լուսաքի չափը արձանագրվել է Հաղարծինում՝ կազմելով 19 լուսաք: Միջին լուսավորվածության չափը Դիլիջանում կազմել է 3,24 լուսաք, ինչը նշանակալի ցածր է սահմանված նորմերից, եթե հաշվի առնենք, որ այստեղ դիտարկված հիմնական ճանապարհները «Գ2» տիպի ճանապարհներ են<sup>14</sup> և այստեղ ճանապարհային պատվածքի միջին լուսավորվածությունը պետք է լինի ոչ պակաս քան 10 լուսաք: Մյուս բնակավայրերի համեմատ առավելագույն լուսավորված է եղել Հաղարծինը, որտեղ ճանապարհային պատվածքի միջին լուսավորվածությունը կազմել է 12.33 լուսաք: Հաջորդիվ առավել բարձր է եղել Գոշում արձանագրված ցուցանիշը՝ կազմելով 8.33 լուսաք: Թեղուտում և Հովքում չափումները համապատասխանաբար ցույց են տվել 6.33 և 5.33 արդյունքները (Աղյուսակ 2.5.14):

Բնակավայր	Առավելագույն լուսավորված հատվածում լուսաքի չափը	Փողոցների լուսավորվածության միջին լուսաքի չափը
Դիլիջան	13	3.24
Հաղարծին	19	12.33
Թեղուտ	13	6.33
Գոշ	14	8.33
Հովք	10	5.33
Առավելագույնը/միջինում	19	5.00

**Աղյուսակ 2.5.14 Ճանապարհային պատվածքի լուսավորվածության չափերը Թումանյան համայնքի բնակավայրերում**

Մոնիթորինգի ընթացքում նախատեսվում էր ճանապարհային պատվածքի լուսավորվածության չափումներ իրականացնել նաև հետիոտնային անցումների հատվածներում, քանի որ այստեղ նորմատիվները

<sup>13</sup> Տես առավել մանրամասն Մեթոդաբանություն բաժնում

<sup>14</sup> Տրանսպորտային և հետիոտնային կապեր բնակելի շրջանների և միկրոշրջանների սահմաններում, ելք դեպի կենտրոնի մայրուղային փողոցներ:

տարբերվում են: Մոնիթորների կողմից հետիոտնային անցումներ արձանագրվել են միայն Դիլիջան քաղաքում՝ թվով 6 անցումներ: Այս հատվածներում ճանապարհային պատվածքի միջին լուսավորվածությունը եղել է 1.57 լուքս, առավելագույն լուսավորվածությունը 4 լուքս, ինչը նշանակում է, որ հետիոտնային անցումների վրա չեն պահպանվում լուսավորվածության ավելացման նորմատիվային պահանջները:

**Մոնիթորինգի արդյունքների ամփոփաթեթը Թումանյան համայնքի համար՝**

Մոնիթորինգային ցուցանիշ	Արդյունք
<b>Ցուցանիշ A:</b> Փողոցային լուսավորությամբ ապահովված բնակավայրերի քանակ/համայնքի կազմում ներառված բնակավայրերի քանակ	5/7
<b>Ցուցանիշ B:</b> Փողոցային լուսավորությամբ ապահովված բնակավայրերի բնակիչների մասնաբաժինը համայնքի ընդհանուր բնակչության թվի նկատմամբ	97%
<b>Ցուցանիշ C:</b> Համայնքի՝ փողոցային լուսավորությամբ ապահովվածության աստիճան <i>C=լուսավորությամբ ապահովված դիտարկված փողոցների երկարություն/ընդամենը դիտարկված փողոցների երկարություն</i>	80%
<b>Ցուցանիշ D:</b> Փողոցի երկայնքով լուսավորության հենասյուների քայլ <i>D=լուսավորության հենասյուներով ապահովված փողոցի երկարություն/տվյալ փողոցում առկա հենասյուների քանակ</i>	72 մետր
<b>Ցուցանիշ E:</b> Սարքին վիճակում գտնվող լուսատուներով կահավորված հենասյուների մասնաբաժին <i>E=սարքին վիճակում գտնվող լուսատուներով կահավորված հենասյուներ/ընդհանուր հենասյուների թիվ</i>	96%
<b>Ցուցանիշ F:</b> Էներգախնայող (LED) լուսատուների մասնաբաժին ընդհանուր լուսատուների թվի մեջ <i>F=էներգախնայող լուսատուներ/ընդհանուր լուսատուների թիվ</i>	53.6%
<b>Ցուցանիշ G:</b> Ճանապարհային պատվածքի միջին լուսավորվածության ցուցանիշ <i>G=համայնքում արված բոլոր բոլոր չափումների միջին թվաբանական</i>	5 լուքս

## 2.6 Փողոցային լուսավորության համակարգը Նոյեմբերյան խոշորացված համայնքում

### 2.6.1 Փողոցային լուսավորության ապահովման ոլորտում Նոյեմբերյան համայնքի տեխնիկական ապահովվածությունը

Համայնքի բոլոր բնակավայրերում առկա են լուսավորության հենասյուներ բացի Բարեկամավան բնակավայրից: Բոլոր բնակավայրերում միասին առկա են ընդհանուր առմամբ թվով 1772 հենասյուներ, որոնց գերակշիռ մասը տեղակայված են Նոյեմբերյան քաղաքում: Մեծ թվով հենասյուներ են առկա նաև Բերդավան, Կոթի, Ոսկեվան, Բաղանիս բնակավայրերում: Համաձայն համայնքի կողմից տրամադրված տվյալների բոլոր հենասյուները կահավորված են սարքին վիճակում գտնվող լուսատուներով բացառությամբ Բերդավանում գտնվող 10 հենասյուների, որոնց դեպքում լուսատուները բացակայում են (Աղյուսակ 2.6.1): Լուսավորության համակարգի սպասարկման համար համայնքը չունի ոչ մի մեքենա-աշտարակ:

Բնակավայր	Լուսավորության հենասյուներ և լուսատուներ			
	Լուսավորության հենասյուների քանակ	Լուսատուներով կահավորված հենասյուների քանակ	Սարքին վիճակում գտնվող լուսատուների քանակ	Լուսավորության համակարգի միացման և անջատման ժամերը
Նոյեմբերյան	875	875	875	Ամառային ամիսներ 21:00-00:00 Զմեռային ամիսներ 18:00-00:00
Բաղանիս	120	120	120	Ամառային ամիսներ 21:00-00:00 Զմեռային ամիսներ 18:00-01:00
Բարեկամավան	0	0	0	-
Բերդավան	250	240	240	Ամառային ամիսներ 21:00-00:00 Զմեռային ամիսներ 18:00-01:00
Դովեղ	125	125	125	Ամառային ամիսներ 21:00-02:00 Զմեռային ամիսներ 18:00-02:00
Կոթի	171	171	171	Ամառային ամիսներ 21:00-03:00 Զմեռային ամիսներ 18:00-03:00
Ոսկեպար	65	65	65	Ամառային ամիսներ 21:00-03:00 Զմեռային ամիսներ 18:00-03:00
Ոսկեվան	130	130	130	Ամառային ամիսներ 21:00-01:00 Զմեռային ամիսներ 18:00-01:00
Ջուջևան	36	36	36	Ամառային ամիսներ 21:00-00:30 Զմեռային ամիսներ 20:00-00:30
Ընդամենը	1772	1762	1762	

Աղյուսակ 2.6.1: Նոյեմբերյան խոշորացված համայնքի բնակավայրերում առկա լուսավորության հենասյուները, առկա լուսատուները և լուսավորության համակարգի միացման-անջատման ժամերը

**2.6.2 Նոյեմբերյան համայնքի բնակչության բավարարվածությունը փողոցային լուսավորության ապահովման ծառայություններից**

Նոյեմբերյան համայնքում իրականացվել է 153 քանակական դեմ առ դեմ հարցումներ համայնքի բնակիչների հետ՝ ընդգրկելով համայնքի մաս կազմող բոլոր բնակավայրերի բնակիչներին: Ըստ առանձին բնակավայրերի հարցման ենթարկված բնակչության թվի բաշխումը ներկայացված է Աղյուսակ 2.6.2-ում:

Բնակավայր	Մշտական բնակչության թիվը բնակավայրում	Հարցումների քանակ	Ընդհանուրի մեջ մասնաբաժինը
Նոյեմբերյան	6082	46	30%
Բաղանիս	885	10	7%
Բարեկամավան	476	6	4%
Բերդավան	3516	31	20%
Դովեղ	604	7	4%
Կոթի	2133	21	14%
Ոսկեպար	912	9	6%
Ոսկեվան	1397	16	10%
Ջուջևան	571	7	5%
Ընդամենը	16576	153	100%

**Աղյուսակ 2.6.2 Իրականացված քանակական դեմ առ դեմ հարցումների քանակ Նոյեմբերյան համայնքում**


Նոյեմբերյան համայնքի բնակիչների կողմից փողոցային լուսավորության ապահովումը գնահատվել է որպես կարևոր հիմնախնդիր: Հարցին թե որքանով է կարևոր փողոցային լուսավորության առկայությունը համայնքում ընտանիքների և համայնքի այլ հիմնախնդիրների համատեքստում՝ Դիլիջան համայնքի բնակչության 95%-ը պատասխանել է, որ այս հիմնախնդիրը չափազանց կարևոր է, 3%-ը՝ ավելի շուտ կարևոր է և միայն 1%-ի կողմից այս խնդիրը կարևոր չի համարվել (Աղյուսակ 2.6.3):

Բնակավայր	Չափազանց կարևոր է	Ավելի շուտ կարևոր է	Ավելի շուտ կարևոր չէ
Նոյեմբերյան	93%	4%	2%
Բաղանիս	100%	0%	0%
Բարեկամավան	100%	0%	0%
Բերդավան	97%	0%	3%
Դովեղ	50%	50%	0%
Կոթի	100%	0%	0%
Ոսկեպար	100%	0%	0%
Ոսկեվան	100%	0%	0%
Ջուջևան	100%	0%	0%
Ընդամենը	95%	3%	1%

**Աղյուսակ 2.6.3 փողոցային լուսավորության ապահովվածության հիմնախնդրի կարևորությունը համայնքի բնակիչների համար**

Բնակիչներին առաջարկվել է գնահատել, թե իրենց համայնքի ներբնակավայրային և միջբնակավայրային փողոցները որքանով են ապահովված փողոցային լուսավորությամբ՝ առաջարկվելով գնահատման համար


ընտրել «լիովին ապահովված են», «մասամբ ապահովված են» և «ընդհանրապես ապահովված չեն» տարբերակներից որևէ մեկը: Համաձայն արդյունքների՝ Նոյեմբերյան, Բաղանիս, Ոսկեպար բնակավայրերի բոլոր բնակիչները նշել են, որ ներբնակավայրային գլխավոր փողոցները լիովին ապահովված են փողոցային լուսավորությամբ: Այս ցուցանիշը բարձր է եղել նաև Կոթի, Ոսկեվան և Ջուջևան բնակավայրերի դեպքում: Բերդավանի դեպքում այս կարծիքն են արտահայտել հարցման ենթարկված բնակիչների 61%-ը, Դովեղում՝ 29%-ը, իսկ այս բնակավայրում հարցման ենթարկված բնակչության 71%-ը նշել է, որ գլխավոր փողոցները մասամբ են ապահովված լուսավորությամբ: Ինչ վերաբերում է Բարեկամավան բնակավայրին, ապա այստեղ հարցման ենթարկված բնակչության 83%-ը նշել է, որ գլխավոր փողոցներում ընդհանրապես առկա չէ փողոցային լուսավորություն (Գրաֆիկ 32)



**Գրաֆիկ 31. Ներբնակավայրային գլխավոր փողոցներում լուսավորության առկայությունն ըստ բնակիչների գնահատականների**


Ինչ վերաբերում է ներբնակավայրային երկրորդական փողոցներին, ապա այստեղ առավելապես գերակշռում են փողոցները «մասամբ ապահովված են լուսավորությամբ» պատասխանները, բացառությամբ Նոյեմբերյան բնակավայրի, որտեղ հարցման ենթարկված բնակիչների 85%-ը նշել է, որ երկրորդական փողոցները լիովին ապահովված են լուսավորությամբ և Բարեկամավանի և Կոթիի, որտեղ գերակշռել է փողոցներն «ընդհանրապես ապահովված չեն լուսավորությամբ» պատասխանները (Գրաֆիկ 33):





**Գրաֆիկ 32. Ներքնակավայրային երկրորդական փողոցներում, նրբանցքներում, փակուղիներում լուսավորության առկայությունն ըստ բնակիչների գնահատականների**


Միջնակավայրային ճանապարհների դեպքում նույնպես գերակշռել են «մասամբ ապահովված եմ» տարբերակները, բացառությամբ Նոյեմբերյանի, որի դեպքում գերակշռել են «լիովին ապահովված եմ» տարբերակները, Բարեկամականի և Կոթիի, որոնց դեպքում առավել շատ նշվել են «ընդհանրապես ապահովված չեմ» պատասխանները (Գրաֆիկ 34):



**Գրաֆիկ 33. Միջնակավայրային ճանապարհների երկայնքով լուսավորության առկայությունն ըստ բնակիչների գնահատականների**

Բնակիչներին հարց է տրվել, թե ըստ իրենց կարծիքի ընդհանուր առմամբ մոտավոր հաշվարկներով իրենց գյուղի փողոցների քանի տոկոսն է ապահովված փողոցային լուսավորությամբ, ինչին ի պատասխան տրված գնահատականների միջինացված արժեքները ներկայացված են Գրաֆիկ 35-ում: Համաձայն գնահատման

արդյունքների՝ Նոյեմբերյան քաղաքում լուսավորությամբ է ապահովված փողոցների 86%-ը, որին հետևում են Բաղանիս և Բերդավան բնակավայրերը, որտեղ այս միջինացված ցուցանիշները կազմել են համապատասխանաբար 74% և 72%: Ոսկեվանում և Ջուջևանում արձանագրվել է 68% արդյունք: Դովեղում, Կոթիում և Ոսկեպարում տրվել են միջինին մոտ գնահատականներ, իսկ ահա Բարեկամավանում ինչպես և սպասվում էր ցուցանիշը եղել է 0% (Գրաֆիկ 35):



**Գրաֆիկ 34. Բնակավայրերի փողոցների քանի տոկոսն է ապահովված լուսավորությամբ. միջինացված ցուցանիշ ըստ բնակիչների գնահատականների**

Համաձայն բնակիչների գնահատականների Նոյեմբերյան քաղաքում ամառային ամիսներին լուսավորությունը միացվում է 20:00, ձմեռային ամիսների համար նշվել է ն՝ 18:00 և 19:00 տարբերակները, իսկ որպես անջատման ժամ երկու ռեժիմների համար էլ նշվել է 00:00 տարբերակը: Բաղանիս, Բերդավան, Դովեղ, Կոթի, Ոսկեպար բնակավայրերի համար որպես լուսավորության միացման ժամ ամառային ամիսների համար առավել հաճախ նշվել է 20:00 տարբերակը, ձմեռային ամիսների համար տրվել են տարբեր պատասխաններ՝ 17:00-ից մինչև 20:00 միջակայքում: Կոթի, Ոսկեվան և Ջուջևան բնակավայրերի դեպքում տրվել են տարբեր պատասխաններ՝ համապատասխանաբար 19:00 կամ 20:00, 20:00 կամ 21:00 և 21:00: Տարբերվում են նաև լուսավորության անջատման ժամերը այս բնակավայրերի համար. որոշ դեպքերում բնակավայրերի բնակիչները նշել են, որ լուսավորություն միացված է լինում բոլոր ամիսներին (Աղյուսակ 2.6.4):

Բնակավայր	Ամառային ամիսներ		Զմեռային ամիսներ	
	Միացման ժամ	Անջատման ժամ	Միացման ժամ	Անջատման ժամ
Նոյեմբերյան	20:00	00:00	18:00 կամ 19:00	00:00
Բաղանիս	20:00	00:00 կամ 01:00	17:00 կամ 18:00	00:00 կամ 01:00
Բերդավան	20:00	00:00 -04:00	18:00	00:00-02:00
Դովեղ	20:00	00:00	18:00	00:00
Կոթի	19:00 կամ 20:00	06:00	17:00-19:00	05:00-07:00
Ոսկեպար	20:00	00:00 կամ 06:00	18:00 կամ 20:00	00:00 կամ 08:00
Ոսկեվան	20:00 կամ 21:00	01:00	18:00 կամ 19:00	01:00
Ջուջևան	21:00	00:00 կամ 01:00	17:00 -19:00	00:00

**Աղյուսակ 2.6.4. Նոյեմբերյան համայնքում փողոցային լուսավորության միացման և անջատման ժամերն ըստ բնակիչների կողմից տրված պատասխանների**

Հարցին հարցման ենթարկված բնակչության շուրջ 93%-ը միացման/անջատման այդ ժամերը համարել է բավարար, և միայն 6%-ն է համարել անբավարար: Լուսավորության միացման տևողությունը համեմատաբար անբավարար են համարել Դովեղ, Կոթի, Ոսկեվան, Ջուջևան բնակավայրերի բնակիչները (Աղյուսակ 2.6.5)

Բնակավայր	Ընդհանրապես բավարար չեն	Ավելի շուտ բավարար չեն	Ավելի շուտ բավարար են	Լիովին բավարար են
Նոյեմբերյան	2%	0%	32%	66%
Բաղանիս	0%	0%	60%	40%
Բարեկամավան	0%	0%	0%	100%
Բերդավան	0%	3%	26%	71%
Դովեղ	0%	14%	29%	57%
Կոթի	10%	5%	48%	38%
Ոսկեպար	0%	0%	13%	88%
Ոսկեվան	0%	13%	25%	63%
Ջուջևան	0%	14%	71%	14%
Ընդամենը	2%	4%	34%	59%


**Աղյուսակ 2.6.5 Բնակիչների գնահատականները փողոցային լուսավորության միացման տևողության վերաբերյալ**

Ինչ վերաբերում է համայնքապետարանի կողմից փողոցային լուսատուների սպասարկմանը, ապա հարցման ենթարկված բնակչության կողմից չի նշվել «համայնքապետարանն ընդհանրապես չի իրականացնում խափանված լուսատուների փոխարինման աշխատանքներ» տարբերակը, 9%-ը նշել է, որ «իրականացնում է երբեմն-երբեմն, խնդիրներ առաջանալուց հետո բավականին ուշ»: 65%-ի կարծիքով համայնքապետարանը խափանված լուսատուների սպասարկման աշխատանքներ «իրականացնում է հաճախ, խնդիրներ առաջանալուց անմիջապես հետո», իսկ հարցման ենթարկված բնակչության 26%-ը նշել է, որ մինչ տվյալ պահը խնդիրներ չեն առաջացել (Աղյուսակ 2.6.6):

Բնակավայր	Իրականացնում է երբեմն-երբեմն, խնդիրներ առաջանալուց հետո բավականին ուշ	Իրականացնում է հաճախ, խնդիրներ առաջանալուց անմիջապես հետո	Խնդիրներ չեն առաջացել մինչ այժմ
Նոյեմբերյան	0%	79%	21%
Բաղանիս	0%	60%	40%
Բարեկամավան	100%	0%	0%
Բերդավան	6%	77%	16%
Դովեղ	0%	71%	29%
Կոթի	24%	33%	43%
Ոսկեպար	11%	78%	11%
Ոսկեվան	13%	69%	19%
Ջուջևան	29%	0%	71%
Ընդամենը	9%	65%	26%

**Աղյուսակ 2.6.6 Բնակիչների գնահատականները փողոցային լուսատուների սպասարկման վերաբերյալ**

Համայնքի բնակիչներին առաջարկվել է 1-ից 10 բալանոց սանդղակով գնահատել Փողոցային լուսավորության ապահովման ոլորտում համայնքապետարանի կողմից մատուցվող ծառայություններից իրենց ընդհանուր բավարարվածությունը: Բացի Բարեկամավան և Ջուջևան բնակավայրից, մյուս բոլոր բնակավայրերի դեպքում տրվել են միջինից բարձր գնահատաններ: Առավել բարձր գնահատականներ են տրվել Բերդավան, Բաղանիս, Ոսկեվան և Ոսկեպար բնակավայրերի բնակիչների կողմից: Նոյեմբերյան քաղաքի բնակիչների կողմից տրված միջին գնահատականը կազմել է 5.87: Համայնքապետարանի միջին գնահատականը ամբողջ խոշորացված համայնքի համար կազմել է **6,7** միավոր հնարավոր 10-ից (Գրաֆիկ 18):



**Գրաֆիկ 35. Փողոցային լուսավորության ապահովման ծառայություններից բնակչության բավարարվածությունը Նոյեմբերյան համայնքի բնակավայրերի համար**

Համայնքի բնակիչներին հնարավորություն է տրվել ներկայացնել իրենց առաջարկություններն ուղղված փողոցային լուսավորության ապահովման ծառայության որակի բարելավմանը: Համայնքի բնակիչների կողմից ներկայացվել են հետևյալ առաջարկները՝ լուսավորություն առկա լինի նաև երկրորդական փողոցներում, որը հասկապես նշվել է Կոթի և Ոսկեվան բնակավայրի բնակիչների կողմից, բնակավայրերի ամբողջ տարածքն ապահովված լինի լուսավորությամբ, ավելացվի լուսավորության հենասյուների քանակը, բացառվեն ցերեկային ժամերին լուսատուների միացման դեպքերը և այլն (Աղյուսակ 2.6.7):

Առաջարկություն	Նոյեմբերյան	Բաղանիս	Բարեկամական	Բերրական	Դովեդ	Կոթի	Ոսկեպար	Ոսկեկան	Զուջևան
Լուսավորություն առկա լինի նաև երկրորդական փողոցներում	0	3	0	1	2	17	0	12	4
Ամբողջ բնակավայրի տարածքն ապահովված լինի լուսավորությամբ	0	0	4	3	3	1	1	1	0
Ավելացվի լուսավորության հենասյունների քանակը	0	0	2	0	0	1	0	1	0
Բացառել ցերեկային ժամերին լուսաստունների միացումը	0	0	0	0	0	2	0	1	0
Առավել երկար ժամանակով միացված լինի լուսավորությունը	0	0	0	0	1	0	0	0	1
Միջբնակավայրային ճանապարհներում ավելացնեն լույս	1	0	0	0	0	0	0	1	0
Գոնե գլխավոր փողոցներն ապահովված լինեն լուսավորությամբ	0	0	0	0	0	0	0	0	1
Տեղադրվեն առավել հզոր լուսաստուներ	0	1	0	0	0	0	0	0	0

**Աղյուսակ 2.6.7: Փողոցային լուսավորության ոլորտի բարելավմանն ուղղված առաջարկներ համայնքի բնակավայրերի**

### 2.6.3 Նոյեմբերյան խոշորացված համայնքում փողոցային լուսավորության ապահովման ոլորտի մոնիթորինգի արդյունքներ

Նոյեմբերյան խոշորացված համայնքում մոնիթորինգ է իրականացվել ընդհանուր առմամբ 19 փողոցներում՝ ներառելով համայնքի մաս կազմող բոլոր բնակավայրերը, իսկ բնակավայրերում դիտարկվել են ինչպես գլխավոր, այնպես էլ երկրորդական փողոցները, նրբանցները և փակուղիները: Ընդհանուր առմամբ դիտարկման են ենթարկվել 10 գլխավոր և 9 երկրորդական փողոցներ: Համայնքում դիտարկման ենթարկված փողոցների ընդհանուր երկարությունը կազմել է 21,250 կմ: Դիտարկված 19 փողոցներից լուսավորության հենասյուներ առկա են եղել 14-ում կամ ընդամենը դիտարկված փողոցների 74%-ում: Դիտարկված ընդհանուր 21,250 կմ երկարությամբ փողոցներից լուսավորության հենասյուներով են ապահովված եղել ընդհանուր առմամբ փողոցների 15,9 կմ հատվածը համ դիտարկված ընդհանուր փողոցների երկարության 75%-ը: Մոնիթորինգի այցելության ժամանակ լուսավորություն միացված է եղել դիտարկված ընդհանուր փողոցների երկարության 51%-ում կամ 10,9 կմ հատվածում (Աղյուսակ 2.6.8):

Բնակավայր	Փողոցներում լուսավորության առկայություն (քանակ)		Փողոցներում լուսավորության առկայություն (երկարություն, մետր)		Միացված է եղել լուսավորությունը (երկարություն, մետր)
	Առկա են հենասյուներ	Առկա չեն հենասյուներ	Առկա են հենասյուներ	Առկա չեն հենասյուներ	
Նոյեմբերյան	2	0	2800	1200	2800
Բաղանիս	1	0	2200	0	2200
Բարեկամավան	0	2	0	1550	-
Բերդավան	4	0	1800	0	1800
Դովեղ	1	0	400	0	400
Կոթի	1	1	3000	800	3000
Ոսկեպար	2	1	1600	900	1600
Ոսկեվան	2	0	2600	0	2600
Ջուջևան	1	1	1500	900	1500
Ընդամենը	14	5	15900	5350	10900

**Աղյուսակ 2.6.8. Փողոցներում լուսավորության հենասյուների առկայություն և լուսավորում**

Ընդհանուր առմամբ մոնիթորինգի կողմից հաշվարկվել է թվով 346 լուսավորության հենասյուներ, որոնցից 21-ը չեն ունեցել լուսատուներ կամ կահավորված են եղել ոչ սարքին վիճակում գտնվող լուսատուներով (ընդհանուր լուսատուների 6%-ը): Ընդհանուր առմամբ հենասյուների տեղակայման միջին խտությունը դիտարկված փողոցների երկայնքով կազմել է 84 մետր<sup>15</sup> (Աղյուսակ 2.6.9):

Դիտարկված բոլոր հենասյուները եղել են մեկ լուսատուով կահավորված: Լամպ ամրացնելու հարմարանք չունեցող հենասյուներ առկա չեն եղել: Համաձայն մոնիթորինգի գնահատականների 261 լուսատուներ եղել են էներգախնայող (LED) լուսատուներ:

<sup>15</sup> Ցուցանիշը հաշվարկվել է դիտարկման ենթարկված փողոցների ընդհանուր երկարությունը (որտեղ առկա են եղել լուսավորության հենասյուներ) հարաբերելով տվյալ փողոցում առկա հենասյուների քանակի վրա

Բնակավայր	Առկա հենասյուների քանակ	Լուսատու շունեցող/ոչ սարքին վիճակում գտնվող լուսատու ունեցող հենասյուների քանակ	Հենասյուների տեղակայման միջին խտություն (մետր)
Նոյեմբերյան	53	20	93
Բաղանիս	70	0	169
Բերդավան	60	0	33
Դովեղ	3	0	29
Կոթի	80	1	214
Ոսկեվան	80	0	97
Ընդամենը/ միջինում	346	21	84

**Աղյուսակ 2.6.9 Հենասյուների քանակը և լուսատուների առկայությունը բնակավայրերում<sup>16</sup>**

Այն փողոցներում, որտեղ միացված է եղել փողոցային լուսավորությունը չափվել է նաև լուսավորվածության չափը: Դիտարկումն իրականացվել է փողոցի ամենաշատ լուսավորված հատվածում (որը որոշվել է ակնադիտական մեթոդով) և փողոցի երեք մասերում<sup>17</sup>: Փողոցների առավելագույն լուսավորված հատվածում առավելագույն լուսաքի չափը արձանագրվել է Բերդավանում՝ 30 լուսք: Միջին լուսավորվածության չափը Նոյեմբերյանում կազմել է 9 լուսք, ինչը նշանակալի ցածր է սահմանված նորմերից՝ հաշվի առնելով, որ Նոյեմբերյանը քաղաքային բնակավայր է: Գյուղական բնակավայրերում լուսավորվածությունը հիմնականում մոտ է եղել սահմանված նորմերին տատանվելով 4-ից 11 լուսք սահմաններում (Աղյուսակ 2.6.10): Հիշեցնենք, որ գյուղական բնակավայրերում բնակելի կառուցմապատման հիմնական փողոցների համար ճանապարհային պատվածքի լուսավորվածության նվազագույն շեմ սահմանված է 6 լուսքը, իսկ երկրորդական փողոցների և նրբանցքների համար՝ 4 լուսքը:

Բնակավայր	Առավելագույն լուսավորված հատվածում լուսաքի չափը	Փողոցների լուսավորվածության միջին լուսաքի չափը
Նոյեմբերյան	15	9
Բաղանիս	13	5
Բերդավան	30	11
Դովեղ	14	6
Կոթի	14	6
Ոսկեվան	15	4
Առավելագույնը/միջինում	30	7.8

**Աղյուսակ 2.6.10 Ճանապարհային պատվածքի լուսավորվածության չափերը Նոյեմբերյան համայնքի բնակավայրերում**

Մոնիթորինգի ընթացքում նախատեսվում էր ճանապարհային պատվածքի լուսավորվածության չափումներ իրականացնել նաև հետիոտնային անցումների հատվածներում, քանի որ այստեղ նորմատիվները տարբերվում են: Մոնիթորների կողմից հետիոտնային անցումներ արձանագրվել են երեք հետիոտնային անցումներ, երկուսը՝ Նոյեմբերյանում, մեկը՝ Բաղանիսում: Այս հատվածներում ճանապարհային

<sup>16</sup> Ոսկեպար և Ջուլեան բնակավայրերի համար տվյալները բացակայում են

<sup>17</sup> Տես առավել մանրամասն Մեթոդաբանությունը բաժնում



պատվածքի միջին լուսավորվածությունը եղել է 5.14 լյուքս, առավելագույն լուսավորվածությունը 15 լյուքս, որն արձանագրվել է Նոյեմբերյան քաղաքում:

**Մոնիթորինգի արդյունքների ամփոփաթեթը Նոյեմբերյան համայնքի համար՝**

Մոնիթորինգային ցուցանիշ	Արդյունք
<b>Ցուցանիշ A:</b> Փողոցային լուսավորությամբ ապահովված բնակավայրերի քանակ/համայնքի կազմում ներառված բնակավայրերի քանակ	8/9
<b>Ցուցանիշ B:</b> Փողոցային լուսավորությամբ ապահովված բնակավայրերի բնակիչների մասնաբաժինը համայնքի ընդհանուր բնակչության թվի նկատմամբ	98%
<b>Ցուցանիշ C:</b> Համայնքի՝ փողոցային լուսավորությամբ ապահովվածության աստիճան <i>C=լուսավորությամբ ապահովված դիտարկված փողոցների երկարություն/ընդամենը դիտարկված փողոցների երկարություն</i>	51%
<b>Ցուցանիշ D:</b> Փողոցի երկայնքով լուսավորության հենասյուների քայլ <i>D=լուսավորության հենասյուներով ապահովված փողոցի երկարություն/տվյալ փողոցում առկա հենասյուների քանակ</i>	84 մետր
<b>Ցուցանիշ E:</b> Սարքին վիճակում գտնվող լուսատուներով կահավորված հենասյուների մասնաբաժին <i>E=սարքին վիճակում գտնվող լուսատուներով կահավորված հենասյուներ/ընդհանուր հենասյուների թիվ</i>	94%
<b>Ցուցանիշ F:</b> Էներգախնայող (LED) լուսատուների մասնաբաժին ընդհանուր լուսատուների թվի մեջ <i>F=էներգախնայող լուսատուներ/ընդհանուր լուսատուների թիվ</i>	74%
<b>Ցուցանիշ G:</b> Ճանապարհային պատվածքի միջին լուսավորվածության ցուցանիշ <i>G=համայնքում արված բոլոր բոլոր չափումների միջին թվաբանական</i>	7.8 լք

### **Գլուխ 3: Փողոցային լուսավորության ապահովման ոլորտում հանրային ծառայությունների մատուցման համեմատական վերլուծություն**

#### **3.1 Խոշորացված համայնքների միջեվ համեմատություն ըստ փողոցային լուսավորության ապահովման ոլորտում համայնքների տեխնիկական հնարավորությունների**

Լուսավորության համակարգը սպասարկող տեխնիկա առկա չէ խոշորացված 6 համայնքներից 5-ում: Միայն Դիլիջան համայնքում առկա է 2017 թվականի արտադրության 2 մեքենա-աշտարակներ, որը սպասարկում է համայնքի լուսավորության համակարգը (Աղյուսակ 3.1.1):

Խոշորացված համայնք	Առկա տեխնիկա
Ախուրյան	Համայնքը սպասարկող տեխնիկա չունի
Աշոցք	Համայնքը սպասարկող տեխնիկա չունի
Թումանյան	Համայնքը սպասարկող տեխնիկա չունի
Ստեփանավան	Համայնքը սպասարկող տեխնիկա չունի
Դիլիջան	Համայնքն ունի 2017 թվականի արտադրության 2 մեքենա-աշտարակներ, որոնցից մեկի աղեղի թռիչքի բարձրությունը կազմում է 12 մետր, մյուսինը՝ 22 մետր:
Նոյեմբերյան	Համայնքը սպասարկող տեխնիկա չունի

#### **Աղյուսակ 3.1.1 Լուսավորության համակարգի սպասարկող տեխնիկայի առկայությունը խոշորացված համայնքներում**

Առավել մեծ թվով լուսավորության հենասյուներ առկա են Դիլիջան խոշորացված համայնքում՝ թվով 2096 հատ, որից սպասարկում են 1881-ը: Հաջորդիվ առավել մեծ թվով հենասյուներ առկա են Նոյեմբերյանում և Ստեփանավանում՝ համապատասխանաբար 1772 և 1485 հատ: Լուսավորության հենասյուների թիվը նշանակալիորեն փոքր է Թումանյան համայնքում, որտեղ ընդհանուր հաշվարկով առկա է 173 հենասյուն (Աղյուսակ 3.1.2):

Նոյեմբերյան, Դիլիջան և Ախուրյան համայնքներում սպասարկող հենասյուների մասնաբաժինը ընդհանուր թվով առկա հենասյուների նկատմամբ բավականին բարձր է, ընդ որում Նոյեմբերյանում հասնում է 99%-ի: Ստեփանավանում ներկայացվել է մոնիթորինգի արդյունքում արձանագրված ցուցանիշը և այն կազմում է 77%: Այս ցուցանիշը համեմատաբար ցածր է Աշոցքում և Թումանյանում, որտեղ սպասարկում են առկա հենասյուների 65%-ը և 57%-ը:

Խոշորացված համայնք	Մշտական բնակչության թիվը	Համայնքի վարչական տարածքը մ <sup>2</sup>	Համայնքի տարածքում առկա լուսավորության հենասյուների թիվը <sup>18</sup>	Համայնքի տարածքում առկա սպասարկող լուսատուների թիվը <sup>19</sup>	Սպասարկող հենասյուների մասնաբաժին
Ախուրյան	17594		681	608	89%
Աշոցք	7568		480	313	65%
Թումանյան	4621		173	98	57%
Ստեփանավան	20527		1485	1597	77% <sup>20</sup>
Դիլիջան	26591		2096	1881	90%
Նոյեմբերյան	16576		1772	1762	99%

**Աղյուսակ 3.1.2 Լուսավորության հենասյուների առկայությունը խոշորացված համայնքներում**

Միայն Ախուրյան համայնքի բոլոր բնակավայրերն են ապահովված փողոցային լուսավորությամբ: Աշոցքի դեպքում փողոցային լուսավորությամբ ապահովված չէ միայն Սիզավետ բնակավայրը, Թումանյանի դեպքում լուսավորություն առկա չէ Աթան, Ահնիձոր և Շամուտ բնակավայրերում: Ստեփանավան համայնքում լուսավորությամբ ապահովված են Ստեփանավան քաղաքը և Կաթնաղբյուր գյուղը. լուսավորության համակարգ բացակայում է Ուրասար գյուղում: Դիլիջանում փողոցային լուսավորություն առկա է 7 խոշորացված համայնքներից 5-ում, բացակայում է Աղավնաձոր և Խաչարձան գյուղերում: Նոյեմբերյանում լուսավորություն առկա չէ միայն մեկ բնակավայրում՝ Բարեկամավանում, մնացած բոլոր բնակավայրերն ապահովված են փողոցային լուսավորությամբ: Եթե այս ցուցանիշները փորձենք ներկայացնել համայնքներում բնակչության թվերի տեսքով, ապա ընդհանուր առմամբ համայնքներում բնակվող բնակչության գերակշիռ մասն ապրում է բնակավայրերում, որտեղ առնվազն մեկ փողոց ապահովված է լուսավորությամբ: Այս ցուցանիշն առավել ցածր է Թումանյան համայնքում (87%), որտեղ համեմատաբար ավելի շատ են ընդհանրապես լուսավորություն չունեցող բնակավայրերի թիվը (Աղյուսակ 3.1.3):

<sup>18</sup> Ներկայացված է համաձայն համայնքապետարանների կողմից տրված տվյալների  
<sup>19</sup> Ներկայացված է համաձայն համայնքապետարանների կողմից տրված տվյալների  
<sup>20</sup> Ներկայացված է ըստ մոնիթորինգի արդյունքների

Խոշորացված համայնք	Համայնքի մաս կազմող բնակավայրերի թիվը	Բնակավայրեր, որտեղ առկա է փողոցային լուսավորություն	Փողոցային լուսավորությամբ ապահովված բնակավայրերի բնակչության մասնաբաժինը
Ախուրյան	8	8	100%
Աշոցք	11	10	95%
Թումանյան	7	4	87%
Ստեփանավան	3	2	98%
Դիլիջան	7	5	97%
Նոյեմբերյան	10	9	98%

**Աղյուսակ 3.1.3 Լուսավորության համակարգի առկայությունը խոշորացված համայնքների բնակավայրերում**

Համայնքի՝ փողոցային լուսավորությամբ ապահովվածության աստիճանով<sup>21</sup> առավել բարձր ցուցանիշներ են գրանցել Ախուրյան, Դիլիջան և Ստեփանավան համայնքները՝ համապատասխանաբար 87%, 80% և 79%<sup>22</sup>: Ցուցանիշն առավել ցածր է Թումանյանում, որտեղ արձանագրվել է 35% արդյունք: Աշոցքում և Նոյեմբերյանում գրանցվել են միջինին մոտ ցուցանիշներ՝ 57% և 51%:

Փողոցի երկայնքով լուսավորության հենասյուների քայլն առավել մեծ է Թումանյան համայնքում՝ կազմելով 121 մետր, հաջորդիվ Նոյեմբերյան համայնքն է՝ 84 մետր: Աշոցքում և Դիլիջանում այս ցուցանիշը բավականին նման է՝ համապատասխանաբար 74 և 72 մետր: Փողոցի երկայնքով լուսավորության հենասյուների քայլը համեմատաբար առավել փոքր է Ախուրյան և Ստեփանավան համայնքներում կազմելով համապատասխանաբար 46 մետր և 49 մետր:

Թումանյան, Դիլիջան և Նոյեմբերյան բնակավայրերում սարքին վիճակում գտնվող լուսատուներով կահավորված հենասյուների մասնաբաժինը ընդհանուր հենասյուների թվի նկատմամբ բավականին բարձր է՝ կազմելով 94%-ից բարձր: Աշոցքում այս ցուցանիշը կազմել է 87%, իսկ Ստեփանավանում՝ 77%: Մյուս համայնքների համեմատ ցուցանիշը ամենացածրն է եղել Ախուրյանում՝ կազմելով 56%:

Թումանյան համայնքում, համաձայն մոնիթորինգի արդյունքների, տեղադրված բոլոր լուսատուները եղել են էներգախնայող: Այս ցուցանիշը բարձր է նաև Աշոցք և Նոյեմբերյան բնակավայրերում կազմելով համապատասխանաբար 83% և 74%: Դիլիջանում էներգախնայող են տեղադրված լուսատուների 54%-ը, Ախուրյանում՝ 38%-ը, իսկ ահա Ստեփանավանում այսպիսի լուսատուներ չեն արձանագրվել (Աղյուսակ 3.1.4):

<sup>21</sup> Համայնքի՝ փողոցային լուսավորությամբ ապահովվածության աստիճանը հաշվարկվել է ըստ մոնիթորինգի արդյունքներով լուսավորությամբ ապահովված դիտարկված փողոցների երկարությունը հարաբերելով ընդամենը դիտարկված փողոցների երկարությանը

<sup>22</sup> Ցուցանիշը մեկնաբանելիս անհրաժեշտ է նկատի ունենալ, որ դիտարկման ենթակա փողոցների ցանկում պարտադիր ներառված են եղել բնակավայրերի գլխավոր փողոցները, որոնք սովորաբար ապահովված են լինում լուսավորությամբ, ուստի այս ցուցանիշը զուտ պատահականության սկզբունքով ընտրված փողոցների համար հաշվարկված չէ

Խոշորացված համայնք	Համայնքի՝ փողոցային լուսավորությամբ ապահովվածության աստիճան	Փողոցի երկայնքով լուսավորության հենասյուների քայլ	Սարքին վիճակում գտնվող լուսատուներով կահավորված հենասյուների մասնաբաժին <sup>23</sup>	Էներգախնայող (LED) լուսատուների մասնաբաժին ընդհանուր լուսատուների թվի մեջ
Ախուրյան	87%	46 մետր	56%	38%
Աշոցք	57%	74 մետր	87%	83%
Թումանյան	35%	121 մետր	96%	100%
Ստեփանավան	79%	49 մետր	77%	0%
Դիլիջան	80%	72 մետր	96%	54%
Նոյեմբերյան	51%	84 մետր	94%	74%

**Աղյուսակ 3.1.4 Լուսավորության հենասյուները և լուսատուների տիպը խոշորացված համայնքներում ըստ մոնիթորինգի արդյունքների**

Ճանապարհային պատվածքի առավելագույն լուսավորվածության ցուցանիշն արձանագրվել է Թումանյան համայնքում՝ կազմելով 71 լք: Նոյեմբերյանում առավելագույն լուսավորված հատվածը եղել է 30 լք: Մյուս համայնքներում առավելագույն լուսավորված հատվածը չի գերազանցել 20լք-ն և ամենացածրն է եղել Ախուրյանում՝ կազմելով 7լք առավելագույն լուսավորված հատվածում:

Ճանապարհային պատվածքի միջին լուսավորվածության ցուցանիշով Աշոցք, Ստեփանավան և Նոյեմբերյան համայնքներում արձանագրվել են մոտ ցուցանիշներ 6.21լք-ից 7.8 լք: Ցուցանիշն ամենացածրն է եղել Ախուրյան համայնքում՝ կազմելով 0.95 լք (Աղյուսակ 3.1.5):

Խոշորացված համայնք	Ճանապարհային պատվածքի առավելագույն լուսավորվածության ցուցանիշ	Ճանապարհային պատվածքի միջին լուսավորվածության ցուցանիշ
Ախուրյան	7 լք	0.95 լք
Աշոցք	19 լք	6.21 լք
Թումանյան	71 լք	3.73 լք
Ստեփանավան	16 լք	6.4 լք
Դիլիջան	19 լք	5 լք
Նոյեմբերյան	30 լք	7.8 լք

**Աղյուսակ 3.1.5 Լուսավորության համակարգի առկայությունը խոշորացված համայնքների բնակավայրերում**

<sup>23</sup> Ցուցանիշը ներկայացված է ըստ մոնիթորինգի արդյունքների

### 3.2 Խոշորացված համայնքների համեմատությունը ըստ օբյեկտիվ եվ սուբյեկտիվ ցուցանիշների համադրության

Համաձայն բնակիչների կողմից ներկայացված «լուսավորության ապահովվածության» գնահատականների Ախուրյան, Ստեփանավան և Նոյեմբերյան համայնքները ստացել են «միջին» գնահատական: Որպես այդպիսին «բարձր» գնահատական է տրվել միայն Աշոցք համայնքի լուսավորվածությանը: Երկու համայնքներ՝ Թումանյանը և Դիլիջը ստացել են «ցածր» գնահատական, քանի որ այստեղ համաձայն բնակիչների գնահատականների լուսավորությամբ ապահովված չէ համայնքի 25%-ից ավելին:


Ինչ վերաբերում է փողոցային լուսավորության միացման տևողությանը, ապա համայնքի բնակիչները հիմնականում բավարարված են միացման տևողությունից, քանի որ գրեթե բոլոր համայնքների դեպքում գերակշռել է «բարձր» կամ «շատ բարձր» արդյունքները՝ բացառությամբ Դիլիջան համայնքի, որտեղ այս ցուցանիշով գնահատականը եղել է «միջին»:

Խափանված լուսատուների սպասարկումից բնակչության բավարարվածության ցուցանիշով գնահատականները եղել են «բարձր» կամ «շատ բարձր» Ախուրյան, Աշոցք, Ստեփանավան և Նոյեմբերյան համայնքների համար: Այս ոլորտում բնակչության բավարարվածությունը «միջին» է գնահատվել Թումանյան համայնքի համար, իսկ Դիլիջանի դեպքում գնահատականը եղել է «ցածր»:

Բաղադրիչ	Ախուրյան	Աշոցք	Թումանյան	Ստեփանավան	Դիլիջան	Նոյեմբերյան
«Շատ բարձր», եթե տվյալ բաղադրիչի որակից «Լիովին բավարարված» կամ «Ավելի շուտ բավարարված» հարցվածների քանակը մեծ է կամ հավասար 80%-ի, «Բարձր», եթե ցուցանիշի արժեքը գտնվել է [60%; 80%) միջակայքում, «Միջին», եթե ցուցանիշի արժեքը գտնվել է [40%; 60%) միջակայքում, «Ցածր», եթե ցուցանիշի արժեքը գտնվել է [20%; 40%) միջակայքում, «Շատ ցածր», եթե ցուցանիշի արժեքը գտնվել է [0%; 20%) միջակայքում:						
Լուսավորությամբ ապահովվածություն բնակավայրում <sup>24</sup>	54% «Միջին»	66% «Բարձր»	22% «Ցածր»	52% «Միջին»	23% «Ցածր»	59% «Միջին»
Փողոցային լուսավորության միացման տևողության	72% «Բարձր»	81% «Շատ բարձր»	82% «Շատ բարձր»	90% «Շատ բարձր»	53% «Միջին»	93% «Շատ բարձր»
Խափանված լուսատուների սպասարկում	81% «Շատ բարձր»	80% «Շատ բարձր»	59% «Միջին»	80% «Շատ բարձր»	38% «Ցածր»	91% «Բարձր»

<sup>24</sup> Ներկայացված է համաձայն բնակիչների կողմից

Փողոցային լուսավորության համակարգից բնակչության բավարարվածության գնահատականների համեմատության արդյունքներով այս ոլորտից առավել բավարարված են Ստեփանավան և Աշոցք խոշորացված համայնքների բնակիչները, որտեղ 1-ից 10 բալանոց սանդղակով գնահատման արդյունքներով համայնքները ստացել են համապատասխանաբար 7.3 և 7.02 միավոր: Հաջորդիվ Նոյեմբերյան և Ախուրյան համայնքներն են, որտեղ գնահատականները կազմում են համապատասխանաբար 6.7 միավոր և 6.25 միավոր: Ցուցանիշները առավել ցածր են եղել Թումանյան և Դիլիջան բնակավայրերում, որտեղ տրվել են միջինից ցածր գնահատականներ. Թումանյանում միջինացված ցուցանիշը կազմում է 4.58 միավոր, իսկ Դիլիջանում ամենացածրն է՝ 3.85 միավոր (Գրաֆիկ 37):



**Գրաֆիկ 36. Փողոցային լուսավորության ապահովման ծառայություններից բնակչության բավարարվածության միջին գնահատականներ ըստ խոշորացված համայնքների**

## **Գլուխ 4. Ֆինանսական հետազոտության արդյունքներն ըստ առանձին խոշորացված համայնքների**

### **4.1 Շիրակի մարզի Ախուրյան եվ Աշոցք խոշորացված համայնքներում 2014-2018 թթ համար իրականացված ֆինանսական վերլուծություն՝ ներհամայնքային փողոցների լուսավորության սպասարկման ոլորտում**

Ֆինանսական վերլուծության համար անհրաժեշտ տվյալները ձեռքբերելու նպատակով հարցումներ են ուղարկվել ընտրված 6 խոշորացված համայնքների համայնքապետարաններ: Բոլոր համայնքապետարաններին ուղարկվել են միևնույն բովանդակությամբ հարցումներ, սակայն ոչ բոլորից են ստացվել անհրաժեշտ տվյալներ: Ստացված տվյալները համադրվել են Տարածքային կառավարման և զարգացման նախարարության կայքում տեղադրված տվյալների հետ: Մարզպետարանների կայքերից ուսումնասիրվել են նաև համայնքների տարեկան աշխատանքային պլանները: Անհամապատասխանություններ են նկատվել համայնքապետարաններից ստացված տվյալների և Տարածքային կառավարման և զարգացման նախարարության կայքում տեղադրված բյուջեներում: Նման դեպքերում հիմք են ընդունվել նախարարության կայքում արտացոլված տվյալները: Համայնքապետարանի կողմից ներկայացված տվյալները ներկայացված են հավելվածներում: Ուսումնասիրության համար դիտարկվել են 2014-2018թթ-ը՝ մինչ խոշորացումը և խոշորացումից հետո առկա իրավիճակները վերլուծելու համար: Թումանյան և Դիլիջան համայնքները խոշորացվել են 2015 թ-ին, Աշոցք և Նոյեմբերյան համայնքները՝ 2016թ-ին, իսկ Ախուրյան և Ստեփանավան համայնքները՝ 2017 թ-ին: Միավորման ազդեցությունը ոլորտային խնդիրների լուծման հարցում գնահատելու համար դիտարկվել են նաև 2018 թ-ի տվյալները: 2014-2017թթ համար վերցվել են բյուջեների տարեկան կատարողական ցուցանիշները, իսկ 2018 թ-ի համար վերցվել է պլանային ցուցանիշը՝ իննամսյա ճշգրտումով: Ֆինանսական ուսումնասիրության արդյունքները համադրվել են նաև սույն ծրագրի շրջանակներում իրականացված սոցիալաբանության արդյունքների հետ՝ հասկանալու ծախսեր-բնակչության բավարարվածություն կապը:


#### **Ախուրյան համայնք**

Ախուրյան համայնքի վարչատարածքային սահմանների փոփոխությունը եղել է 2017 թ-ի նոյեմբերին՝ «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2017 թվականի հունիսի 9-ի ՀՀ ՀՕ – 93 - Ն օրենքով: <sup>25</sup> Նոր կազմավորված համայնքն իր մեջ ներառել է նախկին Այգաբաց, Արևիկ, Բասեն, Կամո, Կառնուտ, Հովիտ, Ջրառատ և Ախուրյան համայնքները: Նոր կազմավորված համայնքի կենտրոնը համարվում է Ախուրյան համայնքը: Նշենք, որ համայնքների բյուջեներն ըստ մեր դիտարկած ժամանակաշրջանի՝ 2014-2018թթ, ունեցել են հետևյալ մեծությունը՝

<sup>25</sup> <http://shirak.mtad.am/about-communities/582/>



**Գծապատկեր 1. Ախուրյան խոշորացված համայնքի և վերջինիս վարչատարածքային սահմաններում ներառված նախկին համայնքների փաստացի բյուջեները 2014-2017թթ-ի և 2018թ պլանային ցուցանիշները/հազ դրամ<sup>26</sup>**




Ինչպես երևում է գծապատկեր 1-ից մինչև խոշորանալը Ախուրյան համայնքի բյուջեն ավելի մեծ է եղել, քան մյուս բոլոր յոթ համայնքներինը միասին՝ համապատասխանաբար 2014-2016թթ՝ 83,8%, 96%, 79%: Հարկ է նշել, որ մինչ խոշորացումը բոլոր համայնքների բյուջեների աճի դինամիկան եղել է դրական, բացառություն է կազմում 2015 թ-ը և 2018թ-ի պլանային ցուցանիշը: Նշենք, որ համաձայն Akhuryan.am կայքում տեղադրված 2018թ-ի բյուջեի ծախսային ցուցանիշների՝ մինչ 2018թ-ը աղբահանությունն իրականացրել է համայնքապետարանը, իսկ 2018 թ-ին նախատեսված է «Ախուրյանի Ջանգ» ՓԲԸ միջոցով իրականացնել աշխատանքները: Նշենք նաև, որ 2017թ-ի Ախուրյան խոշորացված համայնքի պլանավորված բյուջեն ևս մեծ է եղել, սակայն կատարվել է 82%-ով: Այստեղից կարող ենք ենթադրել, որ 2018 թ-ի պլանավորումը էապես շեղվում է համայնքում առկա կարիքների համար անհրաժեշտ միջոցներից՝ ուռճացված է և պարունակում է ռիսկեր:

Դիտարկենք համայնքներին պետական բյուջեից հատկացված դոտացիաների դինամիկան՝ հասկանալու բյուջեի աճի աղբյուրները:

<sup>26</sup> 2018թ-ի համար վերցված են տվյալ տարվա համար պլանավորված ցուցանիշների 2018թ հոկտեմբերի 1-ի դրությամբ ճշտված ցուցանիշները:  
Ցուցանիշները վերցված են ՀՀՇՄ պաշտոնական կայք էջում տեղադրված բյուջեներից <http://shirak.mtad.am/community-budgetary-expenditure/>


**Գծապատկեր 2. Ախուրյան խոշորացված և վերջինիս վարչատարածքային սահմաններում ներառված նախկին համայնքներին պետությունից տրամադրվող դոտացիաները 2014-2017թթ կատարված և 2018թ պլանավորված ցուցանիշներ/հազ դրամ<sup>27</sup>**



Ինչպես երևում է գծապատկեր 2-ից, 2016-18թթ-ին նախորդ տարիների համեմատ աճել են համայնքներին տրվող դոտացիաները՝ 2014 և 2015թթ-ին այն կազմել է համապատասխանաբար 26 և 28 մլն ՀՀ դրամ, 2016-2018թթ այ կազմել է 29 մլն ՀՀ դրամ: Աճը դինամիկ բնույթ է կրում: Հատկանշական է, որ 2016-18թթ-ին դոտացիայի գումար չի աճել, ինչը նշանակում է, որ համայնքների միավորումը պետության կողմից լրացուցիչ ֆինանսավորման հնարավորություն չունի, մնչդեռ, միավորման հիմնադրամներից մեկը հավելյալ ֆինանսական միջոցներ ներգրավելու հնարաորությունն է: Ելնելով հետազոտության խնդիրներից՝ անդրադառնանք ծախսերին և ավելի մանրամասն դիտարկենք աղբահանության, լուսավորության և ճանապարհաշինության ոլորտներին հատկացված ֆինանսական միջոցների բաշխվածությունը մինչ խոշորացումը և խոշորացումից հետո:

<sup>27</sup> 2018թ-ի համար վերցված են տվյալ տարվա համար պլանավորված ցուցանիշների 2018թ հոկտեմբերի 1-ի դրությամբ ճշտված ցուցանիշները:  
Ցուցանիշները վերցված են ՀՀՇՄ պաշտոնական կայք էջում տեղադրված բյուջեներից <http://shirak.mtd.am/community-budgetary-expenditure/>

**Գծապատկեր 5. Ախուրյան խոշորացված համայնքում ներառված համայնքների լուսավորության ոլորտի ծախսերը 2014-2017թթ կատարված և 2018թ պլանավորված ցուցանիշներ/հազ դ .<sup>28</sup>**



2015թ-ի նվազումը Ախուրյան, Ջրառատ, Հովիտ, Կառնուտ և Կամո համայնքներում պայմանավորված է ընդհանուր բյուջեի նվազումով՝ քանի որ լուսավորության ոլորտին հատկացվող ծախսերի տեսակարար կշիռն ընդհանուրի մեջ չի փոխվել՝ անգամ ավելացել է (տես Աղյուսակ 2):

**Աղյուսակ 2 Ախուրյան խոշորացված համայնքի մեջ ներառված նախկին համայնքներում լուսավորության ոլորտի ծախսերի տեսակարար կշիռն ընդհանուր բյուջեի մեջ՝ 2014-2017թթ կատարված և 2018թ պլանավորված ցուցանիշներ/%. <sup>29</sup>**

	Ախուրյան	Ջրառատ	Հովիտ	Կառնուտ	Կամո	Բասեն	Արևիկ	Այգաբաց
<b>2014</b>	1.5%	0.3%	0	1.9%	1.9%	3.9%	2.5%	0
<b>2015</b>	1.4%	0.6%	0	2.7%	3%	1.2%	1.3%	0
<b>2016</b>	3%	0.7%	3.4%	1.8%	3.5%	2.3%	2.3%	0
<b>2017</b>	4%	-	-	-	-	-	-	-
<b>2018</b>	3.3%	-	-	-	-	-	-	-

Աղյուսակից հստակ երևում է որ եղել են համայնքներ, որոնք այս գործառույթի համար միջոցներ չեն նախատեսել, կամ ծախսերն ընդհանուր բյուջեի կառուցվածքում չեն գերազանցել մեկ տոկոսը, օրինակ Ջրառատ համայնքում, այսուանդերձ բյուջեների համայնքների միավորումից հետո 2017 թ. աճել է նաև լուսավորության համար նախատեսվող միջոցների տեսակարար կշիռը ընդհանուր բյուջեում: Ելնելով համայնքապետարանից ստացված տվյալներից՝ նշենք, որ 2017 թ-ին լուսավորության ոլորտին հատկացված միջոցները բաշխվել են հետևյալ համամասնությամբ՝ Ախուրյան 66%, Արևիկ 15%, Այգաբաց 5%, Կառնուտ՝


<sup>28</sup> Տարածքային կառավարման և նախարարության կայքում տեղադրված համայնքների տարեկան բյուջեների հաշվետվություններ <http://mtad.am/hy/budgetary-expenditure/>

<sup>29</sup> Աղյուսակում ներկայացված ցուցանիշները հաշվվել են հեղինակի կողմից

3%, Կամո 5%, Բասեն 2%, Ջրառատ՝ 4%: Բնակչության բաշխվածությունն ըստ համայնքների հետևյալն է՝ Ախուրյան 53%, Արևիկ 9,8%, Այգաբաց 4,5%, Կառնուտ՝ 6,5%, Հովիտ՝ 2,8%, Բասեն՝ 9,3%, Ջրառատ՝ 6,4%, Կամո 7,7%: Ախուրյանում և Արևիկում տեսակարար կշիռով ավելի շատ ֆինանսական միջոցներ են հատկացվել, քան բնակչության տեսակարար կշիռն է ընդհանուր համայնքում: Այգաբացում համամասնությունը գրեթե պահպանվել է: Դրական է, որ խոշորացումից հետո Այգաբացում լուսավորության աշխատանքներ են իրականացվել:

Հետազոտության մեջ դիտարկվել է համայնքներում մեկ բնակչի հաշվով կատարված ծախսերը, (տե՛ս գծ.6)

**Գծապատկեր 6. Ախուրյան խոշորացված համայնքում ներառված համայնքներում լուսավորության ոլորտում 2014-2017թթ կատարված և 2018թ պլանավորված ծախսերը մեկ բնակչի հաշվով 2014-2018թթ/ հազ դ<sup>30</sup>**




Ինչպես տեսնում ենք խոշորացումից հետո մեկ բնակչի հաշվով կատարված ծախսերը մեծացել են՝ ի համեմատ նախկինում համայնքներում մեկ բնակչի հաշվով կատարվող ծախսերի: Այս ցուցանիշի մեծությունը պայմանավորված է ընդհանուր բյուջեի մեծացմամբ: Հատկանշական է, որ մեկ բնակչի հաշվով 2014-15թթ Կառնուտ համայնքն ունեցել է ամենաբարձր ցուցանիշը: Ֆինասական վելուծությունից զատ անհրաժեշտություն է առաջանում ուսումնասիրել միավորումից հետո ամեն համայնքին հատկացվող ծախս/բնակիչ ցուցանիշը:

Դիտարկենք մեկ հենասյան գծով ծախսը ևս տարբեր համայնքներում ըստ տարիների

<sup>30</sup> Գծապատկերում ներկայացված ցուցանիշները հաշվվել են հեղինակի կողմից  
99

**Գծապատկեր 7. Ախուրյան խոշորացված համայնքում ներառված համայնքներում լուսավորության ոլորտում 2014-2017թթ կատարված և 2018թ պլանավորված ծախսերը մեկ հենաայան հաշվով 2014-2018թթ/ հազ դ <sup>31</sup>**



Մեկ հենաայան գծով ծախսը ևս աճել է խոշորացվելուց հետո: Աղյուսակ 3-ից պարզ է դառնում, որ այս աճը պայմանավորված է լուսավորության ցանցի ընդլայնումով՝ 2017 թ-ին ճանապարհային լուսավորությանը հատկացված միջոցների 20%-ն է եղել կապիտալ ծախս, իսկ 2018 թ-ին կապիտալ ծախսեր չեն նախատեսվել: Սա խոսում է փողոցներում լուսակետերի ավելացման մասին՝ ի հաշիվ 2017 թ-ին կատուցված և 2018 թ-ին վերանորոգվող հենաայունների:

Համաձայն Ախուրյան ՏԱՊ 2018-ի նախատեսված է Ախուրյան, Արևիկ, Այգաբաց, Կառնուտ, Հովիտ, Բասեն, Ջրառատ և Կամո բնակավայրերում լուսավորության ցանցի կառուցում: Նախատեսված է նաև 40 նոր պուրների և լուսատուների տեղադրում, իսկ բյուջեի լուսավորության ոլորտի ֆոնդային մասով ծախսեր նախատեսված չեն<sup>32</sup>: Այս դեպքում նոր լուսակետերի ավելացումը ենթադրում է հին պուրների վրա նոր լուսատուների տեղադրում:

<sup>31</sup> Գծապատկերում ներկայացված ցուցանիշները հաշվվել են հեղինակի կողմից

<sup>32</sup> <http://shirak.mtad.am/files/docs/33169.pdf> Ախուրյանի ՏԱՊ 2018, էջ21

Աղյուսակ 3. Ախուրյան խոշորացված համայնքում ներառված համայնքներում լուսավորության ոլորտում կատարված ծախսերը ըստ բյուջեի ֆոնդային և վարչական մասերի 2014-2017թթ կատարված և 2018թ պլանավորված ցուցանիշներ/ % մասերի.<sup>33</sup>

		Ախուրյան	Զրառատ	Հովիտ	Կառնուտ	Կամո	Բասեն	Արևիկ	Այգաբաց
2014	Վարչ. %	100	100	0	100	100	100	100	0
	Ֆոնդ. %	0	0	0	0	0	0	0	0
	Ընդ/հազ դ	2999,2	91,1	0	488,1	599	803	992,1	0
2015	Վարչ. %	100	100	0	100	100	100	100	0
	Ֆոնդ. %	0	0	0	0	0	0	0	0
	Ընդ/հազ դ	2681,9	165	0	763,3	743	397,7	528,1	0
2016	Վարչ. %	100	100	100	100	100	43	100	0
	Ֆոնդ. %	0	0	0	0	0	57	0	0
	Ընդ/հազ դ	7777,1	249,5	400	484,1	919,8	830,1	859,3	0
2017	Վարչ. %	74,2	-	-	-	-	-	-	-
	Ֆոնդ. %	25,8	-	-	-	-	-	-	-
	Ընդ/հազ դ	19395,1	-	-	-	-	-	-	-
2018	Վարչ. %	100	-	-	-	-	-	-	-
	Ֆոնդ. %	0	-	-	-	-	-	-	-
	Ընդ/հազ դ	18500	-	-	-	-	-	-	-

Աղյուսակից երևում է, որ ֆոնդային բյուջեով ծախսեր արվել են 2017թ-ին խոշորացվելու ժամանակ: Կարելի է ենթադրել, որ համայնքների միավորման այս փուլում էապես փոխվել է կապիտալ ծախսերը, հատկապես միավորման փուլում, որն էլ խոսում է այն մասին որ ֆինանսական միջոցներն ուղղվել են կապիտալ արժեքների ստեղծմանը:

Ընդհանրացնելով նկատում ենք, որ ավելացել են և մեկ բնակչի հաշվով ծախսը և մեկ հենասյան մասով ծախսը, լուսավորության ոլորտում դրական փոփոխությունների նշան է:


### Աշոցք համայնք

Աշոցք համայնքը կազմավորվել է 2016 թվականի հոկտեմբերին «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2016 թվականի հունիսի 17-ի ՀՀ ՀՕ – 100 - Ն օրենքով: <sup>34</sup> Աշոցք համայնքն իր մեջ ներառում է նախկին Աշոցք, Կարմրավան, Կրասար, Մեծ Սեպասար, Փոքր Սեպասար, Ղազանչի, Միզավետ, Թավշուտ, Բավրա, Սարագյուղ, Զույգաղբյուր համայնքները: Նոր կազմավորված համայնքի մեջ մտնող նախկին համայնքները ըստ տարբեր տարիների ունեցել են հետևյալ բյուջեները.

<sup>33</sup> Տարածքային կառավարման և նախարարության կայքում տեղադրված համայնքների տարեկան բյուջեների հաշվետվություններ <http://mtad.am/hy/budgetary-expenditure/>


<sup>34</sup> ՀՀ Շիրակի մարզպետարան <http://shirak.mtad.am/about-communities/590/>

**Գծապատկեր 10. Աշոցք խոշորացված համայնքի մեջ մտնող համայնքների 2014-2017թթ կատարված և 2018թ պլանավորված բյուջեները/հազ դ<sup>35</sup>**



2014-2018թթ ղինամիկայում ընդհանուր համայնքային բյուջեն աճել է, աճել են նաև նախկին համայնքների բյուջեները: Աճի պատճառները հասկանալու համար նախ ղիտարկենք պետբյուջեից տրամադրվող դոտացիաների շարժը ըստ համայնքների՝

**Գծապատկեր 11. Աշոցք խոշորացված համայնքի մեջ մտնող համայնքներին 2014-2017թթ կատարված և 2018թ պլանավորված դոտացիաների փոփոխությունը. / հազ դ<sup>36</sup>**




Գծապատկեր 11-ից երևում է որ դոտացիաների հատկացման չափը ղինամիկ աճել է մինչ 2016թ-ը, ինչով էլ հենց պայմանավորված է նույն ժամանակաշրջանում ընդհանուր բյուջեի աճը: 2016 թ-ի նոյեմբեր

<sup>35</sup> Տարածքային կառավարման և նախարարության կայքում տեղադրված համայնքների տարեկան բյուջեների հաշվետվություններ <http://mtad.am/hy/budgetary-expenditure/>

<sup>36</sup> Տարածքային կառավարման և նախարարության կայքում տեղադրված համայնքների տարեկան բյուջեների հաշվետվություններ <http://mtad.am/hy/budgetary-incomes/>

ամսին դոտացիաների հաշվարկում մեթոդաբանության փոփոխություն է եղել, որով էլ կարելի է պայմանավորել հաջորդիվ դինամիկայի փոփոխությունը: Այստեղից կարող ենք եզրակացնել, որ 2017 և 2018 թթ աճել են սեփական եկամուտները՝ համայնքների միավորումը նպաստել է եկամուտների հավթագրելիությանը:

**Գծապատկեր 14. Աշոցք խոշորացված և նրա կազմում ընդգրկված նախկին համայնքներում լուսավորության ոլորտում 2014-2017թթ կատարված և 2018թ պլանավորված ծախսերի դինամիկան/հազ դ.<sup>37</sup>**



Դինամիկայի մեջ հսկայական փոփոխություն է նկատվում 2017 և 2018թթ՝ համայնքների միավորվելուց հետո: Նշենք, որ 2017թ-ին իրականացված և 2018-ին պլանավորված ծախսերը եղել են վարչական բնույթի<sup>38</sup>: Ընդհանուր բյուջեի մեջ ոլորտային ծախսերն ունեցել են հետևյալ տեսակարար կշիռները՝ Աշոցք՝ 0,2%, 0,9%, 0,5%, 6,9% և 3,9%, Սիզավետում՝ 2014 թ-ին 4,6%, Թավշուտում 1,3%, Մարագյուղում՝ 1% և 0,2%, Զույգադբյուրում 2,2% և 2,8%: Ինչպես տեսնում ենք միավորումից հետո ոլորտային ծախսերը ոչ միայն բացարձակ թվով են աճել, այլ նաև դրանց տեսակարար կշիռն է աճել ընդհանուր բյուջեում՝ բացառությամբ 2018 թ-ի:


Աճը հասկանալու համար հարցում է իրականացվել, որին պատասխան չենք ստացել: Համաձայն Աշոցք համայնքի կայքում տեղադրված տեղեկատվության ծախսերը եղել են հատուկ նպատակային այլ նյութերի ձեռքբերման ուղղությամբ: Ստացվում է, որ Էներգետիկ ծառայություններ ձեռք չի բերվել: Այստեղ հարց է առաջանում թե այդ դեպքում ինչպես են լուսավորել համայնքի 313 հենասյունները<sup>39</sup>, և ինչ են ձեռք բերվել 2017թ-ին: Նույն ծախսն իրականացվել է 2018 թ-ին: Ենթադրվում է, որ սա մասնագիտական

<sup>37</sup> Տարածքային կառավարման և նախարարության կայքում տեղադրված համայնքների տարեկան բյուջեների հաշվետվություններ <http://mtad.am/hy/budgetary-expenditure/>  
<sup>38</sup> <http://shirak.mtad.am/community-budgetary-expenditure/>  
<sup>39</sup> Տվյալը հարցման արդյունքում ստացել ենք Աշոցքի համայնքապետարանից



թերացման խնդիր է իսկ 2018 թ-ի ոլորտային ծախսերի նվազումը պայմանավորված է եղել նրանով, որ 2017թ-ին համայնքում լուսատուներ են ավելացել, իսկ 2018 թ-ին նման ծախս չի նախատեսվել:

**Գծապատկեր 15. Աշոցք խոշորացված և նրա կազմում ընդգրկված նախկին համայնքներում լուսավորության ոլորտում 2014-2017թթ կատարված և 2018թ պլանավորված ծախսերի դինամիկան մեկ բնակչի հաշվով/հազ դ.<sup>40</sup>**



Մեկ բնակչի հաշվով կատարված ծախսերի դինամիկան մի փոքր այլ է: 2014թ-ին ամենաբարձր ցուցանիշը եղել է Սիգավետում, 2015թ-ին Զույգաղբյուրում, 2016 թ-ին ցուցանիշը կտրուկ նվազել է՝ պայմանավորված այն հանգամանքով, որ խոշորացումը եղել է հոկտեմբեր ամսին՝ տարին ամփոփվել է խոշորացված համայնքի բնակչության թվով և տարեսկզբին պլանավորված բյուջեով: 2017 թ-ին արդեն մեծացել է ցուցանիշը՝ 2016 թ-ի հետ համեմատած 14 անգամ, իսկ 2018 թ-ին կրկին նվազել՝ 0,6 անգամ սակայն բարձր մնալով մինչ խոշորացումը եղած ցուցանիշից: Այս դեպքում անհրաժեշտ է դիտարկել տարեկան աշխատանքային պլանը: Ի տարբերություն աղբահանության ոլորտի լուսավորության ոլորտի համար 2018 թ-ում պլանավորված է լուսավորության ցանցի անցկացում նախկին Թավշուտ, Սիգավետ և Մեն Սեպասար համայնքներում: Նախատեսված է՝

- Փողոցներ արտաքին լուսավորության համակարգի երկարությունը, 2 կմ
- Գիշերային լուսավորության հենասյունների թիվը 109
- Գիշերային լուսավորված փողոցների տեսակարար կշիռը ընդհանուրի մեջ 35%
- Գիշերային լուսավորվածության ժամերի թիվը օրվա կտրվածքով՝ ամռանը՝ 4 ժ, ձմռանը՝ 3ժ
- Բնակիչների բավարարվածությունը համայնքում գիշերային լուսավորվածությունից 32%

Ինչպես տեսնում ենք լուսավորության համակարգի անցկացման և պահպանման համար պլանավորված են մի քանի գործողություններ, որոնք ունենալու են առանձին ծախսեր, սակայն բյուջեում նշված է միայն հատուկ նպատակային նյութերի ձեռք բերում: Հասկանալի է, որ ամբողջ աշխատանքների

<sup>40</sup> Գծապատկերում ներկայացված ցուցանիշները հաշվվել են հեղինակի կողմից


իրականացումը հնարավոր չէ անել այդ հոդվածով: Այստեղ ևս խնդիրը գնահատում ենք որպես մասնագիտական թերացում, որը չի նկատվել նաև Շիրակի մարզպետարանի կողմից:

#### 4.2 Տավուշի մարզի Դիլիջան և Նոյեմբերյան խոշորացված համայնքներում 2014-2018 թթ համար իրականացված ֆինանսական վերլուծություն՝ ներհամայնքային փողոցների լուսավորության սպասարկման ոլորտում

Դիլիջան համայնքը վերաձևավորվել է 2015 թ-ի դեկտեմբերի 15-ին՝ «ՀՀ վարչատարածքային բաժանումների մասին» ՀՀ օրենքում փոփոխությունների պահանջով: Նոր խոշորացված համայնքում ընդգրկվել են նախկին Դիլիջան, Հաղարծին, Թեղուտ, Գոշ, Հովք, Աղավնավանք և Խաչարձան համայնքները: Նոր խոշորացված համայնքն ունի 18,667 մարդ:<sup>41</sup>

Դիտարկենք Դիլիջան խոշորացված համայնքի բյուջեն՝ մինչ խոշորանալը ըստ առանձին համայնքների ու խոշորանալուց հետո՝

**Գծապատկեր 18. Դիլիջան խոշորացված և վերջինիս վարչատարածքային սահմաններում ներառված նախկին համայնքների բյուջեների 2014-2017թթ-ի կատարված և 2018 թ-ի պլանային ցուցանիշներ/հազ դ.**<sup>42</sup>




Ինչպես դիտարկված մյուս համայնքներում Դիլիջանում ևս համայնքների միավորումից հետո նկատվում է միասնական բյուջեի աճ: Աճը կտրուկ նկատվում է 2018թ-ին. 2014-2018թթ դինամիկայում

<sup>41</sup> <http://tavush.mtad.am/about-communities/697/>

<sup>42</sup> Տարածքային կառավարման և նախարարության կայքում տեղադրված համայնքների տարեկան բյուջեների հաշվետվություններ <http://mtad.am/hy/budgetary-expenditure/>

համապատասխանաբար՝ 7,7%, 8,6%, 5% և 37%: Աճի պատճառները հասկանալու համար դիտարենք պետական դոտացիաների չափերն ըստ տարիների՝

**Գծապատկեր 19. Դիլիջան խոշորացված և վերջինիս վարչատարածքային սահմաններում ներառված նախկին համայնքների 2014-2017թթ տրամադրված և 2018թ պլանավորված դոտացիաները /հազ դ<sup>43</sup>**




Ինչպես տեսնում ենք պետբյուջեից տրամադրվող դոտացիաները դինամիկ աճել են՝ բացառությամբ 2018թ-ի: 2014-2018 թթ դինամիկայում՝ 12%, 5,7%, 4% և 2018թ-ին նվազել է 1,4%-ով: Ինչպես տեսնում ենք 2015-2016 թթ բյուջեի աճը մեծամասամբ պայմանավորված է դոտացիաների աճով: Հարկ է նշել, որ Դիլիջան համայնքում պետբյուջեից բացի ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաներից դիտարկված ժամանակահատվածում տրամադրվել են նաև սուբվենցիաներ և այլ դոտացիաներ: 2014-2017թթ Դիլիջան համայնքին տրված սուբվենցիաներն ունեցել են հետևյալ դինամիկան՝ 5 մլն, 4 մլն, 14 մլն, 12 մլն և 10,5 մլն: 2014 թ-ին Դիլիջան համայնքից բացի սուբվենցիաներ ստացել են նաև Հաղարծինը՝ 6,7 մլն, Թեղուտը՝ 28 մլն, Աղավնավանքը՝ 4,8 հազ, Հովքը՝ 4,8 հազ դրամ» Իսկ 2015թ-ին Հաղարծինը՝ 8,8 մլն, Խաչարձան՝ 9 մլն, Աղավնավանքը՝ 5 մլն, Հովքը՝ 1,5 մլն, Գոշ՝ 16 մլն դրամ:

2015թ և 2016թ-ին համայնքները ստացել են նաև այլ դոտացիաներ: դոտացիաներ: 2015 թ-ին՝ Դիլիջանում 33 մլն, Հաղարծինում 2,8 մլն, Աղավնավանքում 298 հազ, Գոշում 387 հազ ՀՀ դրամ: Նկատում ենք, որ համեմատ դիտարկվող ժամանակաշրջանի 2015 թ-ին սուբվենցիաներ և այլ դոտացիաներ են տրամադրվել: Այստեղից եզրակացնում ենք, որ չնայած 2016-2018 թթ վերոնշյալ հոդվածներով եկամուտները կտրուկ նվազել են, սակայն համայնքային բյուջեն չի նվազել: Սա խոսում է համայնքների միավորումից հետո սեփական եկամուտների հավաքագրելիության աստիճանի մեծացման մասին:

<sup>43</sup> Տարածքային կառավարման և նախարարության կայքում տեղադրված համայնքների տարեկան բյուջեների հաշվետվություններ <http://mtad.am/hy/budgetary-incomes/>

**Գծապատկեր 23. Դիվիզան խոշորացված և վերջինիս վարչատարածքային սահմաններում ներառված նախկին համայնքներում լուսավորության ոլորտի ծախսերը 2014-2018թթ-ին/ հազ դ<sup>44</sup>**



Այս ոլորտում կատարված ծախսերը խոշորացումից հետո բացարձակ ցուցանիշով աճել են: Ոլորտային ծախսերը համայնքային բյուջեում 2014-2018թթ համապատասխանաբար ունեցել են հետևյալ տեսակարար կշիռները՝ Դիվիզանում 8,4%, 9,5%, 7%, 7% և 5,8%, Գոշում՝ 3% և 1%, Թեղուտում՝ 1,4% և 2,9%, իսկ Հաղարծինում 0,8% և 1%: Միավորումից հետո այս ոլորտի «կարևորությունը» ևս նվազել է Դիվիզան համայնքում: Հարկ է նշել, որ մյուս բնակավայրերում, որտեղ մինչ խոշորացումը աշխատանքներ չեն եղել կամ համեմատաբար քիչ են եղել, ապա խոշորացումից հետո այս բնակավայրերում ոլորտային դրական շարժ է նկատվում:

Դիտարկելով ըստ ֆոնդային և վարչական մասերի նկատում ենք, որ հիմնական ընթացիկ ծախսն արվել է էներգետիկ ծառայությունների ձեռքբերման և հենասյուների կառուցման ուղղությամբ: Այստեղ հարց է առաջանում արդյոք բոլոր բնակավայրերում անհրաժեշտ քանակով լուսավորող հենասյուներ կան, թե էներգետիկ ծախսի ավելացման արդյունքում լուսատուների ավելացմանը պակաս է ուշադրություն է դարձվում:

<sup>44</sup> Տարածքային կառավարման և նախարարության կայքում տեղադրված համայնքների տարեկան բյուջեների հաշվետվություններ <http://mtad.am/hy/budgetary-expenditure/>

Աղյուսակ 8.Դիվիզան խոշորացված և վերջինիս վարչատարածքային սահմաններում ներառված նախկին համայնքներում լուսավորության ոլորտում 2014-2017թթ կատարված և 2018թ պլանավորված ծախսերը ըստ բյուջեի վարչական և ֆոնդային մասերի<sup>45</sup>

		Դիվիզան	Աղավա	Գոշ	Հովիտ	Թեղուտ	Խաչարձա	Հաղարծի
		վանք						
2014	Վարչ. %	86%	0	100%	0	64%	0	100%
	Ֆոնդ. %	14%	0	0	0	36%	0	
	Ընդ/հազ դ	35361	0	700	0	421,5	0	600
2015	Վարչ. %	83,5%	0	100%	0	71%	0	100%
	Ֆոնդ. %	16,5%	0	0	0	29%	0	
	Ընդ/հազ դ	44178	0	300	0	510,9	0	786,4
2016	Վարչ. %	90%	-	-	-	-	-	-
	Ֆոնդ. %	10%	-	-	-	-	-	-
	Ընդ/հազ դ	47567	-	-	-	-	-	-
2017	Վարչ. %	94,7%	-	-	-	-	-	-
	Ֆոնդ. %	5,3%	-	-	-	-	-	-
	Ընդ/հազ դ	50142	-	-	-	-	-	-
2018	Վարչ. %	96%	-	-	-	-	-	-
	Ֆոնդ. %	4%	-	-	-	-	-	-
	Ընդ/հազ դ	55518	-	-	-	-	-	-


Համաձայն մեր կողմից իրականացված մոնիթորինգի արդյունքների դիտարկված 20 (11 կենտրոնական և 9 երկրորդական) փողոցներից 60%-ում առկա է եղել գիշերային լուսավորություն: Մակայն կապիտալ ծախսերը յուրաքանչյուր հաջորդ տարին նվազել են:<sup>46</sup> Ընդհանրացնելով դիտարկման արդյունքները 2018 թ-ի համար ստանում ենք, որ համայնքում ընդհանուր գիշերային լուսավորության ապահովման խնդիրը լուծվելու է ոլորտին հատկացված ծախսերի 4%-ով, այն դեպքում երբ այդ խնդիրը կազմում է ամբողջությամբ լուսավոր համայնք ունենալու 40%-ը կամ ավելին/հաշվի առնելով որ մեր կողմից ավելի շատ կենտրոնական փողոցներ են դիտարկվել քան երկրորդական, իսկ խնդիրները ավելի շատ թաքնված են երկրորդական փողոցներում/: Այստեղ օպտիմիզացման խնդիր է առաջ գալիս, որը հնարավոր է իրականացնել օգտագործվող լամպերը խնայլամպերով փոխարինելու շնորհիվ (Նշենք որ համայնքում լամպերի 46,8%-ն է էներգախնայող):

Ինչ վերաբերում է մեկ բնակչի հաշվով կատարվող ծախսերի դինամիկային ապա՝

<sup>45</sup> Աղյուսակում ներկայացված ցուցանիշները հաշվվել են հեղինակի կողմից

<sup>46</sup> «ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ՄՈՆԻԹՈՐԻՆԳ՝ ՀԱՆՈՒՆ ԽԵՒԱՑԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԱՏԵՂԾՄԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ» Լուսավորության գեկույց, էջ 77

**Գծապատկեր 24. Դիլիջան խոշորացված և վերջինիս վարչատարածքային սահմաններում ներառված նախկին համայնքներում լուսավորության ոլորտում 2014-2017թթ կատարված և 2018թ պլանավորված ծախսերը մեկ բնակչի հաշվով/հազ դ.՝<sup>47</sup>**




Ինչպես տեսնում ենք մեկ բնակչի հաշվով ծախսերը աճել են նախկին համայնքների ցուցանիշների նկատմամբ՝ բացառությամբ Դիլիջան համայնքի:

### Նոյեմբերյան համայնք

Նոյեմբերյան համայնքը վերաձևավորվել է 17.06.2016թ. ՀՕ-100-Ն «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքի պահանջով: Տավուշի մարզի խոշորացված Նոյեմբերյան համայնքում ընդգրկվել են Նոյեմբերյան, Բաղանիս, Բարեկամավան, Բերդավան, Դովեղ, Կոթի, Ոսկեպար, Ոսկեվան և Ջուջևան համայնքները: Մինչ ուսումնասիրվող ոլորտներին անդրադառնալը դիտարկենք ընդհանուր բյուջեն, պետբյուջեից հատկացվող դոտացիոն հատկացումները՝ հասկանալու միավորման հավանական ազդեցությունը բյուջեի ծավալների փոփոխման հարցում:


<sup>47</sup> Գծապատկերում ներկայացված ցուցանիշները հաշվվել են հեղինակի կողմից

**Գծապատկեր 27. Նոյեմբերյան խոշորացված և վերջինիս վարչատարածքային սահմաններում ներառված նախկին համայնքների 2014-2017թթ-ի կատարված և 2018թ պլանավորված բյուջեները/հազ դ.<sup>48</sup>**



Համայնքների միավորումից հետո համայնքների միասնական բյուջեն 2016թ-ին նվազել է 15,4%-ով՝ 73,8 մլն ՀՀ դրամով, այնուհետև 2018 թ-ին պլանավորվել է 21% աճ, ինչը գերազանցում է մինչ խոշորացումը եղած բյուջեի ցուցանիշը: Դիտարկենք նաև պետբյուջեից հատկացվող դոտացիաների դինամիկան:

**Գծապատկեր 28. Նոյեմբերյան խոշորացված և վերջինիս վարչատարածքային սահմաններում ներառված նախկին համայնքներին պետբյուջեից 2014-2017թթ-ի հատկացված և 2018թ պլանավորված դոտացիաները/հազ դ.<sup>49</sup>**



<sup>48</sup> Տարածքային կառավարման և նախարարության կայքում տեղադրված համայնքների տարեկան բյուջեների հաշվետվություններ <http://mtad.am/hy/budgetary-expenditure/>


<sup>49</sup> Տարածքային կառավարման և նախարարության կայքում տեղադրված համայնքների տարեկան բյուջեների հաշվետվություններ <http://mtad.am/hy/budgetary-incomes/>

Ինչպես տեսնում ենք համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաները չեն նվազել՝ անգամ ավելացել են: Սակայն եկամուտների ուսումնասիրության ընթացքում պարզվեց, որ այս համայնքներում ստացել են նաև սուբվենցիաներ և այլ դոտացիաներ, որոնք ևս անհրաժեշտ է դիտարկել:

Նոյեմբերյան համայնքում ևս սուբվենցիոն հատկացումներ են եղել: 2014-2018 թթ դինամիկայում Նոյեմբերյան համայնքում սուբվենցիաները համապատասխանաբար եղել են հետևյալ ծավալների՝ 4մլն, 4,9մլն, 8,8մլն, 10,6 մլն և 7,7մլն: 2014 թ-ին Բարեկամավանում՝ 1 մլն, Բերդավանում 3 մլն, Կոթիում 153 հազ, Ոսկեպարում 23 հազ, Ոսկևանում 100 հազ և Ջուջևանում 28 հազ դրամ: 2015 թ-ին Բարեկամավանում 10 մլն, Բաղանիսում 9 մլն, Բերդավանում 7 մլն, Դովեղում 1,3 մլն, Կոթիում 9,7 մլն, Ոսկեպարում 6 մլն, Ոսկևանում 8 մլն և Ջուջևանում 7,6 մն դրամ: Նկատում ենք, որ 2015 թ-ին բոլոր համայնքներին տրամադրված սուբվենցիոն հատկացումները կտրուկ մեծ է եղել՝ 2014 թ-ի համեմատ աճել է 13,5%, իսկ 2016 թ-ին նվազել է մոտ 87%-ով՝ 55,8 մլն ՀՀ դրամով, ընդհանուր տարբեր տարիների համեմատ մոտ 7 անգամ ավել է եղել: Այն կազմել է 2015 թ-ի բյուջեի 13,5%-ը, իսկ 2016 թ-ի 2,1%-ը: Սրանով էլ կարելի է պայմանավորել 2015 թ-ի բյուջեի մեծությունը: Ուշագրավ է նաև այն, որ 2015 և 2016 թթ համայնքը ստացել է այլ դոտացիաներ, որոնք կազմել են բյուջեի համապատասխանաբար 7,5% և 7,8%-ը: 2015 թ-ին այլ դոտացիաներ ստացել են Նոյեմբերյանը 24,7 մլն, Դովեղը 3 մլն, Բերդավանը 1,9 մլն, Բարեկամավանը՝ 1,8 մլն, Ոսկևանը 1,5 մլն, Ոսկեպարը 1 մլն, Բաղանիսը՝ 560 հազ և Ջուջևանը՝ 400 հազ դրամ: 2016 թ-ին Նոյեմբերյանը ստացել է 31,5 մլն ՀՀ դրամի այլ դոտացիա: Այլ դոտացիաները 2017 թ-ից այլ դոտացիաներ չեն տրամադրվել, սակայն համայնքի բյուջեն աճել է, ինչը նշանակում է, որ 2017 թ-ից աճել է համայնքի սեփական եկամուտների հավաքագրելիությունը:

Լուսավորության ոլորտին հատկացված ծախսերը համայնքների միավորումից հետո նվազել են՝ 2016 թ-ին 65%, իսկ 2017 և 2018 թթ-ին աճել՝ համապատասխանաբար 9% և 2%:

**Գծապատկեր 32. Նոյեմբերյան խոշորացված և վերջինիս վարչատարածքային սահմաններում ներառված նախկին համայնքներում լուսավորության ոլորտում 2014-2017թթ կատարված և 2018 թ-ի համար պլանավորված ծախսերը/հազ դ<sup>50</sup>**



<sup>50</sup> Տարածքային կառավարման և նախարարության կայքում տեղադրված համայնքների տարեկան բյուջեների հաշվետվություններ <http://mtad.am/hy/budgetary-expenditure/>



Համաձայն համայնքապետարանից ստացված տվյալների 2015 թ-ի շեղումը ընդհանուր դինամիկայից պայմանավորված է կապիտալ բնույթի ծախսերով:

Աղյուսակ 12.Նոյեմբերյան խոշորացված և վերջինիս վարչատարածքային սահմաններում ներառված նախկին համայնքներում լուսավորության ոլորտում 2014-2017թթ կատարված և 2018 թ-ի համար պլանավորված ծախսերի տեսակարար կշիռն ընդհանուր բյուջեի մեջ.<sup>51</sup>

	Նոյեմբերյան	Բարեկամական	Բաղանիս	Բերդավան	Դովեղ	Կոթի	Ոսկեպար	Ոսկևան	Ջուջևան
2014	4.9%	0	2%	0.9%	1.6%	0.4%	4.8%	17%	0
2015	12%	0	10%	0.6%	2%	0.08%	0	30%	0
2016	3.4%	-	-	-	-	-	-	-	-
2017	3.6%	-	-	-	-	-	-	-	-
2018	3%	-	-	-	-	-	-	-	-

Միավորումից հետո համայնքային բյուջեի մոտ 3%-ն է հատկացվել լուսավորության ոլորտին: Ստացվում է, որ նոր ձևավորված համայնքում լուսավորության ոլորտին պակաս ուշադրություն է դարձվել: Դիտարկենք ընթացիկ և կապիտալ բնույթի ոլորտային ծախսերը ըստ համայնքների:

Աղյուսակ 13. Նոյեմբերյան խոշորացված և վերջինիս վարչատարածքային սահմաններում ներառված նախկին համայնքներում լուսավորության ոլորտում 2014-2017թթ կատարված և 2018թ պլանավորված ծախսերը ըստ բյուջեի վարչական և ֆոնդային մասերի <sup>52</sup>

		Նոյեմբերյան	Բաղանիս	Բարեկամական	Բերդավան	Դովեղ	Կոթի	Ոսկեպար	Ոսկևան	Ջուջևան
2014	Վարչ. %	100	100	0	100	100	100	100	7	0
	Ֆոնդ. %	0	0	0	0	0	0	0	93	0
	Ընդ/հազ դ	6915,1	470	0	542,5	175	173,5	998,2	6164,3	0
2015	Վարչ. %	40	11	0	100	100	100	0	53,3	0
	Ֆոնդ. %	60	89	0	0	0	0	0	46,6	0
	Ընդ/հազ դ	20869,5	4478,9	0	456,9	252,1	45,2	0	12973,6	0
2016	Վարչ. %	66	-	-	-	-	-	-	-	-
	Ֆոնդ. %	34	-	-	-	-	-	-	-	-
	Ընդ/հազ դ	13693,7	-	-	-	-	-	-	-	-
2017	Վարչ. %	53	-	-	-	-	-	-	-	-
	Ֆոնդ. %	47	-	-	-	-	-	-	-	-
	Ընդ/հազ դ	14965,8	-	-	-	-	-	-	-	-
2018	Վարչ. %	44	-	-	-	-	-	-	-	-
	Ֆոնդ. %	56	-	-	-	-	-	-	-	-
	Ընդ/հազ դ	15240,4	-	-	-	-	-	-	-	-


<sup>51</sup> Աղյուսակում ներկայացված ցուցանիշները հաշվվել են հեղինակի կողմից

<sup>52</sup> Աղյուսակում ներկայացված ցուցանիշները հաշվվել են հեղինակի կողմից

Աղյուսակից նկատում ենք, որ բացառությամբ 2015 թ-ի, միավորումից հետո լուսավորության ոլորտում կապիտալ ոլորտին հատկացվող ծախսերն աճել են: Սա դրական է գնահատվում՝ ոլորտում երկարաժամկետ ծառայություններ ապահովելու տեսանկյունից:

Մեկ բնակչի հաշվով ծախսը միավորումից հետո նվազել է:

**Գծապատկեր 33. Նոյեմբերյան խոշորացված և վերջինիս վարչատարածքային սահմաններում ներառված նախկին համայնքներում լուսավորության ոլորտում կատարված ծախսերը մեկ բնակչի հաշվով 2014-2018թթ-ին/հազ դրամ<sup>53</sup>**



Մեկ բնակչի հաշվով կատարված ծախսը միավորումից հետո Նոյեմբերյան, Բաղանիս և Ոսկևան համայնքների համար նվազել է: Միավորումից հետո ըստ բնակավայրերի ծախսը դիտարկելով նույն տրամաբանությամբ ինչ աղբահանության ոլորտում դիտարկեցինք նկատում ենք, որ ծախսերը մեծ տեսակարար կշիռ ունեցողները կրկին Նոյեմբերյան, Բաղանիս և Ոսկևան համայնքներն են՝ բացառությամբ 2017 թ-ի:

<sup>53</sup> Գծապատկերում ներկայացված ցուցանիշները հաշվվել են հեղինակի կողմից

Աղյուսակ 14 Նոյեմբերյան խոշորացված համայնքի վարչատարածքային սահմաններում ներառված նախկին համայնքներում լուսավորության ոլորտում կատարված ծախսերի տեսակարար կշիռը համայնքի ոլորտային ծախսերի մեջ և բնակչության տեսակարար կշիռն ըստ համայնքների.<sup>54</sup>

		Նոյեմբերյան	Բարեկամավան	Բաղանիս	Բերդավան	Դովեղ	Կոթի	Ոսկեպար	Ոսկևան	Ջուջևան
2016	Ֆինմիջոց	39%	0	14%	5,8%	0,7%	12,6%	0	27,5%	0
	Բնակչութ.	36%	3,1%	5,5%	21%	4%	13%	5,7%	8%	3,7%
2017	Ֆինմիջոց	18,7%	0	3,9%	3,6%	6,6%	48,7%	8%	4,8%	5,3%
	Բնակչութ.	36%	3,1%	5,5%	21%	4%	13%	5,7%	8%	3,7%
2018	Ֆինմիջոց	42,5%	0	10%	8,6%	6,5%	10%	9%	9,3%	3,2%
	Բնակչութ.	36%	3,1%	5,5%	21%	4%	13%	5,7%	8%	3,7%

Ինչպես տեսնում ենք Աղյուսակից ֆինանսական միջոցների բաշխվածությունը չի համապատասխանում բնակչության բաշխվածությանը: Մեր կողմից իրականացված սոցիալոգիայի ժամանակ բացի Բարեկամավան և Ջուջևան բնակավայրից, մյուս բոլոր բնակավայրերի դեպքում տրվել են միջինից բարձր գնահատաններ: Առավել բարձր գնահատականներ են տրվել Բերդավան, Բաղանիս, Ոսկեվան և Ոսկեպար բնակավայրերի բնակիչների կողմից: Համայնքապետարանի միջին գնահատականը ամբողջ խոշորացված համայնքի համար կազմել է 6,7միավոր հնարավոր 10-ից : Բնակիչների կարծիքն ու բյուջեի բաշխվածությունը նույն ուղղվածությունն ունեն: Ուստի անհրաժեշտ է անհապաղ միջոցառումներ ձեռնարկել Բարեկամավան և Ջուջևան համայնքներում լուսավորություն ապահովելու համար: Համաձայն Նոյեմբերյան 2018 թ ՏԱՊ-ի նախատեսվում է Բարեկամավան, Կոթի, Ոսկեպար և Ջուջևան գյուղերի արտաքին լուսավորության համակարգերի ընդլայնում, որը ինչպես տեսանք բյուջեում արտացոլված չէ:

### 4.3 Լոռու մարզի Ստեփանավան և Թումանյան խոշորացված համայնքներում 2014-2018 թթ համար իրականացված ֆինանսական վերլուծություն՝ ներհամայնքային փողոցների լուսավորության սպասարկման ոլորտում Ստեփանավան համայնք


Ստեփանավան համայնքը վերակազմավորվել է 2017 թ-ի հունիս ամսին՝ «ՏԻՄ օրենք»-ում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին որոշումով:<sup>55</sup> Նոր ձևավորված համայնքն իր մեջ ներառում է նախկին Ստեփանավան, Ուրասար և Կաթնաղբյուր համայնքները: Նոր ձևավորված

<sup>54</sup> Աղյուսակում ներկայացված ցուցանիշները հաշվվել են հեղինակի կողմից

<sup>55</sup> <http://www.parliament.am/legislation.php?sel=show&ID=5834&lang=arm>


համայնքում բյուջեն շարունակել է փոքր աճ գրանցել՝ 2014-2018թթ-ին համապատասխանաբար 6,5%, 2%, 9,8% և 8%:

**Գծապատկեր 35. Ստեփանավան խոշորացված և վերջինիս վարչատարածքային սահմաններում ներառված նախկին համայնքների 2014-2017թթ փաստացի և 2018թ-ի պլանավորված բյուջեները /հազ դ<sup>56</sup>**



Աճի ուղղությունը և պետական հոգածության միտումները հասկանալու համար դիտարկենք դոտացիաների դինամիկան ընտրված ժամանակաշրջանում:

**Գծապատկեր 36. Ստեփանավան խոշորացված և վերջինիս վարչատարածքային սահմաններում ներառված նախկին համայնքներին պետբյուջեից 2014-2017թթ տրամադրված և 2018 թ-ին պլանավորված դոտացիաները/ հազ դ<sup>57</sup>**



2015 թ-ին 2%-ով աճել է դոտացիաների չափը, 2016 թ-ին 0,2%-ով նվազել է, 2017 թ-ին 0,9%-ով աճել է, իսկ 2018 թ-ին 0,09% պակաս է պլանավորվել: Այս փոփոխությունները կարող են պայմանավորված լինել


<sup>56</sup> Տարածքային կառավարման և նախարարության կայքում տեղադրված համայնքների տարեկան բյուջեների հաշվետվություններ <http://mtad.am/hy/budgetary-expenditure/>

<sup>57</sup> Տարածքային կառավարման և նախարարության կայքում տեղադրված համայնքների տարեկան բյուջեների հաշվետվություններ <http://mtad.am/hy/budgetary-incomes/>

պետական բյուջեից համայնքներին տրվող դոտացիաների ընդհանուր բազայի տարբերությունով, և 2017 թ-ից կիրառվող նոր մեթոդաբանության հաշվարկով: Ստեփանավան համայնքում պետբյուջեից տրամադրվել են նաև նպատակային հատկացումներ՝ սուբվենցիաներ: Սուբվենցիաները տրամադրվել են միայն Ստեփանավան համայնքին, որը 2014-2018թթ ղինամիկայում ունեցել է հետևյալ շարժը՝ 9,6 մլն, 11,7 մլն, 11,7 մլն, 35,9 մլն և 10 մլն ՀՀ դրամ: Ցուցանիշը 2015թին 22% աճել է, 2016 թ-ին չի փոխվել, 2017 թ-ին 206% աճ է գրանցել և 2018 թ-ին անկում՝ 71%-ով: Հաշվի առնելով այս փոփոխությունները կարող ենք ասել, որ սեփական եկամուտները ղինամիկ աճ են գրանցել: Վերադառնալով հետազոտության խնդիրներին դիտարկենք ոլորտային ծախսերը:

Լուսավորության ոլորտում կատարված ծախսերը Ստեփանավան համայնքում կազմում են համայնքային բյուջեի 2%-3,7%:

**Գծապատկեր 39. Ստեփանավան խոշորացված և վերջինիս վարչատարածքային սահմաններում ներառված նախկին համայնքներում լուսավորության ոլորտին հատկացվող ծախսերը 2014-2018թթ /հազ դ<sup>58</sup>**



Լուսավորության ոլորտում ծախսեր կատարվել են Ստեփանավան և Կաթնաղբյուր համայնքներում: Դինամիկայում ոլորտին հատկացող ծախսերն աճել են, բացառություն է կազմում 2015թ-ը, երբ Կաթնաղբյուր համայնքում իրականացվել են կապիտալ բնույթի ծախսեր, այն կազմել է Կաթնաղբյուր համայնքի բյուջեի 43,5%-ը:

Համաձայն Ստեփանավան համայնքի 2018թ-ի ՏԱՊ-ի նախատեսվում է Ստեփանավան և Կաթնաղբյուր բնակավայրերում լուսավորության ցանցի սպասարկում իրականացնել, իսկ Ուրասար բնակավայրում լուսավորության ցանց կառուցել: Մարզպետարանի կայքում տեղադրված տարեկան աշխատանքային պլանն ուսումնասիրելիս անհամապատասխանություն ենք նկատում ֆինանսական ցուցանիշների մասով: Համաձայն Ստեփանավան համայնքի բյուջեի և նախնական պլանավորված<sup>59</sup>, և

<sup>58</sup> Տարածքային կառավարման և նախարարության կայքում տեղադրված համայնքների տարեկան բյուջեների հաշվետվություններ <http://mtad.am/hy/budgetary-expenditure/>

<sup>59</sup> <http://lori.mtad.am/files/docs/30738.pdf> էջ 10

հետագայում ճշգրտված բյուջետային ցուցանիշների ոլորտային ծախսերը պլանավորվել են 12,6 մլն ՀՀ դրամ, սակայն համաձայն SUՊ-ում ներկայացված ֆինանսական ցուցանիշների ոլորտային ծախսերի համար համայնքային բյուջեից նախատեսված է 5 մլն ՀՀ դրամ, իսկ պետական բյուջեից 10,2 մլն ՀՀ դրամ՝ ընդհանուր 15,2 մլն ՀՀ դրամ:<sup>60</sup> Նշենք, որ SUՊ-ը կազմվել է 2018թ-ի ապրիլի 13-ին, երբ համայնքային բյուջեն արդեն պլանավորված է եղել: Ստացվում է, որ համայնքային իշխանությունը նախատեսել է պետական բյուջեից ստանալ ֆինանսավորումը, և տնտեսել իր գումարները, սակայն հոկտեմբեր ամսին ճշգրտված տվյալներով համայնքային բյուջեում ցուցանիշները դեռ չեն նվազել:

**Աղյուսակ 18.Ստեփանավան խոշորացված և վերջինիս վարչատարածքային սահմաններում ներառված նախկին համայնքներում լուսավորության ոլորտին 2014-2017թթ հատկացված և 2018թ-ին պլանավորված ծախսերը ըստ վարչական և ֆոնդային մասերի <sup>61</sup>**


		Ստեփանավան	Կաթնաղբյուր	Ուրասար
2014	Վարչ. %	100	0	0
	Ֆոնդ. %	0	0	0
	Ընդ/հազ դ	8074,3	0	0
2015	Վարչ. %	100	0	0
	Ֆոնդ. %	0	100	0
	Ընդ/հազ դ	8689,5	3795	0
2016	Վարչ. %	100	0	0
	Ֆոնդ. %	0	0	0
	Ընդ/հազ դ	8730	0	0
2017	Վարչ. %	8	-	-
	Ֆոնդ. %	92	-	-
	Ընդ/հազ դ	11911,2	-	-
2018	Վարչ. %	10,7	-	-
	Ֆոնդ. %	89,3	-	-
	Ընդ/հազ դ	16763	-	-

Լուսավորության ոլորտի ծախսերը մինչ խոշորացումը հիմնականում եղել են ընթացիկ բնույթի՝ էլեկտրաէներգիայի ձեռքբերում: Կաթնաղբյուրում 2015 թ-ին եղել է կապիտալ բնույթի ծախս, որի բնույթը պարզված չէ մեր կողմից: Ոլորտում հաջորդ տարում վարչական ծախս չի նախատեսվել, ինչն էլ խնդիր է առաջացնում հաջորդ տարին կատարված ծախսի արդարացվածության մասով:

<sup>60</sup> <http://lori.mtad.am/files/docs/32982.pdf> էջ 27

<sup>61</sup> Աղյուսակում ներկայացված ցուցանիշները հաշվվել են հեղինակի կողմից

**Գծապատկեր 40. Ստեփանավան խոշորացված և վերջինիս վարչատարածքային սահմաններում ներառված նախկին համայնքներում լուսավորության ոլորտին հատկացվող ծախսերը մեկ բնակչի հաշվով 2014-2017թթ կատարված և 2018թ պլանավորված ցուցանիշներ/ հազ դ <sup>62</sup>**



Դինամիկայում մեկ բնակչի հաշվով ծախսը աճել է /բացառությամբ 2015թ Կաթնաղբյուր բնակավայրի ցուցանիշի/: Իհարկե այստեղ ևս կարևոր է մեջբերել, որ Կաթնաղբյուր և Ուրասար համայնքներում բնակչության թիվը փոքր է, և միավորման արդյունքում միջինացված ցուցանիշը էական փոփոխություն չի կարող ունենալ: Հուշող գործիք է ՏԱՊ-ը, որտեղ ներկայացված աշխատանքները ոգևորիչ չեն: Ծրագրում հատուկ ընդգծված են Կաթնաղբյուր և Ուրասար համայնքներում առկա խնդիրների ֆինանսավորման բացակայության մասին, որը գնահատվել է 5 մլն ՀՀ դրամ:<sup>63</sup> Սա նշանակալու է որ մեկ ընդհանուր համայնք մոտեցումը չի կիրառվում:

**Թումանյան համայնք**


Թումանյան համայնքը վերաձևավորվել է 2015 թվականի նոյեմբերի 24-ին ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունված «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին Հայաստանի Հանրապետության օրենքում և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի համաձայն իր մեջ ներառելով նախկին Թումանյան, Աթան, Ահնիձոր, Լորուտ, Մարց, Շամուտ, Քարինջ համայնքները: Միավորվելուց հետո ընդհանուր բնակչությունը կազմել է 4621 մարդ, իսկ տարածքը 30,8 քառ կմ:<sup>64</sup> Նոր ձևավորված համայնքում ընդհանուր բյուջեն սկսել է դինամիկ աճել: Գծապատկեր 49-ում ներկայացված է միավորված համայնքների բյուջեները մինչ խոշորացվելը և խոշորացվելուց հետո:

